

Ղատական Գործ N: ԳԴ5/0038/01/10

Երբ է գործը ստացվել:	27-12-2010
Քրեական գործի համարը:	ԳԴ5/0038/01/10
Ինչ կարգով է գործը ստացվել:	Առաջին անգամ
Գործը որտեղից է ստացվել:	
Ղատակագրություն:	<< Գլխավոր ղատակագրություն
Նախաքննական գործի համարը:	50101610
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	<p>Կարեն Վարդգեսի Ղատաբողյանը 2005թ.մինչև2008թ.օգոստոս ամիսը աշխատելով <<ՎՏԲ Հայաստան Բանկ>>ՓԲԸ -ի Սևանի մասնաճյուղում որպես ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ, վարկային պատասխանատու, մտադրություն է ունեցել բանկի մասնաճյուղից գումարներ հափշտակելու: Այդ նպատակով նա հանցավոր համաձայնության գալով բանկի կառավարիչ Արսեն Առաքելյանի հետ, իսկ այնուհետև հանցավոր համաձայնության մեջ մտնելով կենցաղային տեխնիկայի առքուվաճառքով զբաղվող „Աստղիկ,, ՍՊԸ -ն տնօրեն Ռոզա Խաչատրյանի և նշված ՍՊԸ-ն աշխատակից Արթուր Մերուժանի Թովմասյանի, Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի բնակիչ Բենիկ Ստեփանյանի հետ, վարկերի տրամադրման գործընթացում չպահպանելով գործող կանոնակարգերը, այն է՝ չկատարելով <<Հայխնայբանկ>>ՓԲԸ համակարգում՝ ապրանքների/կենցաղային և համակարգչային տեխնիկա, կահույք այլ ապրանքներ/ծեռք բերելու համար վարկերի տրամադրման ընթացակարգով սահմանված կանոնները, չհավաքելով վարկային գործի կազմման համար անհրաժեշտ փաստաթղթերը, առանց կառավարչի կողմից կայացրած համապատասխան որոշման՝ վճարումնակության վերլուծության հավելվածի համապատասխան մասում կատարած վիզավորման, վարկային և կոշտ գրավ պայմանագրերի, պայմանագրերից ծագող գրավի իրավունքի պետական գրանցման, առանց վարկային պատասխանատուի և կառավարիչի ստորագրության <<կարգադրություն հաշվապահությանը>>, ինչպես նաև չկատարելով <<Հայխնայբանկ>>ՓԲԸ համակարգում ֆիզիկական անձանց այլ գրավի ապահովվածության վարկերի տրամադրման ընթացակարգով սահմանված կանոնները, չհավաքելով վարկային գործի կազմման համար անհրաժեշտ փաստաթղթեր, առանց կոշտ գրավի պետական գրանցման, վարկային պատասխանատուի և տարածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից ստորագրված <<կարգադրություն հաշվապահությանը>> և չկատարելով <<Հայխնայբանկ>>ՓԲԸ համակարգում <<գյուղատնտեսական վարկերի տրամադրման>> կանոնակարգի պահանջները, չհավաքելով վարկային գործերի կազմման համար անհրաժեշտ փաստաթղթերը, առանց վարկային և գրավի պայմանագրերի, <<վարկային կոմիտեի>> կողմից կայացված որոշման և առանց <<կարգադրություն հաշվապահությանը>>, որոնց բացակայության պայմաններում վարկերի բաց թողումը անթույլատրելի է եղել: 2007թ. մինչև 2008թ. ընկած ժամանակահատվածում տարբեր անձանց անուններով կազմված կեղծ վարկային գործերով, առանց վարկային գործեր կազմելու, ինչպես նաև վարկերի մարման համար վճարված գումարներից ստացել և յուրացրել է բանկին պատկանող 44.215.000<< դրամ գումարները:</p>

	<p>Կարեն Ղասաբօղլյանը կեղծ վարկեր է ձևակերպել՝ Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղի բնակիչ Արտակ Գրիշայի Թորոսյանի անվամբ 25.12.2007թ թիվ 248 կենցաղային տեխնիկայի ձեռք բերման վարկային գործը՝ 680.000դրամ վարկային գումարով, Սևան քաղաքի բնակիչ Պավել Յուրիկի Գաբրիելյանի անվամբ 11.02.2008թ թիվ 253 կենցաղային տեխնիկայի ձեռք բերման վարկային գործ՝ 680.000դրամ վարկային գումարով, մտացածին անձ ժամենա/Էվելինա/Կյուդվիզի Ալեքսանյանի անվամբ 28.06.2008թ.կենցաղային տեխնիկայի ձեռք բերման թիվ 308 վարկային գործը 600.000ՀՀ դրամ վարկային գումարով, Սևան քաղաքի բնակիչ Յուրի Կառլենի Հովհաննիսյանի արվամբ 08-07-2008թ.կենցաղային տեխնիկայի ձեռք բերման թիվ 312 վարկային գործը 480.000ՀՀ դրամ վարկային գումարով, Սևան քաղաքի բնակիչ Կարեն Նավասարդյանի անվամբ 26-11-2007թ.թիվ 234 կենցաղային տեխնիկայի ձեռք բերման վարկային գործը 680.000ՀՀ դրամ վարկային գումարով և նշված վարկային գործերով 3.570.000դրամ ընդհանուր գումարը Ռ.Խաչատրյանի և Արթուր Թովմասյանի հետ նախնական համաձայնության գալով փոխանցել է ,ՎՏԲ Հայաստան Բանկ,, ՓԲԸ Սևան մասնաճյուղի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտվող, կենցաղային տեխնիկայի կաճառքով զբաղվող ,Աստղիկ,, ՍՊԸ հաշվեհամարին: Իր քրոջ՝ Կարինե Ղասաբօղլյանի անվամբ 21.01.2008 թվականին ձևակերպել է կենցաղային տեխնիկայի ձեռք բերման համար թիվ 253 կեղծ վարկային գործը՝ 480.000դրամ վարկային գումարով, մոր՝ Էլմիրա Վարդանյանի անվամբ 12-04-2008թ. ձևակերպել է կենցաղային տեխնիկայի ձեռք բերման համար թիվ 280 կեղծ վարկային գործը՝ 320.000ՀՀ դրամ վարկային գումարով, Էվելինա Ալեքսանյանի անվամբ՝ թիվ 283 կեղծ վարկային գործը՝ 240.000ՀՀ դրամ վարկային գումարով և պայմանագրերում առկա 1.040.000 ՀՀ դրամի տեխնիկան ստացել կենցաղային տեխնիկայի առքուվաճառքով զբաղվող <<Գետուկ>> ՍՊԸ-ից:</p> <p>Կարեն Ղասաբօղլյանը՝ անձամբ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ յուրացրել է առանձնապես խոշոր չափերի գումարներ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ օրինականացրել է առանձնապես խոշոր չափերի եկամուտներ, խաբեությամբ կրկին անգամ հափշտակել է խոշոր չափերի գումարներ:</p>
<p>Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:</p>	<p>Արսեն Նուրիջանի Առաքելյանը 2005թ մինչև 2008թ. օգոստոս ամիսը աշխատելով <<ՎՏԲ Հայաստան Բանկ>> ՓԲԸ -ի Սևանի մասնաճյուղի դեռևս <<Հայխնայբանկի>> վարչության կողմից 25-08-2000թ. հաստատված <<Հայխնայբանկի վարչության 02-07-2000թ թիվ 35 որոշմամբ հաստատված մասնաճյուղի վարչակազմակերպական կառուցվածքի ձև 3 /Հայխնայբանկի Եղեգնաձորի, Իջևանի, Ստեփանավանի, Սևանի մասնաճյուղի/>> մասնաճյուղի ստորաբաժանումների և առանձին հաստիքների գործառույթների կանոնակարգի համաձայն հանդիսանալով բանկի մասնաճյուղի կառավարիչ, ղեկավարել է ակտիվայի գործառույթների խումբը, որում ընդգրկված է եղել բանկի տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբօղլյանը և վարկերի տրամադրման գործընթացում չպահպանելով գործող կանոնակարգերը, այն է՝ չկատարելով <<Հայխնայբանկ>> փրբը համակարգում՝ ապրանքների/կենցաղային և համակարգչային տեխնիկա, կահույք այլ ապրանքներ:</p> <p>Արսեն Առաքելյանը կատարել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ և անձամբ առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի եկամուտներ օրինականացնելու , առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու հանցանքներ:</p>
<p>Մեղադրական եզրակացության</p>	<p>Արթուր Մերուժանի Թովմասյանը աշխատելով << ԱՆ դատական</p>

<p>համառոտ բովանդակություն:</p>	<p>ակտերի հարկադիր կատարման ծառայության Գեղարքունիքի ստորաբաժանումում, համատեղության կարգով մինչև 2009թ. մայիս ամիսը աշխատել է որպես կենցաղային տեխնիկայի առքուվաճառքով զբաղվող <<Աստղիկ>> ՍՊԸ-ում որպես վաճառող և հանցավոր համաձայնության մեջ մտնելով <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ Սևանի մասնաճյուղի հետ կենցաղային տեխնիկայի ապառիկ վաճառք իրականացնելու համար պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելով <<Աստղիկ>> ՍՊԸ տնօրեն Ռոզա Խաչատրյանի և <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ Սևան մասնաճյուղի ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբոլյանի հետ, տարբեր անձանց անուններով կազմված կեղծ վարկային գործերով հափշտակել են բանկին պատկանող 7.250.000 ՀՀ դրամ գումար:</p>
<p>Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:</p>	<p>Վիկտորիա Գառնիկի Ասատրյանը 1987թ մինչև 2008թ. օգոստոս ամիսը աշխատելով << Հայխնայբանկ>> ՓԲԸ -ի Սևանի մասնաճյուղում , որը 2005թ. վերանվանվել է <<ՎՏԲ Հայաստան Բանկ>> ՓԲԸ, իսկ 2006թ. հանդիսացել է որպես մատակարարման բաժնի ավագ մասնագետ՝ գանձապահ և նրան ամրացված է եղել 7 համարի դրոշմակնիքը: Իր աշխատանքային պարտականությունները կատարելու ժամանակ Վիկտորյա Ասատրյանը չպահպանելով ՀՀ-ում գործող օրենքների և բանկում գործող կանոնակարգերի պահանջները, անձնական շահագրգռվածությունից ելնելով օժանդակել է նույն բանկի կառավարիչ Արսեն Առաքելյանին և բանկի տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբոլյանին 2007-2008թ. թառանց վարկային գործ կազմելու կամ կեղծ վարկային գործերով հափշտակելու բանկին պատկանող գումարները:</p>
<p>Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:</p>	<p>Արա Ռաֆիկի Մկրտչյանը 2005թ մինչև 2009թ. հունիս ամիսը աշխատելով <<ՎՏԲ Հայաստան Բանկ>> ՓԲԸ -ի Սևանի մասնաճյուղում , մինչև 2008թ. օգոստոս ամիսը՝ որպես սպասարկման բաժնի ավագ մասնագետ՝ գանձապահ, իսկ հետագայում որպես մասնաճյուղի կառավարիչ տեղակալ: Որպես ավագ մասնագետ՝ գանձապահ աշխատելու ժամանակ օգտագործել է գանձապահներին ամրացված 129 համարի դրոշմակնիքը և իր աշխատանքային պարտականությունները կատարելու ժամանակ Արա Մկրտչյանը չպահպանելով ՀՀ-ում գործող օրենքների և բանկում գործող կանոնակարգերի պահանջները, անձնական շահագրգռվածությունից ելնելով օժանդակել է նույն բանկի կառավարիչ Արսեն Առաքելյանին և բանկի տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբոլյանին 2007-2008թ. թ. առանց վարկային գործ կազմելու կամ կեղծ վարկային գործերով հափշտակելու բանկին պատկանող գումարները:</p>
<p>Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:</p>	<p>Սահականուշ Հայրիկի Ասատրյանը .1978թ. աշխատել է <<Հայխնայբանկի>> համակարգում, իսկ 2005թ բանկի վերանվանումից հետո աշխատել է <<ՎՏԲ Հայաստան Բանկ>> ՓԲԸ -ի Սևանի մասնաճյուղում որպես սպասարկման բաժնի վարիչ: Նշված պաշտոնի գործառնությունների կատարման համար նրան ամրացված է եղել թիվ 122 համարի դրոշմակնիքը: Գործարքներ կատարելու ժամանակ օրենսդիր և բանկում գործող կանոնակարգերը չպահպանելով, անձնական շահագրգռվածությունից ելնելով օժանդակել է նույն բանկի կառավարիչ Արսեն Առաքելյանին և բանկի տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբոլյանին 2007-2008թ. թ. առանց վարկային գործեր կազմելու, առանց վարկային պայմանագրեր կնքելու կամ կեղծ վարկային գործերով հափշտակելու բանկին պատկանող գումարները:</p>
<p>Մեղադրական եզրակացության</p>	<p>Նարինե Ազատի Նավասարդյանը 1985թ. աշխատել է</p>

<p>համառոտ բովանդակություն:</p>	<p><<Հայխնայբանկի>>Սևանի մասնաձյուղում, որպես ադմինիստատոր, իսկ 2003թ որպես գլխավոր հաշվապահ , այնուհետև բանկի վերանվանումից հետո նույնպես գլխավոր հաշվապահ և պատասխանատվություն կրելով բանկի կողմից կատարվող գործառնությունների և բանկի ֆինանսական միջոցների օրինական օգտագործման վերաբերյալ, անձնական շահագրգռվածությունից ելնելով օժանդակել է նույն բանկի կառավարիչ Արսեն Առաքելյանին և բանկի ակտիվային գործառնությունների խմբի մեջ ընդգրկված տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբօղյանին , առանց վարկային գործեր կազմելու, կեղծ վարկային գործեր կազմելով, ինչպես նաև առանց վարկային պայմանագրեր կազմելու, վարկային գումարներ տարբեր անձանց, ինչպես նաև Կարեն Ղասաբօղյանի և նրա հարազատների անուններով 42.840.000 ՀՀ դրամ գումար ստանալուն և յուրացնելուն:</p>		
<p>Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:</p>	<p>Պապ Թելմանի Մանուկյանը մտադրություն ունենալով ,,ՎՏԲ Հայաստաբ Բանկ,, ՁԲԸ Սևանի մասնաձյուղից վարկ ստանալու, բայց իր անունով չկարողանալով ձևակերպել վարկը, իր հարևան Ալինա Աղվանի Սարգսյանից խնդրել է վերջինիս անձնագիրը և առանց նրա համաձայնության Ալինա Սարգսյանի անունով 2008թ. հունիսի 3-ին ձևակերպել է կենցաղային տեխնիկայի ձեռք բերման վարկ 600.000 ՀՀ դրամ գումարով, սակայն կենցաղային տեխնիկա չի ստացել, այլ առևտրային կազմակերպության ծառայող հանդիսացող ,,ՎՏԲ Հայաստան Բանկ,, ՓԲԸ-ի Սևանի մասնաձյուղի կառավարիչ Արսեն Առաքելյանի կողմից իր կարգադրիչ և այլ լիազորությունները չարաշահելու հետևանքով վերջինիս կողմից կողմից Պապ Թելմանի Մանուկյանին է տրամադրել 600.000 ՀՀ դրամ, որը վերջինս ստացել է , և վարկի մարման ուղղությամբ չկատարելով որևէ մոծումներ՝ յուրացրել է ստացած գումարը:</p>		
<p>Մեղադրյալ</p>			
<p>Անձ</p>			
<p>Անուն</p>	<p>Կարեն</p>		
<p>Ազգանուն</p>	<p>Ղասաբօղյան</p>		
<p>Հասցե</p>	<p>ք.Սևան, Խաղաղության 10/27, ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>>ՔԿՀ</p>		
<p>Հոդված_1</p>			
<p>Հոդված</p>	<p>178</p>	<p>Մաս 2</p>	<p>Կետ 2</p>
<p>Հոդված_1</p>			
<p>Հոդված</p>	<p>178</p>	<p>Մաս 2</p>	<p>Կետ 2</p>
<p>Հոդված_1</p>			
<p>Հոդված</p>	<p>179</p>	<p>Մաս 2</p>	<p>Կետ 2</p>
<p>Հոդված_1</p>			
<p>Հոդված</p>	<p>190</p>	<p>Մաս 3</p>	<p>Կետ 1</p>
<p>Ղատվածություն:</p>			
<p>Պաշտպան</p>			
<p>Անուն</p>	<p>Կարեն</p>		
<p>Ազգանուն</p>	<p>Մանուչարյան</p>		
<p>Հասցե</p>	<p>ք.Երևան, Կոռյունի 8, բն.5</p>		
<p>Մեղադրյալ</p>			
<p>Անձ</p>			
<p>Անուն</p>	<p>Արսեն</p>		
<p>Ազգանուն</p>	<p>Առաքելյան</p>		
<p>Հասցե</p>	<p>ք.Սևան, Սայաթ-Նովայի 19/29</p>		
<p>Հոդված_1</p>			

	Հոդված	179	Մաս 3	Կետ 1
Հոդված_1				
	Հոդված	190	Մաս 3	Կետ 1
Հոդված_1				
	Հոդված	214	Մաս 1	
Դատվածություն:				
Պաշտպան				
	Անուն	Լևոն		
	Ազգանուն	Թորոսյան		
	Հասցե	ք.Սևան		
Մեղադրյալ				
Անձ				
	Անուն	Արթուր		
	Ազգանուն	Թովմայան		
	Հասցե	ք.Սևան,Խորհրդային փողոց,տուն 13		
Հոդված_1				
	Հոդված	178	Մաս 2	Կետ 2
Հոդված_1				
	Հոդված	178	Մաս 2	Կետ 2
Հոդված_1				
	Հոդված	178	Մաս 2	Կետ 3
Հոդված_1				
	Հոդված	179	Մաս 3	Կետ 1
Հոդված_1				
	Հոդված	190	Մաս 2	Կետ 2
Դատվածություն:				
Պաշտպան				
	Անուն			
	Ազգանուն			
	Հասցե			
Մեղադրյալ				
Անձ				
	Անուն	Վիկտորյա		
	Ազգանուն	Ասատրյան		
	Հասցե	ՀՀ Գեղարքունիքի մարզ,գ.Ջովաբեր		
Հոդված_1				
	Հոդված	38-179	Մաս 3	Կետ 1
Դատվածություն:				
Պաշտպան				
	Անուն			
	Ազգանուն			
	Հասցե			
Մեղադրյալ				
Անձ				
	Անուն	Արա		

	Ազգանուն	Մկրտչյան		
	Հասցե	ք.Սևան, Գործարանային 2/35		
Հոդված_1				
	Հոդված	179	Մաս 1	
Հոդված_1				
	Հոդված	38-179	Մաս 3	Կետ 1
	Ղատկածություն:			
Պաշտպան				
	Անուն			
	Ազգանուն			
	Հասցե			
Մեղադրյալ				
Անձ				
	Անուն	Սահականույշ		
	Ազգանուն	Ասատրյան		
	Հասցե	ք.Սևան, Նալբանդյան25/1		
Հոդված_1				
	Հոդված	38-179	Մաս 3	Կետ 1
	Ղատկածություն:			
Պաշտպան				
	Անուն			
	Ազգանուն			
	Հասցե			
Մեղադրյալ				
Անձ				
	Անուն	Նարինե		
	Ազգանուն	Նավասարդյան		
	Հասցե	ք.Սևան, Գեղամա 22		
Հոդված_1				
	Հոդված	38-179	Մաս 3	Կետ 1
	Ղատկածություն:			
Պաշտպան				
	Անուն	Մամիկոն		
	Ազգանուն	Թորոսյան		
	Հասցե	ք.Երևան		
Մեղադրյալ				
Անձ				
	Անուն	Պապ		
	Ազգանուն	Մանուկյան		
	Հասցե	ք.Սևան, Նաիրյան 139/39		
Հոդված_1				
	Հոդված	179	Մաս 2	Կետ 3
	Ղատկածություն:			
Պաշտպան				
	Անուն	Վահան		

Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր:	Տուժողի իրավահաջորդ
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր:	Պաշտպան
Դատավարության կողմեր	
Անուն	Կարեն
Ազգանուն	Ղասաբոլյան
Հասցե	Գտնվում է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն»ՔԿՀ-ում
Սեռ	Արական
Դատավարության կողմեր	
Անուն	Արսեն
Ազգանուն	Առաքելյան
Հասցե	ք. Սևան, Սայաթ-Նովա 19/25, Գտնվում է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն»ՔԿՀ-ում
Սեռ	Արական
Դատավարության կողմեր	
Անուն	Արթուր
Ազգանուն	Թովմասյան
Հասցե	ք. Սևան, Խորհրդային տուն 1 3
Սեռ	Արական
Դատավարության կողմեր	
Անուն	Վիկտորիա
Ազգանուն	Ասատրյան
Հասցե	ք. Սևան, Խաղաղության 16/6
Սեռ	Իգական
Դատավարության կողմեր	
Անուն	Արա
Ազգանուն	Մկրտչյան
Հասցե	ք. Սևան, Գործարանային 2/35
Սեռ	Արական
Դատավարության կողմեր	
Անուն	Սահականույշ
Ազգանուն	Ասատրյան
Հասցե	ք. Սևան, Նալբանդյան 25/1
Սեռ	Իգական
Դատավարության կողմեր	
Անուն	Նարինե
Ազգանուն	Նավասարդյան
Հասցե	ք. Սևան, Գեղամա 27

	Սեռ	Իգական
Դատավարության կողմեր		
	Անուն	Պապ
	Ազգանուն	Մանուկյան
	Հասցե	ք. Սևան, նաիրյան 139/39
	Սեռ	Արական
Դատավարության կողմեր		
	Անուն	Վալիկո
	Ազգանուն	Գևորգյան
	Հասցե	Գեղարքունիքի մարզ, գ. գեղամավան
	Սեռ	Արական
Դատավարության կողմեր		
	Անուն	Արման
	Ազգանուն	Ղարիբյան
	Հասցե	ք. Սևան, Շահումյան 35/48
	Սեռ	Արական
Դատավարության կողմեր		
	Անուն	Արսեն
	Ազգանուն	Մանուկյան
	Հասցե	ք. Սևան, Նալբանդյան 55/8
	Սեռ	Արական
Դատավարության կողմեր		
	Անուն	Մանվել
	Ազգանուն	Կարապետյան
	Հասցե	ք. Սևան, խաղաղության 12/20
	Սեռ	Արական
Դատավարության կողմեր		
	Անուն	Կամո
	Ազգանուն	Պետրոսյան
	Հասցե	Կոտայքո մարզ գ. Ողջաբերդ
	Սեռ	Արական
Դատավարության կողմեր		
	Անուն	Մամիկոն
	Ազգանուն	Թորոսյան
	Հասցե	ք. Երևան, Հ. Հակոբյան, 2բն. 47
	Սեռ	Արական
Դատավարության կողմեր		
	Անուն	Կարեն
	Ազգանուն	Մանուչարյան
	Հասցե	ք. Երևան, Կորյունի 8 բն. 5
	Սեռ	Արական
Դատավարության կողմեր		
	Անուն	Վահան
	Ազգանուն	Հայրապետյան
	Հասցե	ք. Երևան 14 Ն.Սուրենյանց 2 շ. բն. 33

Սեռ	Արական
Դատավարության կողմեր	
Անուն	Լևոն
Ազգանուն	Թորոսյան
Հասցե	ք. Սևան
Սեռ	Արական
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Դատավարության կողմեր	
Անուն:	ՀՀ Գլխավոր դատախազություն
Հասցե:	ք. Երևան
Տիպ:	ԳԴ / ՀՀ գլխավոր դատախազություն եվ այլ դատախազություններ/
Նիստերի դահլիճի համարը:	Ճամբարակ 1
Երբ:	09-02-2011
Ժամ:	13:00
Նիստերի դահլիճի համարը:	Գավառ 1
Այլ նշումներ:	
Երբ:	23-02-2011
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևանի ոստիկանության վարչական շենք
Այլ նշումներ:	
Երբ:	10-03-2011
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևանի ոստիկանության վարչական շենք
Այլ նշումներ:	
Երբ:	17-03-2011
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևանի ոստիկանության վարչական շենք
Այլ նշումներ:	
Երբ:	31-03-2011
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևանի ոստիկանության վարչական շենք
Այլ նշումներ:	
Երբ:	14-04-2011
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևանի ոստիկանության վարչական շենք
Այլ նշումներ:	

Երբ:	28-04-2011
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևանի ոստիկանության վարչական շենք
Այլ նշումներ:	
Երբ:	13-05-2011
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Երբ:	18-05-2011
Ժամ:	14:30
Նիստերի դահլիճի համարը:	Ճամբարակ 1
Այլ նշումներ:	
Երբ:	31-05-2011
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Երբ:	09-06-2011
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Երբ:	22-06-2011
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Երբ:	23-06-2011
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Երբ:	07-07-2011
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	

	Երբ:	13-07-2011
	Ժամ:	14:30
	Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
	Այլ նշումներ:	
	Երբ:	14-07-2011
	Ժամ:	09:30
	Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
	Այլ նշումներ:	
	Երբ:	19-07-2011
	Ժամ:	16:00
	Նիստերի դահլիճի համարը:	Ճամբարակ 1
	Այլ նշումներ:	
	Երբ:	27-07-2011
	Ժամ:	14:00
	Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
	Այլ նշումներ:	
	Երբ:	28-07-2011
	Ժամ:	14:00
	Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
	Այլ նշումներ:	
	Երբ:	04-08-2011
	Ժամ:	15:00
	Նիստերի դահլիճի համարը:	Գավառ1
	Այլ նշումներ:	
	Երբ:	05-08-2011
	Ժամ:	09:30
	Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
	Այլ նշումներ:	
	Երբ:	09-08-2011
	Ժամ:	14:00
	Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
	Այլ նշումներ:	
	Երբ:	12-08-2011
	Ժամ:	10:00

Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Երբ:	19-08-2011
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Երբ:	23-08-2011
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Երբ:	13-09-2011
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Երբ:	22-09-2011
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Երբ:	04-10-2011
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Երբ:	11-10-2011
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համարը:	Սևան 1
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	11-10-2011
Այլ նշումներ:	
Մեղադրյալ	
Անուն	Կարեն
Ազգանուն	Ղասաբոլյան
Հասցե	գտնվում է ՀՀ ԱՆ «ՆՈւբարաշեն»ՔԿՀ-ում
Սեռ	Արական
Ամսաթիվ:	11-10-2011

Առավել ծանր հանցագործության հոդված			
Հոդված	190	Մաս 3	Կետ 1
Առավել ծանր հանցագործության հոդվածով:	Դատապարտվել է		
Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված	178	Մաս 2	Կետ 2
Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված	179	Մաս 3	Կետ 1
Այլ հանցագործության հոդվածներով:	Դատապարտվել է		
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում		
Լրացուցիչ պատիժ:			
Այլ պատժաչափեր:			
Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):			
Բռնագանձնված գույքի չափը:			
Մեղադրյալ			
Անուն	Արսեն		
Ազգանուն	Առաքելյան		
Հասցե	Գտնվում է ՀՀ ԱՆ «ՆՈւբարաշեն» ՔԿՀ-ում		
Ամսաթիվ:	11-10-2011		
Առավել ծանր հանցագործության հոդված			
Հոդված	214	Մաս 2	
Առավել ծանր հանցագործության հոդվածով:			
Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված	214	Մաս 1	
Այլ հանցագործության հոդվածներով:			
Հիմնական պատիժ:			
Լրացուցիչ պատիժ:			
Այլ պատժաչափեր:			
Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):			
Բռնագանձնված գույքի չափը:			
Մեղադրյալ			
Անուն	Աթուր		
Ազգանուն	Թովմասյան		
Հասցե	ք. Սևան, Խորհրդայնի 13		
Ամսաթիվ:	11-10-2011		
Առավել ծանր հանցագործության հոդված			
Հոդված	179	Մաս 3	
Առավել ծանր հանցագործության հոդվածով:			

Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված	190	Մաս 2	Կետ 1
Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված	178	Մաս 2	Կետ 2
Այլ հանցագործության հոդվածներով:			
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում		
Լրացուցիչ պատիժ:	Գույքի բռնագրավումը		
Այլ պատժաչափեր:			
Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):			
Բռնագանձնված գույքի չափը:	5416398		
Մեղադրյալ			
Անուն	Նարինե		
Ազգանուն	Նավասարդյան		
Հասցե	ք. Սևան		
Ամսաթիվ:	11-10-2011		
Առավել ծանր հանցագործության հոդված			
Հոդված	38-179	Մաս 2	Կետ 3
Առավել ծանր հանցագործության հոդվածով:			
Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված			
Այլ հանցագործության հոդվածներով:			
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում		
Լրացուցիչ պատիժ:			
Այլ պատժաչափեր:			
Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):	Նարինե Նավասարդյանի նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից		
Բռնագանձնված գույքի չափը:			
Մեղադրյալ			
Անուն	Սահականույշ		
Ազգանուն	Ասատրյան		
Հասցե	ք. Սևան, Նալբանդյան 25/2		
Ամսաթիվ:	11-10-2011		
Առավել ծանր հանցագործության հոդված			
Հոդված	38-179	Մաս 2	Կետ 3
Առավել ծանր հանցագործության հոդվածով:			
Այլ հանցագործության հոդվածներ			
Հոդված			
Այլ հանցագործության հոդվածներով:			

Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում
Լրացուցիչ պատիժ:	
Այլ պատժաչափեր:	
Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):	Սահականույշ Ասատրյանի նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից
Բռնագանձնված գույքի չափը:	

Մեղադրյալ

Անուն	Արա
Ազգանուն	Մկրտչյան
Հասցե	ք. Սևան, գործարանայնի 2/35
Ամսաթիվ:	11-10-2011

Առավել ծանր հանցագործության հոդված

Հոդված	38-179	Մաս 2	Կետ 3
--------	--------	-------	-------

Առավել ծանր հանցագործության հոդվածով:

Այլ հանցագործության հոդվածներ

Հոդված

Այլ հանցագործության հոդվածներով:

Հիմնական պատիժ: Որոշակի ժամկետով ազատազրկում

Լրացուցիչ պատիժ:

Այլ պատժաչափեր:

Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը): Արա Մկրտչյանի նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից

Բռնագանձնված գույքի չափը:

Մեղադրյալ

Անուն	Վիկտորի
Ազգանուն	Ասատրյան
Հասցե	ք. Սևան, Խաղաղության 16/6
Ամսաթիվ:	11-10-2011

Առավել ծանր հանցագործության հոդված

Հոդված	38-179	Մաս 2	Կետ 3
--------	--------	-------	-------

Առավել ծանր հանցագործության հոդվածով:

Այլ հանցագործության հոդվածներ

Հոդված

Այլ հանցագործության հոդվածներով:

Հիմնական պատիժ: Որոշակի ժամկետով ազատազրկում

Լրացուցիչ պատիժ:

Այլ պատժաչափեր:

Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը): Վիկտորիա Ասատրյանի նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի

	19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից		
Բռնագանձնված գույքի չափը:			
Մեղադրյալ			
	Անուն	Պապ	
	Ազգանուն	Մանուկյան	
	Հասցե	ք. Աշտարակ, Թաղևոսյան 3	
	Ամսաթիվ:	11-10-2011	
Առավել ծանր հանցագործության հոդված			
	Հոդված	178	Մաս 2 Կետ 2
Առավել ծանր հանցագործության հոդվածով:			
Այլ հանցագործության հոդվածներ			
	Հոդված		
Այլ հանցագործության հոդվածներով:			
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում		
Լրացուցիչ պատիժ:			
Այլ պատժաչափեր:			
Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):	Պապ Մանուկյանի նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից		
Բռնագանձնված գույքի չափը:			
Դատական ակտի բովանդակությունը:	<p>Գործ № ԳԴ5/0038/01/10</p> <p>Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ</p> <p>ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը՝</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎՈՐ Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ</p> <p>ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՄԲ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ</p> <p>Վ. ՂԱԶՈՅԱՆԻ</p> <p>Հ. ՍԱՐԳՍՅԱՆԻ</p> <p>Ջ. ԱԴԱՄՅԱՆԻ</p> <p>Լ. ՄԵԼԻՔՅԱՆԻ</p> <p>ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ</p> <p>ՄԵՂԱԴՐՈՂ Ա. ԱՄԻՐՉԱԴՅԱՆԻ</p> <p>ՏՈՒԺՈՂՆԵՐ Ա. ՂԱՐԻՔՅԱՆԻ</p> <p>Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ</p> <p>Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ</p> <p>ՏՈՒԺՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ</p>		

ՊԱՇՏՊԱՆՆԵՐ Ս. ԱՍԼԱՆՅԱՆԻ
Լ. ԹՈՐՈՍՅԱՆԻ
Օ. ՄԱՐԿՈՍՅԱՆԻ
Վ. ՆԻԿՈԼՅԱՆԻ
Վ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 11-ին Սևան քաղաքում

Դռնբաց դատական նիստում քննեց գործն ըստ մեղադրանքի Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանի, ծնված 1974 թվականի դեկտեմբերի 08-ին ՀՀ Պեղարքունիքի մարզի Սևան քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնալուծված, խնամքին մեկ անձ, դատված ՀՀ Պեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի հուլիսի 29-ի դատավճռով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 266-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 2.1-րդ կետով, 268-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 66-րդ հոդվածի 4-րդ մասի համակցությամբ՝ ազատազրկման 9 /ինը/ տարի ժամկետով, բնակվել է ՀՀ Պեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Խաղաղության փողոցի հա. 10 շենքի 27 բնակարանում, պատիժ է կրում ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկում, պատժի կրման սկիզբը՝ 2009 թվականի մարտի 13-ից: Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որպիսի մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում մասնակի:

Արսեն Նուռիջանի Առաքելյանի, ծնված 1961 թվականի ապրիլի 14-ին ՀՀ Պեղարքունիքի մարզի Սևան քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնալուծված, խնամքին ոչ ոք, դատված ՀՀ Պեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի հունվարի 19-ի դատավճռով, ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով, ազատազրկման 2 /երկու/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով, «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ՝ ազատվել է պատժի կրումից, բնակվել է ՀՀ Պեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Սայաթ Նովա փողոցի հա. 19 շենքի 29 բնակարանում, արգելանքի տակ է 2010 թվականի նոյեմբերի 09-ից: Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, որպիսի մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում մասնակի:

Արթուր Մերուժանի Թովմայանի, ծնված 1980 թվականի ապրիլի 05-ին ՀՀ Պեղարքունիքի մարզի Սևան քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնալուծված, խնամքին երկու անձ, չդատված, չի աշխատում, բնակվում է ՀՀ Պեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Խորհրդային փողոցի հա. 13 տանը, արգելանքի տակ չէ: Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, որպիսի մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում լիովին:

Նարինե Ազատի Նավասարդյանի, ծնված 1967 թվականի սեպտեմբերի 01-ին ՀՀ Պեղարքունիքի մարզի Սևան քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ - մասնագիտական կրթությամբ, ամուսնացած, խնամքին ոչ ոք, չի աշխատում, դատված ՀՀ Պեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի հունվարի 19-ի դատավճռով, ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով, ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով, «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային

Ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ՝ ազատվել է պատժի կրումից, բնակվում է ՀՀ Պետական իրավապաշտպանության քաղաքի Պետական փողոցի հա. 27 տանը, արգելանքի տակ չէ:
Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որպիսի մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում մասնակի:

Սահականույշ Հայրիկի Ասատրյանի, ծնված 1958 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ Պետական իրավապաշտպանության քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ - մասնագիտական կրթությամբ, ամուսնացած, խնամքին մեկ անձ, չի աշխատում, դատված ՀՀ Պետական իրավապաշտպանության դատարանի 2010 թվականի հունվարի 19-ի դատավճռով, ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով, ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով, «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ՝ ազատվել է պատժի կրումից, բնակվում է ՀՀ Պետական իրավապաշտպանության քաղաքի Նալբանդյան փողոցի հա. 25 շենքի 2 բնակարանում, արգելանքի տակ չէ
Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որպիսի մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում մասնակի:

Արա Ռաֆիկի Մկրտչյանի, ծնված 1976 թվականի մարտի 20-ին ՀՀ Պետական իրավապաշտպանության քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին երեք անձ, չի աշխատում, չդատված, բնակվում է ՀՀ Պետական իրավապաշտպանության քաղաքի Գործարանային փողոցի հա. 2 շենքի 35 բնակարանում, արգելանքի տակ չէ
Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որպիսի մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչում:

Վիկտորիա Գառնիկի Ասատրյանի, ծնված 1969 թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ Պետական իրավապաշտպանության քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ - մասնագիտական կրթությամբ, ամուսնացած, խնամքին մեկ անձ, չի աշխատում, չդատված, բնակվում է ՀՀ Պետական իրավապաշտպանության քաղաքի Խաղաղության փողոցի հա. 16 շենքի 6 բնակարանում, արգելանքի տակ չէ
Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որպիսի մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում մասնակի:

Պապ Թելմանի Մանուկյանի, ծնված 1970 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ Պետական իրավապաշտպանության քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ-մասնագիտական կրթությամբ, փաստացի ամուսնալուծված, խնամքին երեք անձ, չդատված, բնակվում է Աշտարակ քաղաքի Թաղևոսյան փողոցի հա. 3 տանը, արգելանքի տակ չէ
Մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, որպիսի մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչում:

1. Գործի դատավարական նախապատմությունը.
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի կառավարիչ Արսեն Նուրիջյանի Առաքելյանի, հաշվապահ Նարինե Ազատի Նավասարդյանի և տնտեսագետ Կարեն Վարդգեսի Դատաբողջանի կողմից 2007-2009 թվականներին իրենց լիազորություններն ընկերության շահերին հակառակ օգտագործելու՝ առանց պատշաճ կարգով վարկային գործեր կազմելու վարկեր տրամադրելու և այլ չարաշահումներ կատարելու փաստի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Պետական իրավապաշտպանության քաղաքի

մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում 2009 թվականի հունիսի 16-ին հարուցվել է թիվ 50104409 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2009 թվականի հունիսի 18-ի որոշմամբ թիվ 50104409 քրեական գործը միացվել է Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանի կողմից 0.62 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց ապօրինաբար ձեռք բերելու և պահելու փաստի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Քեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում 2009 թվականի մարտի 13-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված, թիվ 50102209 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է թիվ 50102209 համարի տակ:

ՀՀ Քեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի բնակիչ Սարգիս Ռաֆիկի Ոսկանյանը 2009 թվականի սեպտեմբերի 29-ին հաղորդում է տվել ոստիկանության Սևանի բաժնի այն մասին, որ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի աշխատակիցները 2007 թվականի հոկտեմբերի 23-ին, առանց իր գիտության, իր անվամբ ձևակերպել և ստացել են 1.000.000 ՀՀ դրամի վարկ: Հիշյալ փաստի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Քեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում 2009 թվականի հոկտեմբերի 02-ին հարուցվել է թիվ 50108409 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ թիվ 50102209 քրեական գործից անջատվել և թիվ 50108409 քրեական գործին է միացվել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի աշխատակիցներ Կարեն Ղասաբօղյանի, Արսեն Առաքելյանի և մյուսների վերաբերյալ մասը և դրանով նախաքննությունը շարունակվել է թիվ 50108409 համարի տակ:

Պապ Թելմանի Մանուկյանի կողմից Ալինա Աղվանի Սարգսյանի վստահությունը չարաշահելու եղանակով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում վերջինիս անվամբ 600.000 ՀՀ դրամի վարկ ձևակերպելու փաստի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Քեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում 2010 թվականի փետրվարի 03-ին հարուցվել է թիվ 50101210 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի նախկին աշխատակիցների կողմից իրենց լիազորությունները կազմակերպության շահերին հակառակ օգտագործելու և առանց Կարինե Վարդգեսի Ղասաբօղյանի գիտության նրա անվամբ 2008 թվականի հունվարի 21-ին 480.000 ՀՀ դրամ գումարի չափով կենցաղային նշանակության վարկային կեղծ պայմանագիր կազմելու, գումարը դուրս գրելու և յուրացնելու փաստի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Քեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում 2010 թվականի փետրվարի 17-ին հարուցվել է թիվ 50101610 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ, 214-րդ և 325-րդ հոդվածների 1-ին մասերի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2010 թվականի մարտի 11-ի որոշումներով վերոհիշյալ քրեական գործերը միացվել և նախաքննությունը շարունակվել է թիվ 50101610 համարի տակ: 2010 թվականի ապրիլի 29-ին քրեական գործը քննչական ենթակայության կարգով ուղարկվել է ՀՀ ԱԱԾ քննչական վարչություն, և վարչության պետի տեղակալ Ա. Տոնոյանի կողմից 2010 թվականի մայիսի 07-ին այն ընդունվել է վարույթ: 2010 թվականի հունիսի 25-ին Արթուր Մերուժանի Թովմասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և իրավունք վերապահող

վաստաթղթեր կեղծելու, օգտագործելու, ինչպես նաև վստահությունը չարաշահելով խոշոր չափերի գույք հափշտակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Մեղադրյալ Արթուր Մերուժանի Թովմայանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի օգոստոսի 26-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Արթուր Մերուժանի Թովմայանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան նոր ժավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցագործություններ կատարելու համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Արթուր Մերուժանի Թովմայանը ներգրավվել է որպես մեղադրյալ և վստահությունը չարաշահելով կրկին անգամ խոշոր չափերի գումար հափշտակելու, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ խոշոր չափերի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2010 թվականի օգոստոսի 27-ին Վիկտորիա Գառնիկի Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացման օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Մեղադրյալ Վիկտորիա Գառնիկի Ասատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի օգոստոսի 30-ին Սահականույշ Հայրիկի Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացման օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Մեղադրյալ Սահականույշ Հայրիկի Ասատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի սեպտեմբերի 08-ին Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու, անձամբ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի եկամուտներն օրինականացնելու, ինչպես նաև խաբեությամբ կրկին անգամ խոշոր չափերի գումարներ հափշտակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 08-ի որոշմամբ՝ մեղադրյալ Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանի նկատմամբ՝ որպես խափանման միջոց, ընտրվել է կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2010 թվականի սեպտեմբերի 09-ին Արա Ռաֆիկի Մկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և ուրիշի զգալի չափի գույքը յուրացնելու և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացման օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ

քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Մեղադրյալ Արա Ռաֆիկի Սկրտչյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի սեպտեմբերի 10-ին Նարինե Ազատի Նավասարդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Մեղադրյալ Նարինե Ազատի Նավասարդյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի հոկտեմբերի 07-ին Պապ Թելմանի Մանուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և խոշոր չափերի գումարներ յուրացնելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Մեղադրյալ Պապ Թելմանի Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի հոկտեմբերի 27-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Արա Ռաֆիկի Սկրտչյանին առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Արա Ռաֆիկի Սկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և ուրիշի զգալի չափի գույքը յուրացնելու և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի հոկտեմբերի 28-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Արթուր Մերուժանի Թովմասյանին առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցագործությունների կատարման համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Արթուր Մերուժանի Թովմասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և վստահությունը չարաշահելով կրկին անգամ խոշոր չափերի գումար հափշտակելու, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի՝ 7.250.000 ՀՀ դրամ գումար յուրացնելու և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ խոշոր չափերի՝ 7.250.000 ՀՀ դրամ, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2010 թվականի հոկտեմբերի 29-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Վիկտորիա Գառնիկի Ասատրյանին առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Վիկտորիա Գառնիկի Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի հոկտեմբերի 29-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել նաև Սահականույշ Հայրիկի Ասատրյանին

առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Սահականույշ Հայրիկի Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: 2010 թվականի նոյեմբերի 01-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Նարինե Ազատի Նավասարդյանին առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Նարինե Ազատի Նավասարդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի նոյեմբերի 03-ի որոշմամբ՝ մեղադրյալ Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամսով: 2010 թվականի նոյեմբերի 05-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանին առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու, անձամբ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի եկամուտներն օրինականացնելու, ինչպես նաև խաբեությամբ կրկին անգամ խոշոր չափերի գումարներ հափշտակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի նոյեմբերի 09-ին Արսեն Նուռիջանի Առաքելյանը ձերբակալվել է:

2010 թվականի նոյեմբերի 11-ին Արսեն Նուռիջանի Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի եկամուտներն օրինականացնելու, անձամբ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու, ինչպես նաև առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 214-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ՝ մեղադրյալ Արսեն Նուռիջանի Առաքելյանի նկատմամբ՝ որպես խափանման միջոց, ընտրվել է կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

Գույքի բռնագրավումն ապահովելու նպատակով՝ նախաքննության մարմնի կողմից 2010 թվականի նոյեմբերի 11-ին կալանք է դրվել Վիկտորիա Ասատրյանին համասեփականության իրավունքով պատկանող Սևան քաղաքի Խաղաղության փողոցի 16/6 հասցեում

գտնվող բնակարանի նրա բաժնեմասի, Արա Մկրտչյանին համասեփականության իրավունքով պատկանող Սևան քաղաքի Գործարանային փողոցի 2/35 հասցեում գտնվող բնակարանի նրա բաժնեմասի, Արթուր Թովմասյանին համասեփականության իրավունքով պատկանող Սևան քաղաքի Խաղաղության փողոցի 10/27 հասցեում գտնվող բնակարանի նրա բաժնեմասի, Արսեն Առաքելյանին համասեփականության իրավունքով պատկանող Սևան քաղաքի Սայաթ-Նովա փողոցի 19/25 հասցեում գտնվող բնակարանի նրա բաժնեմասի, Պապ Մանուկյանին համասեփականության իրավունքով պատկանող Գեղամավան համայնքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 7 միավոր հողամասերի /0.020 հա, 0.173 հա, 0.474 հա, 0.604 հա, 0.996 հա և 0.568 հա/ նրա բաժնեմասերի և Բենիկ Ստեփանյանին համասեփականության իրավունքով պատկանող Վարսեր գյուղում գտնվող առանձնատան, 0.120 հա տնամերձ հողամասի, 4 միավոր գյուղատնտեսական նշանակության հողամասերի /0.879 հա, 0.750 հա, 1.444 հա և 0.300 հա/ նրա բաժնեմասերի վրա՛

2010 թվականի նոյեմբերի 16-ին Բենիկ Օնիկի Ստեփանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի՝ 13.150.000 ՀՀ դրամ գումարներ յուրացնելու, խոշոր չափերի՝ 2.000.000 ՀՀ դրամ գումարներ յուրացնելու, ինչպես նաև մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ձանապարհով ստացված 3.065.170 ՀՀ դրամի եկամուտներն օրինականացնելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության մարմնի 2010 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ մեղադրյալ Բենիկ Օնիկի Ստեփանյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ՝ մեղադրյալ Բենիկ Օնիկի Ստեփանյանի նկատմամբ՝ որպես խափանման միջոց, ընտրվել է կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2010 թվականի նոյեմբերի 17-ին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության ներկայացուցչի կողմից հանցագործությամբ պատճառված վնասի՝ 68.895.171,1 ՀՀ դրամ գումարի բռնագանձման հայցադիմում է ներկայացվել քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Նախաքննության մարմնի 2010 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ Բենիկ Ստեփանյանի, Ռոզա Խաչատրյանի, Վարսեր գյուղի գյուղապետի տեղակալ Յուրիկ Հրաչիկի Մաթևոսյանի, աշխատակիցներ Լիլիթ Առաքելյանի, ինչպես նաև այլ անձանց կողմից կեղծ տեղեկանքներ տրամադրելու, Գայանե Մուշեղյանի անվամբ վարկը Վալիկո Գևորգյանի, իսկ Ա. Կալոնի անունով վարկը Ա. Խարգյանի կողմից ստանալու դեպքերով մասը թիվ 50101610 քրեական գործից անջատվել է:

2010 թվականի դեկտեմբերի 13-ին քրեական գործը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Գործի դատաքննության ընթացքում՝ 2011 թվականի հունիսի 09-ին, մեղադրողը, հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որոշումներ է ներկայացրել դատարան՝ Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանին և Արթուր Մերուժանի Թովմասյանին առաջադրված մեղադրանքները փոփոխելու, քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններին համապատասխանեցնելու և նոր մեղադրանքներ առաջադրելու մասին, որոնց համաձայն. Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանին 2010 թվականի նոյեմբերի 05-ին

առաջադրված մեղադրանքը փոփոխել, այն համապատասխանեցրել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված ՀՀ օրենքին և Կարեն Ղասաբօղյանին նոր մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Արթուր Մերուժանի Թովմայանին 2010 թվականի հոկտեմբերի 28-ին առաջադրված մեղադրանքը փոփոխել, այն համապատասխանեցրել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված ՀՀ օրենքին և Արթուր Թովմայանին նոր մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

Գործի դատաքննության ընթացքում՝ 2011 թվականի օգոստոսի 19-ին, մեղադրողը որոշում է ներկայացրել դատարան՝ Պապ Թելմանի Մանուկյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին, ըստ որի՝ Պապ Թելմանի Մանուկյանին 2010 թվականի հոկտեմբերի 07-ին առաջադրված մեղադրանքը փոխել և խոշոր չափերով խարդախություն կատարելու համար նրան նոր մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Ղատակյան վիճաբանությունների փուլում մեղադրողը, նկատի ունենալով, որ դատաքննությամբ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվել Արա Ռաֆիկի Սկրտչյանի կողմից «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի վարկառու Մուրադ Ղավթյանի հորից՝ Ղավթբեկ Երեմի Ղավթյանից 100.000 ՀՀ դրամ վերցրելու, այն համակարգիչ մուտքագրելու, համապատասխան վճարման անդորրագիր տրամադրելու, ապա նշված գործարքը համակարգիչից հեռացնելով՝ 100.000 դրամը յուրացրելու փաստը, հրաժարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով Արա Ռաֆիկի Սկրտչյանին առաջադրված մեղադրանքից:

Ղատակյան վիճաբանությունների փուլում մեղադրողը, նկատի ունենալով, որ դատաքննությամբ հետազոտված ապացույցներով չեն հիմնավորվել Արսեն Նուռիջանի Առաքելյանի կողմից Ալինա Սարգսյանի անվամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում ձևակերպված կենցաղային տեխնիկայի ձեռք բերման վարկի գումարը՝ 600.000 ՀՀ դրամը, առևտրային կազմակերպության ծառայողի իր կարգադրիչ և այլ լիազորությունները չարաշահելով՝ Պապ Թելմանի Մանուկյանին առձեռն հանձնելու, Ռուզան Ղարիբյանի անվամբ նույն մասնաճյուղում ձևակերպված հիփոթեքային վարկի գումարից 3.583.300 ՀՀ դրամը Ռուզան Ղարիբյանի փեսայից՝ Արտյոմ Ղավդյանից առձեռն վերցնելու, բանկի դրամարկղ չմուտքագրելու և ամբողջությամբ յուրացրելու, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի եկամուտներն օրինականացնելու փաստերը, հրաժարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով Արսեն Նուռիջանի Առաքելյանին առաջադրված մեղադրանքից, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքները վերավորակել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության ներկայացուցչը նկատի ունենալով մեղադրողի վերոհիշյալ դիրքորոշումը և աբստանյալ Պապ Թելմանի Մանուկյանի կողմից կատարված վարկի մասնակի մարումները՝ հստակեցրել է դատարան ներկայացված հայցապահանջը՝ խնդրելով ամբաստանյալներից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության բռնագանձել 66.903.192,7 ՀՀ դրամ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Ղատաքնությանը և գործով ձեռք բերված ապացույցներով դատարանը հաստատված համարեց հետևյալը.

Ամբաստանյալ Կարեն Ղասաբոլյանը 2005 թվականից մինչև 2008 թվականի օգոստոսն աշխատելով «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ և վարկային պատասխանատու՝ բանկի վարկառուների վստահությունը չարաշահելու եղանակով, Վալիկո Գևորգյանից հափշտակել է 1.000.000 ՀՀ դրամ, իսկ Արման Ղարիբյանից 500.000 ՀՀ դրամ:

Բացի այդ, Արտակ Թորոսյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի, Պավել Քաբրիելյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի, Ժամենա /Էվելինա/ Ալեքսանյանի անվամբ՝ 600.000 ՀՀ դրամի, Յուրի Հովհաննիսյանի անվամբ՝ 480.000 ՀՀ դրամի, Արման Պողոսյանի անվամբ՝ 450.000 ՀՀ դրամի և Կարեն Նավասարդյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի կեղծ վարկային պայմանագրեր կազմելով՝ ստացված 3.570.000 ՀՀ դրամը փոխանցել է կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող «Աստղիկ» ՍՊ ընկերության հաշվեհամարին, ապա ընկերության տնօրեն Ռոզա Խաչատրյանի և վաճառող Արթուր Թովմասյանի հետ նախնական համաձայնության գալով՝ փաստաթղթերով ցույց են տվել, որ վարկառուները «Աստղիկ» ՍՊ ընկերությունից ստացել են կենցաղային տեխնիկա, իսկ փոխանցված ու հափշտակված գումարները կանխիկացրել են:

Ղրանից բացի, իր քրոջ՝ Կարինե Ղասաբոլյանի անվամբ ձևակերպել է 480.000 ՀՀ դրամի, մոր՝ Էլմիրա Վարդանյանի անվամբ՝ 320.000 ՀՀ դրամի, Էվելինա Ալեքսանյանի անվամբ՝ 240.000 ՀՀ դրամի կեղծ վարկային պայմանագրեր և ստացված 1.040.000 ՀՀ դրամը փոխանցել է «Գետուկ» ՍՊ ընկերության հաշվեհամարին, իսկ վերցրած կենցաղային տեխնիկան տնօրինել է իր հայեցողությամբ:

Վերոհիշյալ 3.570.000 ՀՀ դրամի և 1.040.000 ՀՀ դրամի գումարի գույքի օրինականացման նպատակով, նշված վարկային գումարների մասով բանկ են մուտքագրել 2.044.068 ՀՀ դրամ, տոկոսագումարների մասով՝ 399.761,5 ՀՀ դրամ՝

օրինականացնելով հափշտակված ընդհանուր 4.610.000 ՀՀ դրամ գումարից և գույքից 2.443.829,5 ՀՀ դրամը:

Բացի այդ, կեղծ փաստաթղթեր օգտագործելով՝ կենցաղային տեխնիկայի ձեռք բերման վարկեր է ձևակերպել Հայկ Մնացականյանի անվամբ՝ 640.000 ՀՀ դրամի, Ալեքսանդր Իսակովի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի, Կարեն Առաքելյանի անվամբ՝ 480.000 ՀՀ դրամի, Մանուկ Թովմասյանի անվամբ՝ 600.000 ՀՀ դրամի, Ալեքսան Ղավթյանի անվամբ՝ 600.000 ՀՀ դրամի և Մխիթար Հովհաննիսյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի, որոնցից ստացված 3.680.000 ՀՀ դրամը Ռոզա Խաչատրյանի և Արթուր Թովմասյանի հետ նախնական համաձայնության գալով փոխանցել են կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող «Աստղիկ» ՍՊ ընկերության հաշվեհամարին, ապա փաստաթղթերով ցույց են տվել, որ վարկառուները «Աստղիկ» ՍՊ ընկերությունից ստացել են կենցաղային տեխնիկա, իսկ փոխանցված ու հափշտակված գումարները կանխիկացրել են:

Հետագայում մարելով հիշյալ վարկերը՝ օրինականացրել են հափշտակված 3.680.000 ՀՀ դրամը:

Ղրանից բացի, 2007 թվականի մայիսի 24-ից մինչև 2008 թվականի հուլիսի 30-ն ընկած ժամանակահատվածում, առանց համապատասխան վարկային գործեր կազմելու, ձևակերպել, համակարգիչ է մուտքագրել և յուրացրել 21.400.000 ՀՀ դրամի կեղծ վարկեր. Արման Պողոսյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամի, Արման Աղամալյանի անվամբ՝ 2.000.000 ՀՀ դրամի, Գարուշ Թորոսյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամի, Արսեն Սուքիասյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամի, Գուրգեն Առաքելյանի անվամբ՝ 1.900.000 ՀՀ դրամի, Նվեր Թովմասյանի անվամբ՝ 700.000 ՀՀ դրամի, Արթուր

Սարգսյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամի, մտացածին անձի՝
Գարուշ Կարիբյանի անվամբ՝ 1.500.000 ՀՀ դրամի, իր մոր՝ Էլմիրա
Վարդանյանի անվամբ՝ 1.800.000 ՀՀ դրամի, ինչպես նաև իր
անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամի, 1.800.000 ՀՀ դրամի և 2.000.000 ՀՀ
դրամի, իր մորաքրոջ որդու՝ Արման Ալեքսանյանի անվամբ՝
1.700.000 ՀՀ դրամի, 1.000.000 ՀՀ դրամի և 1.000.000 ՀՀ դրամի,
ինչպես նաև Սարգիս Ոսկանյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամի:
Բացի այդ, նախնական համաձայնության գալով ՀՀ Գեղարքունիքի
մարզի Վարսեր գյուղի բնակիչ Բենիկ Օնիկի Ստեփանյանի հետ,
առանց վարկային գործեր կազմելու կամ կեղծ վարկային գործերով,
ծնակերպել և յուրացրել են ընդհանուրը 13.150.000 ՀՀ դրամի
վարկեր. Բենիկ Ստեփանյանի անվամբ՝ 800.000 ՀՀ դրամի,
1.000.000 ՀՀ դրամի և 1.000.000 ՀՀ դրամի, Հերմինե
Համբարձումյանի անվամբ՝ 1.350.000 ՀՀ դրամի, Թամարա
Համբարձումյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամի և 1.000.000 ՀՀ
դրամի, Բենիկ Ստեփանյանի քրոջ՝ Քանաքարա Ստեփանյանի
անվամբ՝ 2.000.000 ՀՀ դրամի և 1.000.000 ՀՀ դրամի, Բենիկ
Ստեփանյանի հոր՝ Օնիկ Ստեփանյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ
դրամի և 1.000.000 ՀՀ դրամի, Էդուարդ Բարեղանյանի անվամբ՝
1.000.000 ՀՀ դրամի և Քնքուշ Մելքոնյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ
դրամի:

Վերոհիշյալ 21.400.000 ՀՀ դրամ վարկային գումարների մասով
բանկ է մուտքագրել 1.018.000 ՀՀ դրամ, տոկոսագումարների
մասով՝ 281.428,9 ՀՀ դրամ, իսկ Բենիկ Ստեփանյանի հետ
հանցավոր համաձայնության գալով, 13.150.000 ՀՀ դրամ վարկային
գումարների մասով մուտքագրել են 1.996.767,9 ՀՀ դրամ,
տոկոսագումարների մասով՝ 1.068.413,4 ՀՀ դրամ՝ հափշտակված
34.550.000 ՀՀ դրամ գումարից օրինականացնելով 4.364.610,2 ՀՀ
դրամ գումարը:

Բացի վերոնշյալից, վարկերի մարումներ կատարելու պատրվակով
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի
վարկառու Սարգիս Շահբազյանից վերցրել է 640.000 ՀՀ դրամ,
մուտքագրել համակարգիչ, տրամադրել համապատասխան
վճարման անդորրագիր, ապա նշված գործարքը հեռացնելով
համակարգիչից՝ մուտքագրել է 200.000 ՀՀ դրամ, իսկ մնացած
440.000 դրամը յուրացրել է: Նույն եղանակով յուրացրել է վարկառու
Արթուր Թովմայանից վերցրած 500.000 ՀՀ դրամից 380.000 ՀՀ
դրամը և Համբարձում Բեգլարյանից վերցրած 365.000 ՀՀ դրամը,
իսկ Մխիթար Հովհաննիսյանի վարկի գումարները փակելու
պատրվակով Արթուր Թովմայանից վերցրած 190.000 ՀՀ դրամը
մուտք չի արել դրամարկղ և դարձյալ յուրացրել է:

Ամբաստանյալ Արսեն Առաքելյանը 2005 թվականի մայիսից մինչև
2009 թվականի ապրիլն աշխատելով «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲ
ընկերության Սևանի մասնաճյուղի կառավարիչ և իր կարգադրիչ
լիազորությունները բանկի շահերին հակառակ, ինչպես նաև նույն
մասնաճյուղի ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ,
վարկային պատասխանատու Կարեն Ղասաբօղյանի օգտին
օգտագործելու արդյունքում՝ ծանր հետևանքներ է առաջացել «ՎՏԲ
Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության օրինական շահերին:

Ամբաստանյալ Արթուր Թովմայանն աշխատելով ՀՀ
արդարադատության նախարարության դատական ակտերի
հարկադիր կատարման ծառայության Գեղարքունիքի
ստորաբաժանումում՝ համատեղության կարգով մինչև 2009
թվականի մայիսն աշխատել է կենցաղային տեխնիկայի
առքուվաճառքով զբաղվող «Աստղիկ» ՍՊ ընկերության վաճառող,
որի ընթացքում, հանցավոր համաձայնության մեջ մտնելով «ՎՏԲ-
Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի
ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ, վարկային
պատասխանատու Կարեն Ղասաբօղյանի և «Աստղիկ» ՍՊ
ընկերության տնօրեն Ռոզա Խաչատրյանի հետ, պատրաստել է

կեղծ տեղեկանքներ, որոնք էլ օգտագործելով՝ կենցաղային տեխնիկայի ձեռք բերման վարկեր են ձևակերպել Հայկ Մնացականյանի անվամբ՝ 640.000 ՀՀ դրամի, Ալեքսանդր Իսակովի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի, Կարեն Առաքելյանի անվամբ՝ 480.000 ՀՀ դրամի, Մանուկ Թովմասյանի անվամբ՝ 600.000 ՀՀ դրամի, Ալեքսան Դավթյանի անվամբ՝ 600.000 ՀՀ դրամի և Մխիթար Հովհաննիսյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի, որոնցից ստացված 3.680.000 ՀՀ դրամը փոխանցել են կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող «Աստղիկ» ՍՊ ընկերության հաշվեհամարին, ապա փաստաթղթերով ցույց են տվել, որ վարկառուները «Աստղիկ» ՍՊ ընկերությունից ստացել են կենցաղային տեխնիկա, իսկ փոխանցված ու հափշտակված գումարները կանխիկացրել են: Հետագայում մարելով հիշյալ վարկերը՝ օրինականացրել են հափշտակված 3.680.000 ՀՀ դրամը:

Բացի այդ, նախնական համաձայնության գալով Ռոզա Խաչատրյանի և Կարեն Ղասաբողյանի հետ, վերջինս կողմից Արտակ Թորոսյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի, Պավել Գաբրիելյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի, Ժամսենա /Էվելինա/ Ալեքսանյանի անվամբ՝ 600.000 ՀՀ դրամի, Յուրի Հովհաննիսյանի անվամբ՝ 480.000 ՀՀ դրամի, Արման Պողոսյանի անվամբ՝ 450.000 ՀՀ դրամի, Կարեն Նավասարդյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի կեղծ վարկային պայմանագրեր կազմելով՝ ստացված 3.570.000 ՀՀ դրամը փոխանցել են կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող «Աստղիկ» ՍՊ ընկերության հաշվեհամարին, ապա փաստաթղթերով ցույց են տվել, որ վարկառուները «Աստղիկ» ՍՊ ընկերությունից ստացել են կենցաղային տեխնիկա, իսկ փոխանցված ու հափշտակված գումարները կանխիկացրել են:

Կարեն Ղասաբողյանի հետ հանցավոր համաձայնության գալով՝ վերոհիշյալ 3.570.000 ՀՀ դրամ վարկային գումարների մասով բանկ են մուտքագրել 1.736.398 ՀՀ դրամ՝ հափշտակված 3.570.000 ՀՀ դրամ գումարից օրինականացնելով 1.736.398 ՀՀ դրամ գումարը: Բացի դրանից, Արթուր Թովմասյանն իր ընկերոջ՝ Մանվել Մառլենի Կարապետյանի վստահությունը չարաշահելով՝ վերջինիս անվամբ 2008 թվականի մարտի 10-ին 1.800.000 ՀՀ դրամի վարկ է ձևակերպել և հափշտակել այն, իսկ 2008 թվականի ապրիլի 22-ին 1.000.000 ՀՀ դրամի վարկ է ձևակերպել Արսեն Յուրիկի Մանուկյանի անվամբ և խաբեությամբ տիրանալով նշված գումարին՝ այն նույնպես հափշտակել է:

Ամբաստանյալ Նարինե Նավասարդյանն աշխատելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ՝ օժանդակել է մասնաճյուղի ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբողյանին կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող «Աստղիկ» ՍՊ ընկերության հաշվեհամարին փոխանցել և յուրացնել Արտակ Թորոսյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի, Պավել Գաբրիելյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի, Ժամսենա /Էվելինա/ Ալեքսանյանի անվամբ՝ 600.000 ՀՀ դրամի, Յուրի Հովհաննիսյանի անվամբ՝ 480.000 ՀՀ դրամի, Արման Պողոսյանի անվամբ՝ 450.000 ՀՀ դրամի և Կարեն Նավասարդյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի կեղծ վարկային պայմանագրերից ստացված 3.570.000 ՀՀ դրամը:

Դրանից բացի, օժանդակել է Կարեն Ղասաբողյանին «Գետուկ» ՍՊ ընկերության հաշվեհամարին փոխանցել և յուրացնել Կարեն Ղասաբողյանի քրոջ՝ Կարինե Ղասաբողյանի անվամբ 480.000 ՀՀ դրամի, մոր՝ Էլմիրա Վարդանյանի անվամբ՝ 320.000 ՀՀ դրամի, Էվելինա Ալեքսանյանի անվամբ՝ 240.000 ՀՀ դրամի կեղծ վարկային պայմանագրերից ստացված 1.040.000 ՀՀ դրամը:

Բացի այդ, օժանդակել է Կարեն Ղասաբողյանին կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող «Աստղիկ» ՍՊ ընկերության հաշվեհամարին փոխանցել և յուրացնել Հայկ Մնացականյանի անվամբ՝ 640.000 ՀՀ դրամի, Ալեքսանդր Իսակովի անվամբ՝

680.000 ՀՀ դրամի, Կարեն Առաքելյանի անվամբ՝ 480.000 ՀՀ դրամի, Մանուկ Թովմասյանի անվամբ՝ 600.000 ՀՀ դրամի, Ալեքսան Դավթյանի անվամբ՝ 600.000 ՀՀ դրամի և Մխիթար Հովհաննիսյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամի կենցաղային տեխնիկայի ձեռք բերման, կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ ձևակերպված, վարկերից ստացված 3.680.000 ՀՀ դրամը:

Բացի վերը նշվածից, օժանդակել է Կարեն Ղասաբօղյանին յուրացնել նաև կեղծ՝ առանց համապատասխան վարկային գործերի ձևակերպված և համակարգիչ մուտքագրված վարկերից ստացված ընդամենը 34.550.000 ՀՀ դրամը:

Արման Պողոսյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամ, Արման Աղամալյանի անվամբ՝ 2.000.000 ՀՀ դրամ, Գարուշ Թորոսյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամ, Արսեն Սուքիասյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամ, Գուրգեն Առաքելյանի անվամբ՝ 1.900.000 ՀՀ դրամ, Նվեր Թովմասյանի անվամբ՝ 700.000 ՀՀ դրամ, Արթուր Սարգսյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամ, մտացածին անձի՝ Գարուշ Կարիբյանի անվամբ՝ 1.500.000 ՀՀ դրամ, Էլմիրա Վարդանյանի անվամբ՝ 1.800.000 ՀՀ դրամ, Կարեն Ղասաբօղյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամ, 1.800.000 ՀՀ դրամ և 2.000.000 ՀՀ դրամ, Արման Ալեքսանյանի անվամբ՝ 1.700.000 ՀՀ դրամ, 1.000.000 ՀՀ դրամ և 1.000.000 ՀՀ դրամ, Սարգիս Ոսկանյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամ, Բենիկ Ստեփանյանի անվամբ՝ 800.000 ՀՀ դրամ, 1.000.000 ՀՀ դրամ և 1.000.000 ՀՀ դրամ, Հերմինե Համբարձումյանի անվամբ՝ 1.350.000 ՀՀ դրամ, Թամարա Համբարձումյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամ և 1.000.000 ՀՀ դրամ, Քանաքարա Ստեփանյանի անվամբ՝ 2.000.000 ՀՀ դրամ և 1.000.000 ՀՀ դրամ, Օնիկ Ստեփանյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամ և 1.000.000 ՀՀ դրամ, Էդուարդ Բարեղանյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամ և Քնքուշ Մելքոնյանի անվամբ՝ 1.000.000 ՀՀ դրամ:

Ամբաստանյալ Սահականույշ Ասատրյանն աշխատելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի սպասարկման բաժնի վարիչ՝ Գուրգեն Առաքելյանի անվամբ ձևակերպված 1.900.000 ՀՀ դրամի, Էլմիրա Վարդանյանի անվամբ ձևակերպված 1.800.000 ՀՀ դրամի, Արման Ալեքսանյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի և 1.000.000 ՀՀ դրամի, Սարգիս Ոսկանյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի, Կարեն Ղասաբօղյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի, 1.800.000 ՀՀ դրամի և 2.000.000 ՀՀ դրամի, Արսեն Սուքիասյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի, Արթուր Սարգսյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի, Գարուշ Կարիբյանի անվամբ ձևակերպված 1.500.000 ՀՀ դրամի, Բենիկ Ստեփանյանի անվամբ ձևակերպված 800.000 ՀՀ դրամի, 1.000.000 ՀՀ դրամի և 1.000.000 ՀՀ դրամի, Հերմինե Համբարձումյանի անվամբ ձևակերպված 1.350.000 ՀՀ դրամի, Քնքուշ Մելքոնյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի, Էդուարդ Բարեղանյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի, Թամարա Համբարձումյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի և 1.000.000 ՀՀ դրամի, ինչպես նաև Քանաքարա Ստեփանյանի անվամբ ձևակերպված 2.000.000 ՀՀ դրամի վարկերի գումարները, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ Նարինե Նավասարդյանի օժանդակությամբ, բաց է թողել մասնաճյուղի ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբօղյանին՝ օժանդակելով վերջինիս յուրացնել բանկին պատկանող գումարները:

Ամբաստանյալ Արա Մկրտչյանը մինչև 2008 թվականի օգոստոսն աշխատելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի սպասարկման բաժնի ավագ մասնագետ՝ գանձապահ, իսկ հետագայում՝ մասնաճյուղի կառավարչի տեղակալ՝ Արման Աղամալյանի անվամբ ձևակերպված 2.000.000 ՀՀ դրամի, Գարուշ

Թորոյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի, Օնիկ Ստեփանյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի և Քանաքարա Ստեփանյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի վարկերի գումարները, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ Նարինե Նավասարդյանի օժանդակությամբ, բաց է թողել մասնաճյուղի ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբոլյանին՝ օժանդակելով վերջինիս յուրացնել բանկին պատկանող գումարները:

Ամբաստանյալ Վիկտորիա Ասատրյանը 2006 թվականից աշխատելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի սպասարկման բաժնի ավագ մասնագետ՝ գանձապահ՝ Արման Ալեքսանյանի անվամբ ձևակերպված 1.700.000 ՀՀ դրամի, Նվեր Թովմասյանի անվամբ ձևակերպված 700.000 ՀՀ դրամի, Արման Պողոսյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի և Օնիկ Ստեփանյանի անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի վարկերի գումարները, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ Նարինե Նավասարդյանի օժանդակությամբ, բաց է թողել մասնաճյուղի ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբոլյանին՝ օժանդակելով վերջինիս յուրացնել բանկին պատկանող գումարները:

Ամբաստանյալ Պապ Մանուկյանը չարաշահելով իր հարևանուհի Ալինա Սարգսյանի վստահությունը՝ վերցրել է վերջինիս անձնագիրը և նրա համաձայնության բացակայության պայմաններում, Ալինա Սարգսյանի անվամբ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում 600.000 ՀՀ դրամի կենցաղային տեխնիկայի ձեռք բերման վարկ է ձևակերպել և սահմանված կարգով վարկի մարումը չկատարելով՝ հափշտակել է այդ գումարը:

3. Ապացույցների հետազոտում և գնահատում.

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքներում ամբաստանյալ Կարեն Ղասաբոլյանն իրեն մեղավոր ճանաչեց մասնակի և չընդունելով ներկայացված քաղաքացիական հայցը՝ ցուցմունք տվեց, որ 2005 թվականից մինչև 2008 թվականն աշխատել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունում՝ որպես վարկային բաժնի պատասխանատու: Իր կողմից կազմված վարկային գործերի փաթեթները պահվել են իր աշխատասենյակի պահարանում: Ինքն է բացել վարկային հաշիվները, բոլոր գործողությունները, որ կապված են եղել վարկերի հետ ինքն է կատարել, քանի որ հաշվապահությունն այդ մեծ մասնաճյուղում չէր հասցնում կատարել այդ գործողությունները: Մեկ հաշվապահ է եղել, որևէ կարգադրություն չի էլ իջեցվել նրան, ունեցել են նաև մեկ տնտեսագետ, աշխատանքը շատ է եղել և բոլորն ինքն է կատարել: Ոչ մի աուդիտի կողմից իրենք չեն նախազգուշացվել, կամ նկատողություն ստացել, որ իրավունք չունեն, որ հաշվապահը պետք է դա կատարի: Չէր էլ կարող կարգադրություններ իջեցնել՝ աշխատանքի ծավալի պատճառով: Պատահել է, որ աշխատել են մինչև ժամը 21:00-ն, բայց էլի չեն հասցրել: Հաշվապահն ի վիճակի չէր հաշիվ բացել ու վարկեր մուտքագրել, դրա համար էլ ինքն է արել: Համակարգիչները կապված են եղել իրար, կողավորում չի եղել, ինքն ինֆորմացիա չի տրամադրել, բայց կարողացել է ստանալ բոլոր բաժիններից: Վարկային գործը մուտքագրվել է համակարգիչ: Գանձապահին վարկերը չեն հետաքրքրել, իսկ հաշվապահն ամսվա վերջին է ինֆորմացիան նայել՝ հաշվետվության համար: Վարկային կոմիտե երբեք չի հրավիրվել՝ ժամանակ չի եղել կոմիտեի նիստ հրավիրելու: Նույնիսկ օրինական ձևակերպված վարկերով կոմիտեի նիստ չի հրավիրվել, ուղղակի իրար վստահել են ու որոշումները

ստորագրել: Բոլոր գործերի մեջ առկա է կոմիտեի որոշում, բայց դա չի նշանակում, որ նիստ է եղել: Իր աշխատած չորս տարիների ընթացքում կոմիտեի նիստ չի հրավիրվել: Վարկային պորտֆելը երկու միլիոն ԱՄՆ դոլարի չափով է եղել: Ոչ մի գործով վարկային կոմիտեի նիստ չի եղել, հաշվապահությունը կարգադրություն չի իջեցվել: Կառավարիչին չի խնդրել, որ կարգադրի հաշվապահին կամ գանձապահին իրեն գումար տան, առանց կառավարչի էլ իրեն վստահել են: Ժամկետանց վարկեր են եղել, գնացել, տեսել է հաճախորդներին, գումարներ են տվել իրեն, բերել մարումներ է կատարել: Եղել են դեպքեր, երբ հաճախորդներից երկու կամ երեք միլիոն գումար է հավաքված եղել: Տարել է մարում կատարել, կնիքները դրված են եղել դրամարկղի սեղանին և աշխատակիցներին օգնելու համար ինքն է կնքել: Իր պարտականությունների մեջ չի մտել գումար ստանալ և վճարում կատարել, բայց դա արել է բանկի համար:

Իր ազատվելուց հետո հանձնում ընդունում չի կատարվել: Վերանորոգում է եղել մասնաձյուղում և հնարավոր է, որ տանել-բերելուց են կորել այդ բացակայող գործերը կամ փաստաթղթերը: Հետո կառավարիչն իրեն հրավիրել է մասնաձյուղ և ինքը կեղծ վարկերի վերաբերյալ բացատրագիր է գրել:

Համբարձում Բեգլարյանը և Սարգիս Շահբազյանը գումարներն իր մոտ են թողել: Ինքը դրանք մուտք չի արել, սակայն վճարման հանձնարարագիր է կազմվել ու տվել նրանց: Այսինքն մուծել են գումարը, իսկ ինքը հետո համակարգչից հանել է այդ մարումը և վարկը մնացել է նույն ձևով: Վալիկո Պետրոսյանի անվամբ մեկ միլիոն ավել գումար է գրվել, ասել է, որ ինքը կմարի, բայց չի մարել: Ի սկզբանե մտադրություն չի ունեցել, սակայն գումար չի եղել դրա համար էլ չի մարել: Նույնը նաև Արման Ղարիբյանի անվամբ վարկով: Կարեն Նավասարդյանը պայմանագիր չի ստորագրել և ընդհանրապես տեղյակ չի եղել, որ իր անվամբ վարկ կա: 23 վարկ մուտքագրել է համակարգիչ, բայց գործ չի կազմել: Մնացած գործերով, որոնք ձևակերպված են, բայց մարդիկ տեղյակ չեն, օրինակ՝ Արման Պողոսյան, Քնքուշ Մելքոնյան, Էլմիրա Վարդանյան, Քնարիկ Ճաղարյան, Քանաքարա Ստեփանյան, դրանք կազմված գործեր են, բոլորն էլ տեղյակ են: Այդ 23 կեղծ վարկային գործերով ինքն է կատարել բոլոր գործողությունները: Հաճախորդի անունով հաշիվ է բացել, վարկը մուտքագրել, գումարի անդորրագիր է դուրս գրել, ապա իջել է դրամարկղ ու ստացել գումարը: Եթե հարցրել են՝ ասել է հաճախորդը վերևը նստած է, չի ուզում իջնել: Պատահել է, որ դրամարկղում ինքն է օրդերը կնքել: Կնիքը դրված է եղել սեղանին, իսկ դրամարկղի աշխատողը զբաղված է եղել, ինքն էլ վերցրել ու կնքել է: Պատահել է նաև, որ դրամարկղի աշխատողը վստահել ու առանց ստուգելու կնքել է:

Արման Պողոսյան, Արման Աղամայան, Արսեն Սուքիասյան, Գարուշ Թորոսյան, Արթուր Սարգսյան, Գուրգեն Առաքելյան, Նվեր Թովմասյան, Գարուշ Կարիբյան, Էլմիրա Վարդանյան, Արման Ալեքսանյան և Սարգիս Ոսկանյան անուններով վարկերը՝ 21.400.000 ՀՀ դրամի չափով կազմել է միայնակ: Արման Պողոսյանն անձամբ է ստացել գումարը: Դավիթբեկ Դավթյանը 100.000 դրամն իրեն է տվել և ոչ թե Արա Մկրտչյանին: Բենիկ Ստեփանյանի վարկերը օրինական են իսկ իր աշխատանքից ազատվելուց առաջ Ռուզաննա Ղարիբյանի վարկը դեռևս մարված չի եղել:

Կենցաղային տեխնիկայի ձեռք բերման վարկերը՝ Հայկ Մնացականյանի անվամբ՝ 640.000 ՀՀ դրամ, Ալեքսանդր Իսակովի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամ, Կարեն Առաքելյանի անվամբ՝ 480.000 ՀՀ դրամ, Մանուկ Թովմասյանի անվամբ՝ 600.000 ՀՀ դրամ, Ալեքսան Դավթյանի անվամբ՝ 600.000 ՀՀ դրամ և Մխիթար Հովհաննիսյանի անվամբ՝ 680.000 ՀՀ դրամ, օրնական են և վարկառուներն են ստացել տեխնիկան:

Առաջադրված մեղադրանքի հետ համաձայն չէ, յուրացում եղել է, գումարներ հափշտակել է, սակայն փողի լվացում չի եղել: Մեղադրանքի այն մասը, թե իբրև կառավարչի հետ նախապես

համաձայնության գալով «Աստղիկ» ՍՊ ընկերությանը 3.570.000 ՀՀ դրամ են փոխանցել, ապա կանխիկացրել ու բաժանել իրականում այդպես չի եղել: Որևէ պայմանավորվածություն իր ու կառավարչի կամ մյուս աշխատակիցների միջև այդ կեղծ վարկերով չի եղել: Նրանք ընդհանրապես տեղյակ չեն եղել իր արածներից: Ընդհանուր առմամբ իր գործողություններից որևէ մեկը տեղյակ չի եղել, ոչ մեկի հետ համաձայնություն կամ որևէ մեկի հանձնարարությամբ ոչինչ չի կատարել: Հայկ Մնացականյան, Ալեքսանդր Իսակով, Կարեն Առաքելյան, Մանուկ Թովմասյան, Ալեքսան Դավթյան, Մխիթար Հովհաննիսյան անուններով վարկերն իրենք տեղյակ են: Այդ վարկերի մասով էլ մեղադրանքին համաձայն չէ, քանի որ իրենք եկել են իրենց ապառիկը ձևակերպել ու վարկ ստացել: Համաձայնություն չի եղել նաև Արթուր Թովմասյանի հետ: Տեխնիկա ձեռք բերելու համար Ռոզա Խաչատրյանի հետ է պայմանավորվել ու նրանից միշտ տեխնիկա է վերցրել, գումար երբեք չի վերցրել, ոչ էլ Ռոզա Խաչատրյանն է իրեն գումար փոխանցել: Իր միակ համաձայնությունը եղել է Ռոզա Խաչատրյանի հետ, ուրիշ ոչ մեկի հետ նախնական համաձայնություն չի եղել: Առանց նախնական համաձայնության «Գետուկ» ՍՊ ընկերությունից էլ է տեխնիկա վերցրել, դա նույնպես արել է միայնակ: Հետագայում էլ կատարել է մարումներ, կան նաև ամբողջությամբ մարված վարկեր: Բենիկ Ստեփանյանի հետ նույնպես նախնական համաձայնություն չի եղել, որ Հերմինե Համբարձումյանի, Թամարա Համբարձումյանի, Քանաքարա Ստեփանյանի, Օնիկ Ստեփանյանի, Քնքուշ Մելքոնյանի և Էդուարդ Բարեղամյանի անուններով կեղծ վարկեր ձևակերպվի: Եղել է մեկ-երկու գործ, որոնցով նա ասել է, որ երաշխավորը չի կարող գալ, ինքն էլ պայմանագրերը տվել է Բենիկ Ստեփանյանին, որը տարել է ստորագրել տվել ու բերել: Մարումներ կատարել է, քանի որ վարկերը չմարելու միտում չի ունեցել, ցանկացել է փակել, քանի որ անձանոթ մարդիկ էին, և ընդհանրապես չի ցանկացել, որ այդ կեղծ վարկերը երևան, որ կեղծ վարկեր լինեն:

ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով առաջադրված մեղադրանքներում ամբաստանյալ Արսեն Առաքելյանն իրեն մեղավոր ճանաչեց մասնակի և չընդունելով ներկայացված քաղաքացիական հայցը՝ ցուցմունք տվեց, որ 2005 թվականից մինչև 2009 թվականը հանդիսացել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի կառավարիչ: Բանկի վերանվանումը կատարվել է 2006 թվականին: Բանկն ունեցել է 87 մասնաճյուղ: Սևանի մասնաճյուղի վիճակն իր աշխատանքի անցնելու ժամանակ բավականին վատ էր, տրամադրվում էր ընդամենը 1-2 տեսակի վարկ: Երկու տարի հետո մասնաճյուղը մտել է լավագույն տասնյակի մեջ: Կենցաղային տեխնիկայի վերաբերյալ վարկերով՝ նախ հաճախորդը գնում էր խանութ, ընտրում ապրանքը, այնտեղ հարցնում, ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ, ապա համապատասխան փաստաթղթերով գալիս էր բանկ, դիմում էր վարկային բաժին, ներկայացնում համապատասխան փաստաթղթերը, ձևակերպվում էր վարկը, հաճախորդը կատարում էր կանխավճարը, որից հետո ապրանքի հանձնման ընդունման ակտը եթե չէր լինում՝ գումարը չէր փոխանցվում: Խոսքը վերաբերում է մինչև 2.000.000 ՀՀ դրամ վարկային գումարին, որը ձևակերպվում էր վարկային բաժնի պատասխանատուի կողմից և պարտադիր չէր, որ ներկայանային կառավարիչին: Մյուս կողմից կենցաղային տեխնիկայի վերաբերյալ վարկերով գումարը պարտադիր փոխանցվում էր խանութի հաշվին: Իրեն ներկայացվում էր վարկային փաթեթը, և եթե բոլոր փաստաթղթերն առկա էին, ինքը կատարում էր մակագրություն, որից հետո գումարը պարտադիր փոխանցվում էր խանութի հաշվին: Բացառվել է գումարի կանխիկ տրամադրումը:

Ինչ վերաբերում է կարգադրությանը, ապա բոլոր մասնաճյուղերում, բացի շրջաններից, գլխավոր հաշվապահից բացի կար նաև մեկ

հաշվապահ-գործավարի հաստիք, որը Սևանի մասնաշրջանում թափուր է եղել: Ինչ էլ իրենից ներկայացնում կարգադրությունը՝ այն կազմում է տնտեսագետը, վարկային պատասխանատուն, որի մեջ նշվում է վարկի համարը, գումարը, տոկոսադրույքը և գրավը, որը պետք է իջեցվեր գլխավոր հաշվապահին, սակայն դա անհնարին էր արագ կազմակերպել, քանի որ հաշվապահը լինելով ֆիզիկապես ծանրաբեռնված ի վիճակի չէր այդ ծավալի աշխատանքը կատարել: Համակրգիչներն այնպես էին ծրագրավորված գլխամասից, որ Կարեն Ղասաբոլյանն անմիջապես կարող էր առանց կարգադրության, մուտքագրել գումարը և կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները, այսինքն կարգադրության անհրաժեշտությունը վերանում էր:

Ինչ վերաբերում է կեղծ վարկերին՝ ինքը չէր կարող ստուգել կեղծ փաստաթուղթ է դրված, թե ոչ: Բոլոր վարկային գործերը բացահայտվել են Կարեն Ղասաբոլյանի ազատվելուց հետո: Ինքը դիմել է գլխամաս՝ առարկելով նրա ազատմանը: Գտնում էր, որ, որպես նյութական պատասխանատու անձնավորություն, Կարեն Ղասաբոլյանը պետք է մնար: 5.000 վարկային գործ կար և պետք էր պարզել ու կարգավորել դրանք, բայց իրեն չլսեցին և Կարեն Ղասաբոլյանին ազատեցին աշխատանքից: 2008 թվականից Արա Մկրտչյանն է սկսել զբաղվել: Նա կանչել է մարդկանց՝ ժամկետանց վարկերով ու պարզվել է, որ շատերը տեղյակ չէին: Կարեն Ղասաբոլյանին հրավիրել են մասնաճյուղ, հաշվապահն էլ է ներկա գտնվել ու Կարեն Ղասաբոլյանը խոստացավ մարումներ կատարել: Նա հնարավորություն ունեցել է մուտքագրել գումարները, նա կարողացել է ձևակերպել տարբեր վարկեր, վճարման հանձնարարագրերը նա է իջեցրել ներքև:

Սպասասրահում, եթե նպաստներ ու թռչակներ վճարելու օր էր, հավաքվել է շուրջ 30-40 մարդ և միգուցե դրանից էլ օգտվելով՝ զանձապահներին ասել է, որ հաճախորդը չի ուզում իջնել ու նա է ստացել գումարը: Ինքը չէր կարող իմանալ, որ փաստաթուղթը կեղծ է: Այն առկա է եղել գործում՝ հաստատել են, հետո, երբ այդ մարդկանց կանչել են մասնաճյուղ, պարզվել է, որ տեղյակ չեն: Ինչ վերաբերում է մուծումներին, ապա երրորդ անձն իրավունք չունի մարում կատարելու, բայց մարդը վարկը վերցնում է ու գնում Ռուսաստան: Հետո հարազատին գումար է ուղարկում, որոնք էլ կատարում են մասնակի մարումներ: Սակայն լրիվ մարման կամ գրավի դեպքում՝ վարկառուի ներկայությունը պարտադիր է: Այսինքն՝ երրորդ անձը կարող էր կատարել մասնակի մարում: Նախաքննության ժամանակ խնդրել է ճշտել Ալինա Սարգսյանի անվամբ կատարված փոխանցումը, քանի որ Պապ Մանուկյանը ցուցմունքում ասել էր, թե ինքը հանձնարարել է գումարը կանխիկ տալ նրան: Այսինքն՝ ստացվում է, որ կրկնակի գումար են տվել՝ նախ փոխանցել են, հետո էլ կանխիկ տվել: Կա նաև խանութից տեղեկանք, որ գումարն իրոք փոխանցվել է: Իրեն ներկայացրել են Ալինա Սարգսյանի անվամբ փաթեթը, ինքն այն ստորագրել ու գումարը փոխանցվել է խանութին: Գումարը կանխիկացնելը բացառվել է, որովհետև նախ 3 տոկոս պետք է պահվի, ապա կանխիկացնելու 0,2 տոկոսը: Այսինքն նա 600.000 ՀՀ դրամից պակաս պետք է ստանար:

Ռուզաննա Ղարիբյանի անվամբ հիփոթեքային վարկը ձևակերպվել է 2007 թվականի ամռանը: Նրանք իրենց ցուցմունքներում նշել են, թե մուծումները բարեխիղճ կարգով կատարել են մինչև 2008 թվականի հունիսը, սակայն եթե նայենք նրանց մարումները՝ 2008 թվականի հունվարին մասնակի մարում են կատարել ու արդեն վարկը դարձել է դասակարգված: Իրենք մոնիթորինգ են կատարել, ու ստուգման արդյունքում պարզվել է, որ Ռուզաննա Ղարիբյանը չի աշխատել այն հիմնարկությունում, որտեղից տեղեկանք է բերել: Կանչել են Արտյոմ Դավոյանին, ով բնակարանի վաճառողն էր, նա էլ խոստովանել է, որ տեղեկանքները սարքել են, որ Ռուզաննա Ղարիբյանի փեսան է: Այսինքն՝ վարկը տրամադրվել էր ոչ նպատակային: Ինքը պահանջել է ամբողջությամբ մարել վարկը:

Արտյոն Դավոյանը նախկինում բիզնես ծրագրով մեծ վարկ էր ստացել ու ժամանակին մարել էր՝ վստահություն եղել է: Վերջինս փաստաթղթեր է ներկայացրել ու հայտնել, որ Գավառի «Անելիք» բանկի մասնաձյուղից վարկային գիծ է ստացել: Առաջին փուլով ստացել է գումար, երկրորդ փուլով գումար ստանալուց հետո խոստացել է մարել ամբողջ վարկը: Մի քանի օր անց գալով բանկ՝ գանգահարեց «Անելիք» բանկի ներկայացուցչին, որն իր հետ խոսելիս հայտնեց, որ երկրորդ փուլով գումար ստանալու համար գրավը պակասություն է անում: Անհրաժեշտ էր տեղեկանք տալ, թե իբրև բնակարանը գրավի տակ չէ: Մտածելով, որ այդ դեպքում նրանք կտան երկրորդ փուլով գումարը, իսկ Արտյոն Դավոյանն էլ կմարի վարկը՝ ինքը տվել է տեղեկանքը, նկատի ունենալով, որ այն պետք է տարվեր բանկ, այլ ոչ թե կադաստր: Հետո պարզելով, որ վարկ չեն տվել պահանջել է վերադարձնել տեղեկանքն ու սեփականության վկայականը, իսկ վարկը մարել մինչև տարեվերջ: Այդ ժամանակ վարկի մնացորդը կազմել է 4.416.000 ՀՀ դրամ, որը նշված է եղել նաև տեղեկանքի մեջ: Շուրջ հինգ օր անց Արտյոն Դավոյանը վճարել է 553.000 ՀՀ դրամ, որից 330.000 ՀՀ դրամը մայր գումարն էր, իսկ մնացածը՝ տոկոսագումարը: Դրանից հետո ամեն ամիս մուծում են կատարել՝ վեց մուծում է կատարել, մինչև դեկտեմբերի 30-ը: Դեկտեմբեր ամսին երկու անգամ է մուծում կատարվել: Այստեղ հարց է առաջանում, եթե նրանք լրիվ գումարը դեռևս հունիսին տվել են իրեն, ապա ինչու են շարունակել մուծումներ կատարել: Դեկտեմբերի մուծումից հետո վարկի մնացորդը կազմել է 3.583.000 ՀՀ դրամ: Ղա այն թիվն է, որ նրանք պնդում են, թե իբրև հունիս ամսին տվել են իրեն: Այդ թիվը նրանց մոտ հայտնվել է արդեն 2009 թվականի հունվար-փետրվարին, երբ վարկը նորից ժամկետանց զցվեց, նրանց ծանուցում է ուղարկվել, որի մեջ նշված է եղել այդ թիվը: Նրանք էլ մտածել են, թե այդ գումարը դեռևս հունիսից է գալիս ու պնդել են, թե այդ գումարն են իրեն տվել: Եթե ինքը դեռևս հունիսին գումար վերցնելիս լիներ, ապա կպահանջեր 4.416.000 ՀՀ դրամ: Բացի այդ, հունիսի 18-ից մինչև տարեվերջ մասնաձյուղից 10-20 անգամ գանգել է Արտյոն Դավոյանին, Ռուզաննա Դարիբյանին և Կարեն Խաչատրյանին, սակայն նրանք պնդել են, թե այդ օրվանից հետո իր հետ գործ չեն ունեցել, մասնաձյուղ չեն մտել: Անդորրագրերի վրա առկա ստորագրություններից ակնհայտ է, թե ով է ստորագրել: Ինչ վերաբերում է փոխհամաձայնությանը, փոխկապակցված գործունեությանը, ապա ակնհայտ է, որ եթե Կարեն Դասաբոլյանը կարող էր միայն անձնագրով վարկ ձևակերպել ու ոչ մեկի հետ չկիսվել, ինչու պետք է Բենիկ Ստեփանյանին ուղարկեր համազյուղացիներից թղթեր, ստորագրություններ բերելու և գումարը կիսվեր նրա հետ: Այսինքն՝ Կարեն Դասաբոլյանը չի համագործակցել ոչ Բենիկ Ստեփանյանի հետ, ոչ էլ Արթուր Թովմասյանի հետ: Ինչ վերաբերում է իր կամ բանկի աշխատակիցներից որևէ մեկի հետ համագործակցությանը, ապա իրենք կարող էին վերանորոգման գումարները յուրացնել, դրանք ավելի շատ էին: 2009 թվականին, երբ արդեն ամբողջ տվյալները կային՝ ինքը գնացել է գխամաս, ներկայացել բանկի անվտանգության պետին, առաջին տեղակալին, հետո մտել է նախագահի մոտ, որն էլ առանց հարցնելու թե ինչ է եղել, ոնց է եղել, ասել է թե իրեն նստեցնելու է: Առաջին տեղակալն ասել է, եթե գումար ունես՝ բեր մուծի, իսկ ինքը պատասխանել է, որ ինքը մեղավոր չէ և թեկուզ գումար ունի, բայց չի մուծելու: Իրեն պահել են հենց անվտանգությունում, անձնագիրը վերցրել են, իսկ ուշ երեկոյան թույլ են տվել գնալ՝ պահանջելով առավոտյան ներկայանալ մասնաձյուղ և մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին: Իրեն զրկել են լիազորություններից և լիցեզիայից: Հանձնաժողովը ստուգել է այն գործերը, որ իրենք են ներկայացրել, և այնպես է ստացվել, թե իբրև հանձնաժողովն է հայտնաբերել այդ կեղծիքները: 2008 թվականի ամռանն աուիդիտը նույն գործերն էր

նայել: Նաև ստուգվել էին հենց Բենիկ Ստեփանյանի հետ կապված այդ անձանց գործերը և այնտեղ ոչ մի խախտում չէր հայտնաբերվել: Արդյունքում այնպես ստացվեց, որ բացի այդ 23 գործերից եղել են նաև 20-21 գործեր, որոնց միջից բացակայել են վարկային պայմանագրեր կամ կոշտ գրավի պայմանագրեր, որոնք սկզբից եղել են: Այդ գումարը վարկային պորտֆելի մեջ որակ չէր կազմել, 2.000.000 ԱՄՆ դոլարի գումարը վարկային պորտֆելի մեջ չէր երևում, քանի որ խոսքը ոչ թե 44.000.000 մասին է, այլ կեղծ ձևակերպածներով՝ 21.000.000: Մնացածը օրինական վարկեր են եղել:

Պատահել է, որ իր հարազատները կամ բարեկամները, որոնք վարկ են ստացել բանկից և գտնվելով իր աշխատասենյակում՝ չեն ցանկացել իջնել դրամարկղ, ինքը հանձնարարել է գումարը բարձրացնել իր մոտ: Նման դեպքերն իր աշխատանքի ընթացքում ընդամենը մի քանիսն են եղել:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով առաջադրված մեղադրանքներում ամբաստանյալ Արթուր Թովմասյանն իրեն մեղավոր ճանաչեց լիովին, սակայն չընդունելով ներկայացված քաղաքացիական հայցը՝ ցուցմունք տվեց, որ աշխատել է «Լուսաստղ» և «Աստղիկ» ՍՊ ընկերություններում և ԴԱՀԿ-ում: «Աստղիկ» ՍՊ ընկերությունում զբաղվել է կենցաղային տեխնիկայի վաճառքով, ընկերության տնօրենն է եղել Ռոզա Խաչատրյանը: 2007-2008 թվականներին իր ընկերների անուններով ձևակերպել է կենցաղային վարկեր՝ Մխիթար Հովհաննիսյան, Ալեքսան Դավթյան, Հայկ Մնացականյան, Մանուկ Թովմասյան և այլն ու ստացել է այդ վարկերը: Նրանցից վերցրել է անձնագրերը, աշխատավարձի չափի մասին տեղեկանքները գրել է ինքը, թե իբր նրանք աշխատել են «Աստղիկ» ՍՊ ընկերությունում: Դրանք կեղծ տեղեկանքներ էին: Կնիքն ինքն է դրել՝ ոչ Ռոզա Խաչատրյանը և ոչ էլ բանկի աշխատակիցները տեղյակ չեն եղել կեղծ տեղեկանքներից: Ընտանիքի շնչերի մասին տեղեկանքները ոչ բոլորն են բերել: Ընկերները եկել են խանութ, տվել անձնագրերը, իսկ ինքը դրանք միայնակ տարել է բանկ: Բանկի կառավարիչ Արսեն Առաքելյանին այդ հարցով չի դիմել: Կարծում է, որ Կարեն Ղասաբօղյանը, որն իր նախկին կնոջ եղբայրն է, մասնակցել է այդ վարկերի ձևակերպմանը, քանի որ նա բանկի վարկային բաժնի աշխատողն է եղել: Գումարները բանկից փոխանցվել են խանութի հաշվին, Ռոզա Խաչատրյանն իրեն տվել է ապրանքի գնի գումարը՝ պահելով որոշ գումարներ. հարկային մարմիններին տալիքը՝ շուրջ 10 տոկոս, 3 տոկոս խանութին, և 4-ից 7 տոկոս Ռոզա Խաչատրյանին: Կենցաղային տեխնիկան, որի ապառիկը ձևակերպված է եղել իր ընկերների անունով, գիտեին, որ ինքը պետք է վերցնեի, բայց ինքը դրանք դարձյալ վաճառում էր Ռոզա Խաչատրյանին, քանի որ վերջինս միևնույնն է պետք է նորից բերեր այդ տեխնիկայից: Ռոզա Խաչատրյանը գումարը տվել է իրեն, իսկ ապրանքը մնացել է խանութում: Վերջինս տեղյակ չի եղել թե կոնկրետ ում համար է գումարը: Գիտեր, որ ապրանքը չի տարվելու, ինքն ասել է, որ հաճախորդն իր ընկերն է ու վերցրել գումարը: Ալեքսանդր Իսակովի, Կարեն Առաքելյանի, Մանուկ Թովմասյանի, Ալեքսան Դավթյանի և Մխիթար Հովհաննիսյանի անվամբ եղած վարկերի գումարներն ամբողջությամբ ինքն է ստացել, իսկ Հայկ Մնացականյանի անվամբ վարկի գումարը ստանալով Ռոզա Խաչատրյանից՝ դրա կեսը փոխանցել է Կարեն Ղասաբօղյանին: Մնացած վարկերից տեղեկություն չունի և չի մասնակցել դրանց ձևակերպմանը: Իր կողմից ձևակերպված բոլոր վարկերն ինքը փակել է: Մնացել է միայն Մխիթար Հովհաննիսյանի անվամբ վարկի գումարը, որն ինքը տվել է Կարեն Ղասաբօղյանին, որպեսզի վերջինս մարի այն, սակայն չի մարել: Իր անվամբ ձևակերպված 1.800.000 ՀՀ դրամի վարկից 500.000 ՀՀ դրամը նույնպես տվել է Կարեն Ղասաբօղյանին և նրանից վերցրել համապատասխան

անդորրագիր, սակայն հետագայում պարզվել է, որ Կարեն Ղասաբոլյանն այդ գումարից մուծել է միայն 120.000 ՀՀ դրամը: Հետո իր և Մանվել Կարապետյանի անունով նորից վարկ է վերցրել: Նա բերել է անձնագիրը և բոլոր մյուս տեղեկանքները: Գումարը Մանվել Կարապետյանն է ստացել, բայց տվել է իրեն: Ինքը խոստացել է, որ կփակի և սկզբում փակել է 500.000 ՀՀ դրամի չափով, հետո ֆինանսական դժվարություններ է ունեցել և չի կարողացել վճարել: Արսեն Մանուկյանի անունով վերցրած վարկից վերջինս նույնպես տեղյակ է, քանի որ հենց նա է տվել անձնագիրը, գումարը նա է ստացել ու հանձնել իրեն, որի համար էլ ինքը ստացական, պարտավորագիր է գրել, որ ինքն է փակելու այդ վարկը, սակայն մինչև հիմա չի կարողացել փակել: Գումարները ծախսել է անձնական կարիքների համար:

Ոչ բանկի կառավարիչ Արսեն Առաքելյանը, ոչ Ռոզա Խաչատրյանը և ոչ էլ Կարեն Ղասաբոլյանը չեն մասնակցել վարկերի գումարների ստացմանը, կիսելուն կամ հետ վերադարձնելուն և տեղյակ չեն եղել վերոհիշյալ գործողություններից, իսկ նախաքննության ընթացքում տված ցուցմունքի այն հատվածը, որտեղ նշված է, որ Կարեն Ղասաբոլյանը կենցաղային վարկեր է ձևակերպել ուրիշ անձանց անուններով, որը փոխանցվել է խանութի հաշվի համարին և ստացված գումարների հիմնական մասը տրվել է Կարեն Ղասաբոլյանին՝ իրականությանը չի համապատասխանում: Արթուր Թովմասյանը նշեց նաև, որ կատարել մասնակի մարումներ և խոստացավ սեղծ ժամկետում մարել բոլոր վարկերը:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Նարինե Նավասարդյանն իրեն մեղավոր ճանաչեց մասնակի, և չընդունելով ներկայացված քաղաքացիական հայցը՝ նշեց, որ իրեն մեղավոր է ճանաչում, այն բանում, որ կատարված խախտումների մասին ուշ է հայտնել վերադասին, սակայն իր գործողությունները միտված չեն եղել, դիտավորություն չի եղել միասնական՝ առանձնապես խոշոր չափի գումարների հափշտակություն կատարելուն օժանդակել: Ինչ էլ որ արվել է՝ ամեն անգամ Կարեն Ղասաբոլյանն ասել է, թե կառավարիչը տեղյակ է: Միտումնավոր ոչինչ չի եղել, չի կասկածել կամ զգացել, որ դրանք կեղծ վարկեր են եղել: Ինքն ընդհանրապես վարկային ձևակերպումների հետ գործ չի ունեցել, այդ ամբողջը կատարվել է վարկային բաժնի կողմից:

Ամբաստանյալ Նարինե Նավասարդյանը դատաքննության ընթացքում հրաժարվեց ցուցմունք տալուց և խնդրեց հիմք ընդունել գործի նախաքննության ընթացքում իր կողմից տրված ցուցմունքները:

Գործի նախաքննության ընթացքում Նարինե Նավասարդյանը ցուցմունքներ է տվել, որ 1985 թվականից աշխատել է բանկային համակարգում: 2003 թվականից մինչև 2009 թվականը եղել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի գլխավոր հաշվապահը և իր, որպես գլխավոր հաշվապահի, պարտականությունների մեջ են մտել յուրաքանչյուր աշխատակցի աշխատանքների ստուգումը, գործառնական օրվա փակումը և բացումը, հաշվետվությունների կազմելը և ժամկետում ուղարկելը: Բանկում գյուղատնտեսական և հիփոթեքային վարկերի տրամադրումը կատարվել է վարկային կոմիտեի որոշումից հետո, որի անդամ էր նաև ինքը: Վարկային կոմիտեի նիստերը պետք է կազմակերպեր կառավարիչը, որը բացի մի քանի գործերից, վարկային կոմիտեի նիստեր չի հրավիրել և կառավարիչն ու Կարեն Ղասաբոլյանը միասին են որոշել, թե ում վարկ տրամադրեն: Ըստ բանկում գործող կանոնակարգերի՝ ինքն իրավունք չուներ առանց «կարգադրություն հաշվապահությանը» փաստաթղթի, վարկերի գումարներ բաց թողնելու, սակայն վարկերը բաց են թողնվել առանց այդ փաստաթղթերի: Ինքը չգիտի, թե արդյոք մասնաձյուղում եղել են դեպքեր, որ վարկառուի փոխարեն, կառավարչի հանձնարարությամբ, վարկի գումարը տրվի այլ անձի: Սակայն

հիփոթեքային վարկեր տրամադրելու ժամանակ գործն անմիջապես ինքն է նայել, քանի որ նման գումարների չափը մեծ է եղել և ստուգել է վարկի ապահովվածությունը՝ այսինքն գրավադրված գույքըՔ Գրավադրված բնակարանների սեփականության վկայականների բնօրինակները պահվում են վարկային գործերումՔ Եղել են դեպքեր, երբ վակառուների վարկերի մարումները կատարվել են մասնաճյուղի վարկային պատասխանատու Կարեն Ղասաբոլյանի միջոցովՔ Երբ ինքն այդ մասին հարցրել է կառավարիչ Արսեն Առաքելյանից, վերջինս պատասխանել է, որ տեղյակ է դրանից և վարկառուներն են գումարը թողնում Կարեն Ղասաբոլյանի մոտ, որպեսզի դրանց մարման ժամկետները չանցնենՔ 2008 թվականի ամռանը, երբ համակարգչով ստուգել է վարկերի ձևակերպումները, հայտնաբերել է, որ Կարեն Ղասաբոլյանի մոր՝ Էլմիրա Վարդանյանի, անվամբ 1.800.000 դրամ գումարի չափով վարկ է ձևակերպվածՔ Քանի որ Կարեն Ղասաբոլյանը մասնաճյուղից իր անվամբ երկու անգամ արդեն վարկ վերցրել էր և ոչ մեկով ոչ մի անգամ վճարում չէր կատարել, ուստի մոր անվամբ ձևակերպված վարկը իրեն կասկածի տեղիք է տվել, որովհետև ինքը գիտեր, որ նա որևէ գույք չուներ գրավ դնելուՔ Դրամարկղի աշխատակից Վիկտորիա Ասատրյանն իրեն ասել է, որ վարկը մոր անվամբ ձևակերպել և ստացել է Կարեն ՂասաբոլյանըՔ Դրանից հետո Կարեն Ղասաբոլյանը մեկ անգամ ևս վարկ է ձևակերպել նրա անվամբ, նույն թվականին վարկեր են ձևակերպվել նաև Կարեն Ղասաբոլյանի մորաքրոջ որդու՝ Արման Ալեքսանյանի անվամբՔ Այդ նույն ժամանակաշրջանում մասնաճյուղում տարբեր քաղաքացիներից սկսել են բողոքներ ստացվելՔ Մի քանի վարկառուներ բողոքել են, որ իրենք վարկային մարումներ են կատարել Կարեն Ղասաբոլյանին տալու միջոցով, սակայն վերջինս այդ գումարները չի մուծել և յուրացրել էՔ Նրանցից ոմանց մոտ եղել են նաև Կարեն Ղասաբոլյանի կողմից տրված անդորրագրեր, վարկերի վճարումները կատարելու վերաբերյալ, եղել են նաև քաղաքացիներ, որոնք ասել են, որ մասնաճյուղում իրենց անուններով վարկեր են ձևակերպել, որոնցից սակայն տեղեկություն չունեն ու վարկ չեն ստացելՔ Ինքը այդ մասին տեղեկացրել է մասնաճյուղի կառավարիչ Արսեն ԱռաքելյանինՔ Վերջինս էլ իրեն ասել է, որ այդ հարցերը կլուծի և ինքը կարող է չմտախոզվել, իսկ Կարեն Ղասաբոլյանն էլ սպառնացել է, որ կվնասի ինքն իրենՔ Այդ մասին զրուցել է նաև Կարեն Ղասաբոլյանի մոր հետ, որը տեղյակ է եղել կատարվածից և ասել է, որ ամեն ինչ կանեն, որպեսզի այդ գումարների որոշ մասը գոնե փակենՔ Այդ նույն ժամանակահատվածում գլխամասային բանկի վերահսկողության բաժնի կողմից մասնաճյուղում անցկացվել են նաև ստուգումներ, որի ժամանակ իր համար զարմանալի պատճառներով որևէ խախտումներ չեն արձանագրվելՔ 2008 թվականի օգոստոս ամսին Կարեն Ղասաբոլյանը որակավորման քննությունը չի հանձնել և նույն թվականի սեպտեմբեր ամսին նրան ազատել են աշխատանքիցՔ Նրա ազատվելուց հետո ինքը կառավարչից դարձյալ պահանջել է կարգավորել ժամկետանց վարկերի մարումներըՔ Սակայն նրա կողմից որևէ միջոցներ այդ ուղղությամբ չեն ձեռնարկվելՔ 2009 թվականին, երբ Արսեն Առաքելյանին ազատել են աշխատանքից ու այդ առիթով մասնաճյուղում կատարվել է հանձնաժողովի մասնակիցները հայտնաբերել են, որ Համբարձում Բեգլարյանի անվամբ վարկային գործում բացակայում է բնակարանի սեփականության վկայականըՔ Երբ ինքն Արսեն Առաքելյանին հարցրել է թե ուր է վկայականը, նա պատասխանել է, որ այդ վարկը մարված է, և վկայականն էլ հանձնվել է տիրոջըՔ Իր այն հարցին, որ եթե վարկը մարված է, այդ դեպքում համակարգչում ինչու է համակարգվում տվյալ վարկային գումարի մացորդ, Արսեն Առաքելյանը չի կարողացել պատասխանելՔ Գուցե վարկի մարումը կատարվել է, սակայն դրամարկղ չի մուտքագրվելՔ Հանձնաժողովի մասնակցի պարզվել է նաև, որ մասնաճյուղում բացակայել են թվով 23

վարկային գործերէ Մինչև աշխատանքից ազատվելը՝ Կարեն Ղասաբոլյանը մասնաձյուղի կառավարչին այդ բացակայող գործերի առթիվ գրություն է թողել, որ դրանք ինքն է ինքնագուլութ ձևակերպել և վարկերը ստացելէ:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Սահականույշ Ասատրյանն իրեն մեղավոր ճանաչեց մասնակի, և չընդունելով ներկայացված քաղաքացիական հայցը՝ ցուցմունք տվեց, որ 2008 թվականի օգոստոսին, երբ Կարեն Ղասաբոլյանն ատեստացիան չի անցել, գործերն հանձնելու և ընդունելու ժամանակ իմացել է, որ ոմաք գումարներ են տվել Կարեն Ղասաբոլյանին, իսկ նա չի մուծել: Այդ ժամանակ դեռ չի իմացել թե ինչ կեղծիքներ են կատարվել: Արսեն Առաքելյանը հանդիպել է Կարեն Ղասաբոլյանի հետ, ասել, որ բողոքներ կան գործերի հետ կապված: Նարինե Նավասարդյանը, Արա Մկրտչյանը և ինքը նույնպես ասել են, որ մարդիկ բողոքում են Կարեն Ղասաբոլյանից, ասում են, որ գումարները տվել են, սակայն մուծումներ չեն կատարվել: 2009 թվականին վարչությունից եկել են ստուգումների, և այդ ժամանակ էլ պարզվել է, որ կեղծ վարկեր են ստացվել, կեղծ գործարքներ են եղել, գումարներ չեն մուծվել և այլն: Ինքը կատարել է իր աշխատանքը և չի էլ իմացել, որ ինչ-որ տեղ ինչ-որ մի բան է կատարվել:

Աշխատանքի ընթացքում՝ 3 կամ 4 դեպքում Արսեն Առաքելյանն իրեն հանձնարարել է նրա բարեկամների վարկային գումարները Կարեն Ղասաբոլյանին տալ, քանի որ այդ անձիք չեն ցանկանում իջնել դրամարկղ: Կարեն Ղասաբոլյանն իջել է ներքև, ասել, որ այդ մարդիկ չեն ցանկանում իջնել ներքև, քանի որ ինչ-որ մարդիկ կան և չեն ուզում իրենց տեսնեն: Քանի որ Արսեն Առաքելյանը տեղյակ է եղել՝ ինքը գումարները տվել է Կարեն Ղասաբոլյանին: Ղասաբոլյանը կատարել է, որ կառավարիչի հետ հարաբերությունները չսրի: Եթե չկատարեր կառավարիչի հանձնարարությունը, հնարավոր է, որ աշխատանքից ազատվեր: Իր մեղավորությունը կայանում է լոկ դրանում: Իր գործողություններում կան թե աշխատանքային, թե կանոնադրային խախտումներ: Եղել են դեպքեր, երբ Կարեն Ղասաբոլյանը ուրիշի անվամբ գումար է ստացել է, ապա որոշ ժամանակ անց վերադարձել և մեկ այլ անձի վարկի մուծումներ է կատարել, սակայն ինչ գումարով է կատարել մուծումները՝ չի կարող ասել:

Ինչ վերաբերում է գումարներ յուրացնելուն, ապա ինքը որևէ միտումնավոր կապ չի ունեցել և միայն վերջում է իմացել, որ մասնաձյուղում նման կեղծիքներ են կատարվել: Մինչ այդ վստահություն է եղել, Կարեն Ղասաբոլյանը վարկառուներից փողը վերցրել է, բերել մուծել է, կասկածելի ոչինչ չի նկատել: Վարկառուների գումարներ մուծել է, սակայն վարկառուի գումար դրամարկղից չի վերցրել: Որևիցե մեկից գումարներ յուրացնելու առաջարկություն չի ստացել: Իր պարտականությունների մեջ մտել է կենսաթոշակների վճարումը, ավանդային հաշիվների բացումը, կոմունալ վճարների ընդունումը, վարկերի գումարների բաց թողումը և վարկերի մարման գումարների ընդունումը: Իրեն հատկացված դրոշմակնիքը եղել 122 համարինը և բոլոր այն անդորրագրերը, որոնք կնքված են իր կնիքով՝ գումարները բաց են թողնվել վարկառուներին: Գուրգեն Առաքելյանն անձամբ է ստացել գումարը, նախաքննության ժամանակ չի հիշել, իսկ դատարանում հիշել է: Էլմիրա Վարդանյանի, որը Կարեն Ղասաբոլյանի մայրն է, վարկը ստացել է Կարեն Ղասաբոլյանը: Արման Ալեքսանյանը՝ Կարեն Ղասաբոլյանի մորաքրոջ տղան, անձամբ է ստացել գումարը: Օնիկ Ստեփանյանին ինքը չի վճարել: Համբարձում Բեգլարյանի և Սարգիս Շահբազյանի մասին լսել է հանձնման և ընդունման ժամանակ, երբ նրանք հայտնել են, որ գումարները տվել են, սակայն մարում չէր կատարվել: Քնքուշ Մելքոնյանը, Թամարա Համբարձումյանը, Էդուարդ Բարեղամյանը և Քանաքարա Ստեփանյանն անձամբ են ստացել գումարները: Բենիկ

Ստեփանյանը երեք դրվագով էլ անձամբ է ստացել: Սահականույշ Ասատրյանը նշեց նաև, որ իր գործողություններում բացակայել է միասնական դիտավորությունը և յուրաքանչյուր դրվագում հանձնարարությունները կատարել է հարաբերությունները չսրելու, աշխատանքից չազատվելու նպատակով միայն:

«Հ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքներում ամբաստանյալ Արա Մկրտչյանն իրեն մեղավոր չճանաչեց, և չընդունելով ներկայացված քաղաքացիական հայցը՝ ցուցմունք տվեց, որ 1996 թվականից աշխատել է «Հայխնայբանկում» նախ որպես ինկասատոր, իսկ 2005 թվականից՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի դրամարկղում: Քանի որ մասնաճյուղում սկսել են վարկեր տրամադրել ու միայն մեկ վարկային գործակալ էր աշխատում և ծանրաբեռնվածության պատճառով չէր հասցնում ժամանակին փաստաթղթերով զբաղվել՝ կառավարիչի բանավոր կարգադրությամբ՝ բարձրացել է երկրորդ հարկ՝ վարկային գործակալին օգնելու: Հրամանով ավագ մասնագետ էր և դրամարկղում պետք է աշխատեր: Որպես սպասարկման բաժնի մասնագետ՝ պարտավոր է եղել զբաղվել քյուշետային գանձումներով՝ ավտոմեքենաների պետհամարանիշների և տեխնիկական զննության, վարորդական վկայականների և կոմունալ վճարումների: Երբեմն՝ երբ մյուս աշխատողները թռչակների գործով են զբաղվել, ինքը նաև վարկերի մասնակի մարումներ է ընդունել: Սակայն վարկային գումարներ երբեք բաց չի թողել: 2007 թվականի դեկտեմբերին իր դատեր առողջության հետ կապված համարյա աշխատանքի չի գնացել՝ զբաղված է եղել երեխայի վիրահատության հարցերով: 2008 թվականի փետրվարին իրեն նշանակել են կառավարիչի տեղակալ՝ երեք ամիս փորձաշրջանով: 2008 թվականի մայիսին էլ հաստատվել է այդ պաշտոնում: 2008 թվականի օգոստոսին, երբ Կարեն Ղասաբօղյանին ազատել են աշխատանքից՝ ստանձնել է վարկային բաժնի պատասխանատուի աշխատանքները: Ոչ մի օժանդակություն չի կատարել և կառավարիչի հրամանով ոչ մի լումա Կարեն Ղասաբօղյանին չի տվել: Առհասարակ այդ ընթացքում դրամարկղում չի աշխատել և որևէ մեկին վարկային գումար բաց չի թողել: 129 համարի կնիքն իրեն է եղել հատկացված, սակայն կնիքների պահպանման համար անհրաժեշտ պայմաններ մասնաճյուղում չեն եղել և բոլորի կնիքները մի դարակում են դրված եղել: Նույնիսկ երբ դատեր առողջական խնդիրներով բացակայել է աշխատանքից՝ իր դրոշմակնիքը դրված է եղել նույն դարակում: Սահականույշ և Վիկտորիա Ասատրյաններին, ինչպես նաև իրեն հատկացված կնիքները նույն տեսքն ունեին, նույն գույնը և միմյանցից չեն տարբերվել: Հնարավոր է, որ շփոթված և մյուսի կնիքով կնքած լինեն: Գումարներն ընդունելիս՝ ինքը երբեք չի ստուգել, թե որ համարի կնիքն է օգտագործում: Հետևաբար իր մեղքը միայն կնիքն անփույթ պահելում է կայանում, ինքը ոչ մի օժանդակություն չի կատարել: Դավիթբեկ Դավթյանը դեռևս նախաքննության ընթացքում՝ իր հետ առերես հարցաքննվելիս խոստովանել է, որ 100.000 ՀՀ դրամն իրեն չի տվել, նույնը պնդեց նաև դատարանում: Կառավարիչի հրամանով ինքն օժանդակել է վարկային բաժնի աշխատանքը կատարելուն, այլ ոչ թե գումարների յուրացմանը: Տեղյակ չի էլ եղել, որ Կարեն Ղասաբօղյանը նման արարքներ է կատարել: Երբեք դրամարկղից որևէ մեկի անունով գումար չի ստացել և մեկ ուրիշի չի տվել: Եթե համակարգիչն է զբաղված եղել կամ ամսվա վերջ օրերին, երբ չէին հասցնում գումարներ մուտքագրել՝ եղել են վարկառուներ, որ գումարը թողել են Կարեն Ղասաբօղյանի կամ իր մոտ, իսկ իրենք էլ մուծել են գումարը դրամարկղ, ապա անդորրագիրը տվել համապատասխան անձին: Կարեն Ղասաբօղյանի ազատվելուց հետո եղել են ժամկետանց վարկեր: Ինքը զանգահարել ու կանչել է վարկառուներին, որոնց մի մասը պնդել է, որ գումար չի ստացել, մի

մասը՝ արդեն մարել է, իսկ մի մասն էլ պնդելով, որ չի ստացել՝ հետո բերել մարել է: 2008 թվականի սեպտեմբերից հետո հանդիպել է դեպքերի, երբ մարդիկ դժգոհել են, թե վարկ չեն ձևակերպել, բայց համակարգչում նրանց անունը գրանցված է: Դրանց վերաբերյալ Կարեն Ղասաբոլյանը բացատրագիր է գրել, որ ինքնակամ է ձևակերպել վարկերը: 2008 թվականի հունիս - հուլիս ամիսներին աուդիտորական ստուգում է եղել մասնաձյուղում: Ստուգվել է շուրջ 200 – 300 գործ և ոչ մի թերություն չի հայտնաբերվել: Իսկ 2009 թվականի գարնանը հայտնաբերվել են կեղծ վարկեր:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Վիկտորիա Ասատրյանն իրեն մեղավոր ճանաչեց մասնակի, և չընդունելով ներկայացված քաղաքացիական հայցը՝ ցուցմունք տվեց, որ 2008 թվականի օգոստոսին, երբ բանկում ստուգումներ են եղել ու Կարեն Ղասաբոլյանն էլ աշխատանքից ազատվել էր՝ իմացել է, որ մասնաձյուղում կեղծ վարկեր են ձևակերպվել: Մինչ այդ եղել են դեպքեր, որ Կարեն Ղասաբոլյանը մեկ ուրիշի անվամբ վարկ է ստացել, ուրիշի անունով մարել, բայց դա ժամանակի առումով անմիջապես չի եղել՝ կամ օրվա վերջում, կամ մի օր հետո կամ մեկ շաբաթ հետո: Եղել են դեպքեր, որ մարդիկ գումարը նրան են տվել, նա էլ բերել մարել է: Գումար ստանալու մեկ կամ երկու դեպք կարող է հիշել, երբ Կարեն Ղասաբոլյանն անձնագրեր էր բերում ու ասում, որ կառավարիչը գիտի: Իրենք էլ գումարը տալիս էին, քանի որ Արսեն Առաքելյանն ասել էր, որ էթե ինքն է ասել՝ դա կամ ծանոթ է, կամ բարեկամ: Նվեր թովմասյանի վարկի գումարը տվել է Կարեն Ղասաբոլյանին, քանի որ վերջինս ասել է, որ կառավարիչը տեղյակ է, իսկ Օնիկ Ստեփանյանի վարկի գումարը, նրա որդի Բենիկ Ստեփանյանին է տվել՝ Արսեն Առաքելյանի անմիջական կարգադրությամբ: Իրեն մեղավոր է ճանաչում մասնակի, քանի որ Կարեն Ղասաբոլյանի ասելով՝ ամեն անգամ գումարները տվել է նրան ու չի ճշտել իրոք կառավարիչը տեղյակ է թե ոչ: Վիկտորիա Ասատրյանը նշեց նաև, որ իր գործողություններում նույնպես բացակայել է Վիկտորիա Ասատրյանը նշեց նաև, որ իր գործողություններում նույնպես բացակայել է միասնական դիտավորությունը և յուրաքանչյուր անգամ պարզապես հանձնարարություն է կատարել:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Պապ Մանուկյանն իրեն մեղավոր չճանաչեց, սակայն ընդունելով ներկայացված քաղաքացիական հայցը՝ հայտարարեց, որ նախաքննության ժամանակ տված ցուցմունքներն իրականությանը չեն համապատասխանում և ցուցմունք տվեց, որ 2008 թվականին ցանկանալով նավը որպես ռեստորան օգտագործել՝ դիմել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի կառավարիչ Արսեն Առաքելյանին՝ բնակարանը գրավ դնելու դիմաց վարկ ստանալու համար: Վերջինս պատասխանել է, որ մասնաձյուղում այդպիսի վարկեր չեն տրամադրվում: Դրանից հետո դիմել է «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ» բանկին, որտեղ իրեն պատասխանել են, որ վարկը ստանալու համար երեք կին երաշխավոր է անհրաժեշտ: այդ նպատակով վերցրել է իր կնոջ, նրա մոր և իր հարևանուհի Ալինա Սարգսյանի անձնագրերը, սակայն վարկը չի ստացվել և նա անձնագրերը հետ է վերադարձրել: Դրանից շուրջ մեկ ամիս անց ցանկացել է հեռուստացույց գնել և : Քանի որ իր անունով վարկ ուներ ձևակերպած, դրա համար էլ Ալինա Սարգսյանից նորից խնդրել է նրա անձնագիրը՝ խոստանալով, որ վարկի հետ խնդիրներ չեն առաջանալու: Սակայն հեռուստացույց չի գնել, քանի որ իր ուզածը չի եղել: Որոշել է նավ-ռեստորանի համար զազօջախ, սառնարան ու հեռուստացույց գնել, այդ նպատակով համատիրության նախագահից տեղեկանք է վերցրել Ալինա Սարգսյանի ընտանիքի կազմի մասին, իսկ իր ծանոթ

Անդրանիկ Եփրեմյանից՝ կեղծ տեղեկանք Ալինա Սարգսյանի աշխատավարձի մասին: Փաստաթղթերը տարել է «Աստղիկ» ՍՊ ընկերության տնօրեն Ռոզա Խաչատրյանի մոտ, որն էլ հայտնել է, թե դրանք պետք է ներկայացնել բանկ: Բանկում ասել են, որ վարկառուն անձամբ պետք է ներկայանա ու ստորագրի պայմանագիրը, ինչի մասին հայտնել է Ալինա Սարգսյանին: Դրանից հետո՝ տեղեկանալով, որ վարկը պատրաստ է՝ վճարել է 150.000 ՀՀ դրամի կանխավճարը, ապա գնացել է Ռոզա Խաչատրյանի մոտ, ու խնդրել երկու օրից վերցնել ապրանքները: Այդ ընթացքում ցանկացել է սպասքեղեն գնել ռեստորանի համար և զագօջախը, սառնարանն ու հեռուստացույցը հենց խանութից վաճառել է 4իրեն անձանոթ անձանց 400.000 ՀՀ դրամով: Հետագայում Սևանա լճի մակարդակը բարձրացել է, նավի մեջ ջուր է լցվել և այլևս հնարավոր չի եղել աշխատել: Վարկի գումարը մարելու համար սկսել է զբաղվել բավորական աշխատանքով նախ Աշտարակում, ապա նաև Ղարաբաղում: Հանդիպելով Ալինա Սարգսյանի տուն այցելած ԴԱՀԿ ծառայության աշխատակիցներին՝ առաջարկել է վճարել 100.000 ՀՀ դրամ, սակայն վերջիններս պատասխանել են, որ կամ գումարի կեսը, կամ ամբողջը պետք է վճարել: Ինքն աշխատել և վճարել է 386.000 ՀՀ դրամ: Այդ ընթացքում մահացել է հայրը և այլևս չի կարողացել մարումներ կատարել: Գործի նախաքննության ընթացքում քննիչ Ղարիբյանի պնդմամբ սխալ ցուցմունքներ է գրել, թե իբրև բանկի կառավարիչ Արսեն Առաքելյանից առձեռն ստացել է 600.000 ՀՀ դրամ: Հետագայում ԱԱԾ քննիչի մոտ հարցաքննության ընթացքում, վախենալով ճիշտը պատմել, նույնիսկ իր պաշտպանի ներկայությամբ պնդել է նախկին ցուցմունքները: Պապ Մանուկյանը նշեց նաև, որ կատարել է մասնակի մարումներ և խոստացավ սեղմ ժամկետում մարել վարկն ամբողջությամբ:

Բացի ամբաստանյալների մասնակի խոստովանություններից՝ նրանց մեղսագրված հանցանքները հաստատված, իսկ պատճառաբանությունները հերքված են հետևյալ ապացույցներով. Ամբաստանյալ Արթուր Թովմասյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունքներ է տվել, որ աշխատել է ԴԱՀԿ Սևանի ստորաբաժանումում՝ որպես օպերատոր: Միաժամանակ աշխատել է Սևան քաղաքում գործող կենցաղային տեխնիկայի վաճառք իրականացնող «Աստղիկ» ՍՊ ընկերության խանութում՝ որպես վաճառող 2008 թվականին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղում Մանվել Կարապետյանի անվամբ ձևակերպված այլ գրավով վարկի գումարը՝ 1.800.000 ՀՀ դրամը, վերջինս ստացել և տվել է իրեն: Այս վարկի ձևակերպման համար ինքն է խնդրել Մանվել Կարապետյանին: Նա անձամբ մասնաձյուղում ստորագրել է վարկի ձևակերպման հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, դրամարկղում ստորագրել և ստացել է վարկի գումարը ու տվել իրեն: Մանվել Կարապետյանի անվամբ վարկային գործը ձևակերպել է Կարեն Ղասաբողյանը: Վարկի ձևակերպման հետ կապված՝ Մանվել Կարապետյանի կողմից ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթեր: Նա աշխատել է «Էյ ԶԻ» գազի սպասարկման ծառայությունում: Մասնաձյուղում կատարված ստուգումների ժամանակ ինքը հայտնել է, որ այդ վարկի գումարը ստացել է ինքը և պարտավորվել է այն մարել: Նշված վարկից, տոկոսների հետ միասին, մարել է շուրջ 800.000 ՀՀ դրամ:

Իր ընկերներ՝ Ալեքսանդր Իսակովի, Մխիթար Հովհաննիսյանի, Հայկ Մնացականյանի, Ալեքսան Դավթյանի, Կարեն Առաքելյանի և Մանուկ Թովմասյանի համաձայնությամբ, նրանց անվամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղում ձևակերպվել են վարկեր և նրանց անվամբ վարկային գործերը կազմել է Կարեն Ղասաբողյանը: Նշված անձանցից ոչ ոք մասնաձյուղ չի գնացել և որևէ փաստաթուղթ չի ստորագրել: Այդ վարկային գործերը կազմելիս՝ Կարեն Ղասաբողյանը նրանցից ոչ մեկին չի տեսել: Նշված անձանց անվամբ ապառիկ կարգով

կենցաղային տեխնիկա ձեռք բերելու առթիվ վարկեր ձևակերպելիս՝ որոշ փաստաթղթեր հենց նրանք են տվել իրեն, իսկ աշխատավարձի չափի մասին տեղեկանքներն ինքն է կեղծել՝ ստորագրել և կնքել «Աստղիկ» ՍՊ ընկերության կնիքով, որոնք տվել է Կարեն Ղասաբօղյանին, իսկ նա էլ դրանց հիման վրա կազմել է վարկային գործերը 2006 թվականին ամուսանցել է Կարեն Ղասաբօղյանի քրոջ՝ Կարինե Ղասաբօղյանի հետ և իրենք բնակվել են Սևան քաղաքի Նալբանդյան 45/22 հասցեում գտնվող, կնոջը պատկանող բնակարանում Բնակարանը գտնվել է անմխիթար վիճակում և բացի այդ էլ իր ու կնոջ աշխատավարձը հազիվ բավականացրել է ծայրը ծայրին հասցնելու համար և Քանի որ գումարի խիստ կարիք են ունեցել՝ ինքը Կարեն Ղասաբօղյանին խնդրել է վերը նշված իր ընկերների անուններով մասնաձյուղում վարկեր ձևակերպել՝ իմանալով, որ հնարավոր է առանց ապրանքը վերցնելու, խանութի հաշվին փոխանցված գումարները կանխիկ ձևով ստանալ և ծախսել իր ընտանիքի կարիքների համար և Քանի որ ինքը «Աստղիկ» ՍՊ ընկերության խանութի աշխատակից էր, որը պայմանագրային հարաբերությունների մեջ է գտնվել բանկի մասնաձյուղի հետ, ուստի մասնաձյուղի աշխատակիցները ճանաչել և վստահել են իրեն։ Բացի դա, «Աստղիկ» ՍՊ ընկերության տնօրեն Ռոզա Խաչատրյանը նախապես զանգել և զգուշացրել է բանկի աշխատակիցներին և Նշված վարկերի գծով գումարները խանութի հաշվին փոխանցելուց հետո Ռոզա Խաչատրյանը ստորագրել է բանկային չեկը ու տվել իրեն, որի հիման վրա էլ ինքը խանութի հաշվեհամարին փոխանցված գումարները ստացել է և Նշված վարկերի գծով փոխանցված գումարների 3%-ը մնացել է խանութի հաշվեհամարին և Գումարը խանութի հաշվեհամարից հանելուց հետո ինքն այն տվել է Ռոզա Խաչատրյանին, որն էլ գումարի 4%-ը վերցրել, իսկ մնացածը կանխիկ ձևով տվել իրեն և Այսինքն խանութից ապրանքի ապառիկ վաճառք չի կատարվել, խանութից ապրանք դուրս չի եկել և ինքը հիշատակված վարկերի գծով միայն կանխիկ գումարն է վերցրել, որի մասին գիտեր նաև Կարեն Ղասաբօղյանը և Բացի դրանից, ինքը գիտեր, որ վերջինս նույնպես կենցաղային տեխնիկա ձեռք բերելու վարկերով գումարներ է ստացել «Աստղիկ» ՍՊ ընկերությունից և այդ վարկերով տեխնիկա ոչ ոք չի ստացել և Եղել են դեպքեր, որ գումարներն ինքն էլ տվել Կարեն Ղասաբօղյանին և Քանի որ նշված վարկերն ամբողջությամբ չի կարողացել մարել՝ Կարեն Ղասաբօղյանը զանգահարել է իրեն ու ասել, որ վարկերը ժամկետանց են դառնում և առաջարկել է գտնել մեկին ու նրա անվամբ վարկ ձևակերպել և այդ վարկի գումարով մարումներ կատարել մնացած վարկերի գծով և Այդ խոսակցության օրը խանութում է գտնվել Արսեն Մանուկյանը, որը մինչ այդ արդեն համապատասխան փաստաթղթեր էր ներկայացրել «Աստղիկ» ՍՊ ընկերությունից ապառիկ կարգով ապրանք վերցնելու համար։ Ինքն այդ փաստաթղթերը ներկայացրել էր բանկի մասնաձյուղ՝ վարկը ձևակերպելու համար, սակայն Արսեն Մանուկյանի ապառիկի ձևակերպումը աշխատավարձի ցածր լինելու պատճառով չի ստացվել և Քանի որ Արսեն Մանուկյանը խանութում է եղել ինքը խնդրել է նրա անվամբ վարկ ձևակերպելու համար, խոստանալով այն մարել և Վերջինս համաձայնել է և Կարկը ձևակերպել է Կարեն Ղասաբօղյանը և Իր ընկերների և հորեղբոր որդու անվամբ ձևակերպած վարկերի մարման նպատակով ինքը որոշակի գումարներ է տվել Կարեն Ղասաբօղյանին, որպեսզի նա իր փոխարեն այդ վարկերի գծով մարումներ կատարի և Մասնավորապես Մխիթար Հովհաննիսյանի վարկի գծով տարբեր ժամանակներում Կարեն Ղասաբօղյանին է տվել գումարներ և իր հաշվարկով այդ վարկը արդեն պետք է մարված լիներ և Ի դեպ թե իր, թե Մխիթար Հովհաննիսյանի հարցումներին Կարեն Ղասաբօղյանը պատասխանել է, որ վարկն արդեն մարված է, սակայն ինչպես հետո իմացել է, Մխիթար Հովհաննիսյանի անվամբ վարկով դեռևս 180.000 ՀՀ դրամ մնացորդ կա և Փաստորեն Կարեն Ղասաբօղյանն ամբողջական մարումներ չի կատարել և գումարը

յուրացրել էՖ Ալեքսանդր Իսկաովի, Կարեն Առաքելյանի և Մանուկ Թովմասյանի անվամբ վարկերը մարվել ենՖ Հայկ Մնացականյանի անվամբ ձևակերպված վարկը` 640.000 ՀՀ դրամ, ինքը ստացել է կանխիկ, խանութի հաշվեհամարից, կեսը վերցրել է իրեն, իսկ մյուս կեսը` 320.000 ՀՀ դրամը տվել Կարեն ՂասաբոլյանինՖ

Հիշատակված վարկերի մարումների գծով, ինքը Կարեն Ղասաբոլյանից վճարման անդորրագրեր չի պահանջելՖ Իր անվամբ մասնաձյուղում ձևակերպված այլ գրավով վարկի գումարը կազմել է 1.800.000 ՀՀ դրամ, որից ինքն անձամբ Կարեն Ղասաբոլյանին տվել է 500.000 ՀՀ դրամ և վերցրել անդորրագիր, սակայն մասնաձյուղի ստուգումներով պարզվել է, որ հիշյալ 500.000 ՀՀ դրամից Կարեն Ղասաբոլյանը յուրացրել է 380.000 ՀՀ դրամըՖ Արտակ Թորոսյանը ցանկացել է ապառիկով ստախցիկ ձեռք բերել իրենց խանութից, սակայն նրա ուզածը այդ ժամանակ չի եղել: Ռոզա Խաչատրյանը խոստացել է մի քանի օրից այն բերել, իսկ այդ ընթացքում Արտակ Թորոսյանը պատրաստել է ապառիկի փաստաթղթերը և ներկայացրել Կարեն Ղասաբոլյանին:

Հետագայում փոշմանել է և իրեն խնդրել ոչնչացնել փաստաթղթերըՖ Ինքը զանգահարել է Կարեն Ղասաբոլյանին և հարցրել, թե կարող է նշված փաստաթղթերը ոչնչացնել, որին Կարեն Ղասաբոլյանը պատասխանել է, թե արդեն ոչնչացրել էՖ Սակայն ինչպես հետո պարզվել է` Կարեն Ղասաբոլյանն իրեն խաբել, Արտակ Թորոսյանի անվամբ ապառիկը ձևակերպել է առանց նրա գիտության, և հավանաբար գումարը յուրացրել էՖ

Եղել են դեպքեր, երբ հենց վարկերի գծով «Աստղիկ» ՍՊ ընկերության հաշվեհամարին փոխանցված գումարներն ինքը ստացել ու տվել է Կարեն Ղասաբոլյանին, քանի որ վերջինս Ռոզա Խաչատրյանի հետ այս հարցում փոխհամաձայնության է եկել և վերջինիս հանձնարարությամբ, մասնաձյուղում եղած խանութի հաշվեհամարից կենցաղային վարկերի գծով խանութի հաշվին փոխանցված գումարները ստանալով, ինքը տվել է Կարեն ՂասաբոլյանինՖ Այդ գործարքներից Ռոզա Խաչատրյանը ստացել է գումարի 10%-ը, որից 3%-ը մնացել է խանութի հաշվեհամարին, իսկ 7%-ը կանխիկ վերցրել էՖ Ինքն անձամբ Ռոզա Խաչատրյանի հանձնարարությամբ 3-4 անգամ խանութի հաշվեհամարից ստացել է գումարներ և տվել Կարեն ՂասաբոլյանինՖ Եղել են նաև դեպքեր, որ Ռոզա Խաչատրյանն անձամբ է գումար հանել հաշվեհամարից ու տվել Կարեն Ղասաբոլյանին, կամ ինքն ստացել է գումարը, տվել Ռոզա Խաչատրյանին, Իսկ վերջինս էլ Կարեն Ղասաբոլյանի հետ լուծել են իրենց գումարային հարցերըՖ Կարեն Ղասաբոլյանը վարկ է ձևակերպել նաև իր հորեղբոր որդի Նվեր Թովմասյանի անվամբ և անձամբ ստացել այդ գումարըՖ

2008 թվականի սկզբներին իրեն զանգահարել է Կարեն Ղասաբոլյանը և ասել, որ գտնի ծանոթ մեկին, որի անունով կարողանա վարկ ձևակերպելՖ Թե դա Կարեն Ղասաբոլյանին ինչի համար էր անհրաժեշտ, ինքը չգիտիՖ Այդ ժամանակ ինքը պատահական հանդիպել է Կարսեր գյուղի բնակիչ, իր բանակի ընկեր Գուրգեն Առաքելյանին և խնդրել վերջինիս անվամբ վարկ ձևակերպել` պատճառաբանելով, որ ինքը վարկառու է և չի կարող իր անվամբ ձևակերպելՖ Գուրգեն Առաքելյանը չի մերժել և նրանք գնացել են «ՎՏԲ -Հայաստան բանկ» Սևանի մասնաձյուղ, հանդիպել են Կարեն Ղասաբոլյանին, որտեղ էլ Գուրգեն Առաքելյանը պարզելով, որ գումարը Կարեն Ղասաբոլյանին է հարկավոր` հրաժարվել է և ոչ մի փաստաթուղթ չի ստորագրելՖ Սակայն որոշ ժամանակ անց Գուրգեն Առաքելյանը զանգահարել է իրեն և ասել, որ Կարեն Ղասաբոլյանը նրա անվամբ վարկ է ձևակերպել:

Վերլուծելով ամբաստանյալ Արթուր Թովմասյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքները, դրանք համադրելով այլ ապացույցների հետ` դատարանը գտնում է, որ նրա դատաքննական ցուցմունքներն իրականությանը չեն համապատասխանում և քրեական պատասխանատվությունից ու պատժից խուսափելու հարցում ամբաստանյալ Կարեն Ղասաբոլյանին օգնելու նպատակ

են հետապնդում:

Հետևաբար՝ դատարանն առավել արժանահավատ է համարում ամբաստանյալ Արթուր Թովմասյանի նախաքննական ցուցմունքները, որոնք համապատասխանում են գործով ձեռք բերված և դատաքննությամբ հաստատված մյուս ապացույցներին:

Տուժող Արսեն Մանուկյանը ցուցմունք տվեց, որ մինչև 2008 թվականի փետրվարն աշխատել է «Հայր և որդի Խալաֆյաններ» ՍՊ ընկերությունում՝ որպես վարորդ: Աշխատանքի բերումով ծանոթացել է «Աստղիկ» ՍՊ ընկերության աշխատակից Արթուր Թովմասյանի հետ: 2008 թվականի ապրիլին ցանկացել է «Աստղիկ» ՍՊ ընկերությունից ձեռք բերել կենցաղային տեխնիկա և իր մտադրության մասին հայտնել ընկերության տնօրեն Ռոզա Խաչատրյանին: Վերջինս տեղեկացրել է ապառիկ ձևակերպելու համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին, և քանի որ անձնագիրն իր մոտ էր՝ այն անմիջապես տվել է Արթուր Թովմասյանին՝ մինչև մնացած փաստաթղթերի ներկայացնելը: Ռոզա Խաչատրյանը և Արթուր Թովմասյանը վստահելով իրեն՝ հենց նույն պահին իրեն են տվել լվացքի մեքենա, բազմոց և տեսախցիկ: Հաջորդ օրն անհրաժեշտ փաստաթղթերը տարել է խանութ, հանձնել Արթուր Թովմասյանին, որն էլ խոստացել է գործարքն ամբողջությամբ ձևակերպել, որից հետո միայն ինքը կգնա ու կստորագրի ապառիկի հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը: Ավելի ուշ Արթուր Թովմասյան իրեն հայտնել է, որ բանկերը հրաժարվում են գործարքը ձևակերպել, քանի որ ինքը երկու տարբեր բանկերի միջոցով ապառիկ ուներ ձևակերպված, որոնք չնայած ուշացումով, սակայն մարել էր ամբողջությամբ: Դրանից որոշ ժամանակ անց Արթուր Թովմասյանը զանգահարել է իրեն և հայտնել, որ ինքը պետք է գնա «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի աշխատակից Կարեն Ղասաբոլյանի մոտ: Վերջինս իրեն ինչ-որ փաստաթղթեր է փոխանցել, որոնք առանց կարդալու, Կարեն Ղասաբոլյանի առաջարկով, ինքը ստորագրել է: Հետո Կարեն Ղասաբոլյանի հետ մոտեցել են դրամարկդին, ինքը գանձապահին հանձնել է փաստաթղթերը, ստորագրել վերջինիս կողմից տրված փաստաթղթերը և գումար ստացել: Գումարը չի հաշվել, սակայն փաստաթղթի վրա գրված է եղել մեկ միլիոն: Դրամարկդից հեռանալուց հետո Կարեն Ղասաբոլյանը պահանջել է գումարը հանձնել, սակայն ինքը հրաժարվել է: Այդ ժամանակ Կարեն Ղասաբոլյանը զանգահարել է Արթուր Թովմասյանին և լսափողը տվել իրեն: Արթուր Թովմասյանը նույնպես ասել է, որ գումարը պետք է տալ Կարեն Ղասաբոլյանին, որն էլ վերցնելով դրա կեսը՝ հայտնել է, որ մնացածը պետք է փոխանցել Արթուր Թովմասյանին: Վերջինս հայտնել է, որ ստացած գումարն իր անունով ձևակերպված գյուղատնտեսական վարկի գումար է, որն անհրաժեշտ է եղել Արթուր Թովմասյանին և Կարեն Ղասաբոլյանին: Արթուր Թովմասյանը պարտավորվել է երեք օրից մարել վարկի գումարը, որի մասին իր պահանջով նաև պարտավորագիր է գրել:

Հետագայում՝ 2008 թվականի ամռանը, իրեն զանգահարել են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից և հետաքրքրվել, թե ինչու ինքը չի մարում վարկի գումարները: Պատասխանել է, որ այդ վարկը ստացել են Կարեն Ղասաբոլյանը և Արթուր Թովմասյանը, իսկ դրանից մեկ կամ երկու օր անց, պատահական հանդիպելով Կարեն Ղասաբոլյանին, հետաքրքրվել է վարկի մասին, իսկ վերջինս պատասխանել է, որ նա գործ չունի և այդ հարցով պետք դիմել Արթուր Թովմասյանին: Ավելի ուշ Կարեն Ղասաբոլյանից իմացել է, թե իբրև վարկն ամբողջությամբ մարված է, և քանի որ բանկից իրեն այլևս չէին անհանգստացնում՝ հավատացել է Կարեն Ղասաբոլյանին:

Անդրադառնալով նախաքննության ընթացքում իր տված ցուցմունքի այն հատվածին, թե Կարեն Ղասաբոլյանի տված փաստաթղթերը տարել է բանկի կառավարիչի աշխատասենյակ, որն էլ ստորագրել է դրանք՝ տուժող Արսեն Մանուկյանը նշեց, որ հիշյալ ցուցմունքը

տվել է հիվանդանոցից դուրս գրվելուց հետո և հնարավոր է, որ շփոթած լինի:
Տուժող Արսեն Մանուկյանը քաղաքացիական հայց չի ներկայացրել:

Տուժող Մանվել Կարապետյանը ցուցմունք տվեց, որ 2008 թվականի մարտին փողոցում պատահական հանդիպել է իր վաղեմի ծանոթ Արթուր Թովմասյանին: Զրույցի ընթացքում վերջինս ասել է, որ նրան վարկ է անհրաժեշտ, սակայն արդեն ձևակերպած վարկ ունի: Առաջարկել է վարկ ձևակերպել իր անունով՝ խոստանալով կատարել մարումները և ավելացրել, որ գրավ է դրվելու նրա կամ տունը կամ ավտոմեքենան: Ինքը համաձայնել և դրանից մի քանի օր անց Արթուր Թովմասյանին է տվել վարկի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ բացի աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքից, քանի որ այն պետք է վերցնել Երևանից: Պայմանավորված օրը Արթուր Թովմասյանի հետ գնացել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղ, մտել Կարեն Ղասաբօղյանի մոտ և ձևակերպել վարկը: Առանց կարդալու ստորագրել է փաստաթղթերը, որից հետո Կարեն Ղասաբօղյանը փաստաթղթերը տարել է մասնաճյուղի կառավարիչ Արսեն Առաքելյանի աշխատասենյակ՝ ստորագրելու և կնքելու համար: Այնուհետև Արթուր Թովմասյանի հետ մոտեցել են դրամարկղին, ներկայացրել իր անձնագիրը և Կարեն Ղասաբօղյանի տված անդորրագրերը, ստացել 1.800.000 ՀՀ դրամ, որն էլ նույն պահին ամբողջությամբ վերցրել է Արթուր Թովմասյանը: Հետագայում՝ 2009 թվականին, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից 1.300.000 ՀՀ դրամ ժամկետանց վարկի և 240.000 ՀՀ դրամ տոկոսագումարի մասին ծանուցագիր է ստացել: Հանդիպել է Արթուր Թովմասյանին, որն էլ պատճառաբանել է, թե գումար չի ունեցել վարկը մարելու համար: Միասին գնացել են բանկ, որտեղ Արթուր Թովմասյանը պարտավորագիր է գրել՝ վարկը մինչև 2010 թվականի մարտը մարելու վերաբերյալ:
Տուժող Մանվել Կարապետյանը քաղաքացիական հայց չի ներկայացրել:

Տուժող Արման Ղարիբյանը ցուցմունք տվեց, որ 2008 թվականի ապրիլի 23-ին գնացել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղ՝ իր ավտոմեքենան գրավ դնելու և վարկ վերցնելու համար: Բանկում դիմել է Կարեն Ղասաբօղյանին՝ հայտնելով, որ իրեն անհրաժեշտ է շուրջ մեկ միլիոն ՀՀ դրամ: Կարեն Ղասաբօղյանը խոստացել է վարկը ձևակերպել, պայմանով, որ ինքը վերցնի մեկ ու կես միլիոն ՀՀ դրամ և 500.000 ՀՀ դրամը փոխանցի Կարեն Ղասաբօղյանին, որն էլ հետագայում կմարի այդ գումարը: Վստահելով Կարեն Ղասաբօղյանին՝ համաձայնել է, և նրան տալով իր ավտոմեքենայի տեխնիկական գրքույկն ու իր անձնագիրը՝ շուրջ մեկ ժամից վերադարձել է բանկ, առանց կարդալու ստորագրել Կարեն Ղասաբօղյանի տված փաստաթղթերը, ապա դրամարկղից ստանալով 1.500.000 ՀՀ դրամ՝ բարձրացել է վերջինս աշխատասենյակ ու նրան տվել 500.000 ՀՀ դրամ: Կարեն Ղասաբօղյանը, մեկ անգամ ևս հավաստիացնելով, թե կմարի վարկի այդ մասը, ժամանակացույց է տվել, ըստ որի 2008 թվականի մայիսի 23-ից մինչև 2010 թվականի ապրիլի 23-ն ընկած ժամանակահատվածում ինքը պետք է յուրաքանչյուր ամիս մուծի 62.500 ՀՀ դրամ: Դրանից որոշ ժամանակ անց ինքը մեկնել է Ռուսաստան, որտեղից գումարներ է ուղարկել հարազատներին, իսկ նրանք էլ մուծումներ են կատարել բանկում: 2009 թվականի հունվարին, բանկից ծանուցագիր ստանալով, իմացել է, որ Կարեն Ղասաբօղյանը որևէ մարում չի կատարել, գտնվում է կալանքի տակ, և ամբողջ գումարը՝ 1.500.000 ՀՀ դրամը, ինքը պետք է մարի: Տուժող Արման Ղարիբյանը քաղաքացիական հայց չի ներկայացրել:

Տուժող Վալիկո Գևորգյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ աշխատել է «Նորայրուսին» ՍՊ

ընկերությունում՝ որպես մատուցող «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի միջոցով նախկինում ապառիկով գնել է հեռուստացույց և ավտոմեքենա, որոնց գործարքների ընթացքում մտերմացել է այդ բանկի վարկային բաժնի աշխատակից Կարեն Ղասաբոլյանի հետև Ֆինանսական խնդիրները լուծելու համար որոշել է 500.000 ՀՀ դրամ վարկ վերցնել և դիմել է Կարեն ՂասաբոլյանինՎերջինս հայտնել է, որ նրան էլ է գումար հարկավոր, սակայն իրավունք չունի վարկ ձևակերպել՝ քանի որ նա բանկի աշխատակից է: Առաջարկել է 500.000 ՀՀ դրամի փոխարեն վերցնել 1.500.000 ՀՀ դրամ՝ խոստանալով մարել գումարի համապատասխան մասնաբաժինը՝ 2/3-ը: Կարեն Ղասաբոլյանն ասել է նաև, որ բնակարան է գրավ դնելու և չմարելու դեպքում նրա բնակարանի հետ են խնդիրներ առաջանալու: Պայմանավորվել են հանդիպել հաջորդ օրը և կատարել ձևակերպումները: Հաջորդ օրը՝ 2008 թվականի մարտի 04-ին, ինքը գնացել է բանկ, հանդիպել Կարեն Ղասաբոլյանին, նրա հետ մոտեցել դրամարկին և ինքը, ստորագրելով 1.500.000 ՀՀ դրամ վարկի ստացականը, ստացել է գումարը, որից 1.000.000 ՀՀ դրամը տալով Կարեն Ղասաբոլյանին՝ 500.000 ՀՀ դրամը վերցրել է իրեն: Ըստ ժամանակացույցի՝ ինքը չորս ամիս 28.500 ՀՀ դրամ է տվել Կարեն Ղասաբոլյանին, որպեսզի նա էլ ավելացնելով 57.000 ՀՀ դրամ՝ կատարի համապատասխան մուծումները: Հերթական անգամ գնացել է բանկ, սակայն Կարեն Ղասաբոլյանին չգտնելով՝ որոշել է անձամբ կատարել իր մասով մարումը, բայց բանկի աշխատակիցներից տեղեկացել է, որ ոչ ժամանակին և քիչ կատարված մուծումների արդյունքում մեծ տոկոսագումարներ են կուտակվել: Դրանից հետո հանդիպել է Կարեն Ղասաբոլյանին, որն էլ պահանջել է կատարել իր մասի մուծումները և չմտածել մնացածի մասին: Հանդգնված լինելով, որ Կարեն Ղասաբոլյանի բնակարանն է գրավադրված, և մուծումներ չկատարելու դեպքում նա է տուժելու՝ դրանից հետո ամեն ամիս անձամբ կատարել է իր մասի մարումները: Հետագայում տեղեկանալով, որ իր մուծումները ոչ թե մայր գումարից է մարվելու, այլ առաջացած տոկոսից՝ մուծում չի կատարել, ապա հանդիպելով բանկի կառավարիչ Արսեն Առաքելյանին՝ պատմել է ողջ եղելությունը: Վերջինիցս իմացել է նաև, որ վարկի դիմաց գրավադրված է իր ավտոմեքենան, որն էլ դեպ ինքը վաղուց վաճառել էր: Հետագայում բազմիցս հանդիպել է Կարեն Ղասաբոլյանին և պահանջել, որ նա վարկը մարի, իսկ վերջինս էլ ամեն անգամ հավաստիացրել է, որ անհանգստանալու կարիք չկա: Տուժող Վալիկյ Գևորգյանը քաղաքացիական հայց չի ներկայացրել:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Կամո Պետրոսյանն իր ցուցմունքում նշեց, որ բանկին պատճառվել է առանձնապես խոշոր չափերի նյութական վնաս: Ներկայացրվել է քաղաքացիական հայց, որպես հանցագործությամբ պատճառված վնաս, որը պետք է համապարտության կարգով բռնագանձվի ամբաստանյալներից: Հիշյալ գումարի մեջ մտնում են վարկային պայմանագրերի հետևանքով առաջացած բոլոր վնասները: Եթե նորմալ պայմաններով վարկը տրամադրվեր, ապա բանկը համապատասխան շահույթ կատարար, սակայն կատարվել է հանցագործություն և հիմնավորվել է, որ հանցագործությամբ բանկին պատճառվել է վնաս: Հաշվարկը կատարվել է նախաքննության մարմնի կողմից հարցում կատարելու օրվա դրությամբ, իսկ ինչ վերաբերում է բանկի վնասներին, ապա այն դեռ շարունակում է վնասներ կրել:

Անդրադառնալով ոչ իրենց մեղքով «անբարեխիղճ վարկառուների ցուցակում» հայտնված անձանց՝ Կամո Պետրոսյանը նշեց, որ քրեական գործի հանգամանքները դատավճռով հաստատվելուց հետո, երբ կիմնավորվի, որ այլ անձանց անունով վարկեր են ձևակերպել և ստացել, ապա այդ հարցի լուծումը կտրվի, քանի որ անբարեխիղճ վարկառուների հաշվառումը մեկ միասնական ծրագրով է կատարվում և ղեկավարվում է ՀՀ Կենտրոնական բանկի

կողմից:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Կանոն Պետրոսյանը դատաքննության ընթացքում քաղաքացիական հայց է ներկայացրել՝ խնդրելով ամբաստանյալներ Կարեն Ղասաբոլյանից և Արթուր Թովմայանից հոգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 10.055.533,2 ՀՀ դրամ, ամբաստանյալներ Կարեն Ղասաբոլյանից, Արսեն Առաքելյանից, Նարինե Նավասարդյանից և Վիկտորիա Ասատրյանից հոգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 6.293.352,4 ՀՀ դրամ, ամբաստանյալներ Կարեն Ղասաբոլյանից, Արսեն Առաքելյանից, Նարինե Նավասարդյանից և Արա Սկրտչյանից հոգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 6.543.210,1 ՀՀ դրամ, Կարեն Ղասաբոլյանից, Արսեն Առաքելյանից, Նարինե Նավասարդյանից և Սահականույշ Ասատրյանից հոգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 38.140.625,3 ՀՀ դրամ, ինչպես նաև ամբաստանյալ Պապ Մանուկյանից հոգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության բռնագանձել 234.198,1 ՀՀ դրամ՝ որպես քրեական օրենսգրքով արգելված արարքի հետևանքով պատճառված վնաս:

Վկա Էվելինա Ալեքսանյանը ցուցմունք տվեց, որ 2006 թվականին ապառիկ կարգով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի միջոցով «Աստղիկ» ՍՊ ընկերությունից ծեռք է բերել հեռուստացույց, որի գումարը շուրջ մեկ տարի անց ամբողջությամբ մարել է: Դրանից բացի ինքն այլևս այդ բանկի հետ գործարք չի կատարել: 2009 թվականի օգոստոսին դատարանից ծանուցագիր է ստացել այն մասին, որ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունը հայց է ներկայացրել դատարան՝ իրենից 146.428,30 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջով: Հայցում նշած է եղել, թե իբրև ինքը 2008 թվականին բանկից 240.000 ՀՀ դրամ վարկ է վերցրել: Քանի որ ինքն այդ վարկից տեղյակ չի եղել՝ դիմել է ոստիկանություն:

Վկա Թամարա Համբարձումյանը ցուցմունք տվեց, որ 2007 թվականի ամռանն իր հարևաններ Էդուարդ Բարեղամյանի և Քնքուշ Մելքոնյանի հետ «Ֆինքա» վարկային կազմակերպությունից, առանց գրավի, ստացել են 170.000 ՀՀ դրամ վարկ: Էդուարդ Բարեղամյանը ստացած գումարը տվել է համազյուղացի Բենիկ Օնիկի Ստեփանյանին, որն էլ հետագայում կատարել է վարկի մարումները: 2008 թվականի գարնանը Բենիկ Ստեփանյանը հայտնել է, որ իրենց վարկերը տեղափոխել են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղ, և իրենք պետք է գնան բանկ ու որոշակի փաստաթղթեր ստորագրեն, որպեսզի դրանից հետո վճարումները կատարեն այդ բանկում: Բենիկ Ստեփանյանի հետ տաքսիով գնացել են բանկ ու մտել Կարեն Ղասաբոլյանի աշխատասենյակ: Վերջինս վերցնելով իր անձնագիրը՝ փաստաթղթեր է տվել, որոնք առանց կարդալու ինքը ստորագրել է: Կարեն Ղասաբոլյանն իր անձնագրով դրամարկղից գումար է ստացել, որի անդորրագիրն ինքը և ստորագրել է: Դրանից հետո Բենիկ Ստեփանյանն իրեն ուղարկել է տուն, իսկ շուրջ մեկ տարի անց բանկից ծանուցագիր է ստացել այն մասին, որ բանկում իր անվամբ 1.000.000 ՀՀ դրամի ժամկետանց վարկ կա, որի դիմաց ավտոմեքենա է գրավադրված: Նման կերպ Բենիկ Ստեփանյանը խաբել է նաև իր դստերը՝ Հերմինե Հովիկի Համբարձումյանին:

Վկա Քնքուշ Մելքոնյանը ցուցմունք տվեց, որ իր որդին՝ Արկադի Գրիգորի Մելքոնյանը, 2008 թվականի փետրվարին «Ֆինքա» վարկային կազմակերպությունից 250.000 ՀՀ դրամ վարկ է ստացել և պարտաճանաչ կերպով կատարել է վճարումները: 2008 թվականի ապրիլին իրենց տուն է եկել համազյուղացի Թամարա Համբարձումյանը, որն այդ նույն վարկային խմբի անդամն ու

միաժամանակ երաշխավորն էր: Վերջինս հայտնել է, որ փաստաթղթեր ստորագրելու համար իր որդին պետք է գնա «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղ, սակայն պարզելով, որ որդին տանը չէ՝ ավելացրել է, որ կարող է նաև ինքը գնալ: Միասին գնացել են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղ, մտել երկրորդ հարկում գտնվող մի աշխատասենյակ, որտեղ բացի բանկի աշխատակցից գտնվել է նաև իրենց համագյուղացի Բենիկ Ստեփանյանը: Բանկի աշխատակիցն իրեն ինչ-որ փաստաթղթեր է տվել, որոնք, առանց կարդալու, ստորագրել ու վերադարձել է գյուղ: Հետագայում՝ 2009 թվականի գարնանը, ցանկացել է «Արեգակ» վարկային կազմակերպությունից վարկ վերցնել, սակայն իրեն մերժել են՝ պատճառաբանելով, որ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունում իր անվամբ չմարված վարկ կա ձևակերպված: Տեղեկանալով այդ մասին՝ իր որդին գնացել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղ և իմացել, որ բանկի աշխատակից Կարեն Ղասաբոլյանը և Բենիկ Ստեփանյանը, կեղծիքներ կատարելու միջոցով, կեղծ վարկեր են ձևակերպել և գումարներ ստացել:

Վկա Ալինա Սարգսյանը ցուցմունք տվեց, որ Պապ Մանուկյանի հետ ապրել են հարևանությամբ և ընտանիքներով մոտ հարաբերությունների մեջ են գտնվել: 2008 թվականի ամռանը Պապ Մանուկյանը հայտնել է, որ ցանկանում է ապառիկով ապրանք վերցնել և խնդրել է իրեն հանդես գալ որպես երաշխավոր: Ինքը համաձայնել է և Պապ Մանուկյանին է տվել իր անձնագիրը: Մի քանի օր անց, ցանկանալով գրանցվել «Փարոս» ծրագրում, Պապ Մանուկյանին խնդրել է վերադարձնել անձնագիրը, որն էլ այն վերադարձնելով, ասել է, թե անձնագիրը պետք չի եկել: 2009 թվականի ապրիլին իր տուն են եկել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի աշխատակիցները և հետաքրքրվել, թե ինչու ինքը չի մարում բանկում ունեցած 600.000 ՀՀ դրամ վարկը: Վերջիններս տեղեկանալով, որ ինքն առաջին անգամն է լսում այդ վարկի մասին և բանկի հետ որևէ գործարք երբեք չի կատարել՝ կասկածանքով հարցրել են, թե ճանաչում է արդյոք Պապ Մանուկյանին: Ինքն էլ պատասխանել է, որ նա իրենց շենքում է բնակվում: Այդ մասին հարցրել է Պապ Մանուկյանին, որն էլ պատասխանել է, թե աշխատում է և վարկը շուտով կմարի: 2009 թվականի հոկտեմբերին դատարանից ծանուցագիր է ստացել՝ 800.000 ՀՀ դրամ ժամկետանց վարկի և տոկոսագումարների հետ կապված: Հայաստանից բացակայելու պատճառով չի կարողացել մասնակցել դատական նիստին, իսկ հետագայում ստացել է նաև դատարանի վճիռը, որով իրենից պետք է գումար բռնագանձվել: Քանի որ Պապ Մանուկյանը բացակայել է Սևան քաղաքից՝ նրա կնոջ հետ գնացել են բանկ, և հանդիպելով կառավարիչին՝ պարզել է, որ իր անվամբ իրոք վարկ կա ձևակերպված, և որ դրա դիմաց գրավադրված իր տան գույքը, որն ի դեպ բացարձակապես չի համապատասխանել իրականությանը: Դարձյալ զրուցել է Պապ Մանուկյանի հետ, որը խոստացել է կարգավորել այդ հարցը, սակայն որոշ ժամանակ անց, բնակարանի գույքը բռնագրավելու նպատակով, իր տուն են եկել ԴԱՀԿ ծառայողները, իսկ ավելի ուշ իր աշխատավարձից պահումներ են կատարվել:

Վկա Նվեր Թովմասյանը ցուցմունք տվեց, որ Արթուր Թովմասյանն իր հորեղբոր որդին է, սակայն միմյանց հետ քիչ են շփվում: 2008 թվականի գարնանը պատահաբար հանդիպել է Արթուր Թովմասյանին և նրա աներոջ որդուն՝ Կարեն Ղասաբոլյանին: Վերջինս հայտնելով, որ ապառիկ ապրանք է վերցրել՝ հետաքրքրվել է, թե անձնագիրն իր մոտ է, որպեսզի երեք ամսով ապառիկը փոխի իր անունով: Հաշվի առնելով Արթուր Թովմասյանի և Կարեն Ղասաբոլյանի բարեկամությունը՝ վստահել է վերջինիս ու նրան տվել իր անձնագիրը: Շուրջ կես ժամ անց Կարեն Ղասաբոլյանը զանգահարել է իրեն, և պայմանավորվել են

անձնագիրը վերադարձնելու մասին: Հետագայում իմացել է, որ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում իր անվամբ վարկ է ձևակերպված և գրավադրված է ավտոմեքենա: Այդ ժամանակ էլ հասկացել է, որ Կարեն Ղասաբօղյանն իրեն խաբել և իր անվամբ վարկ է ստացել:

Վկա Սարգիս Ոսկանյանը ցուցմունք, որ 2007 թվականի հոկտեմբերին համազյուղացի Քանաքարա Ստեփանյանը դիմել է իրեն՝ խնդրելով երաշխավոր հանդես գալ բանկում, քանի որ ցանկանում է վարկ ստանալ: Ինքը համաձայնել և անձնագիրը վերցնելով՝ Քանաքարա Ստեփանյանի և նրա եղբոր՝ Բենիկ Ստեփանյանի հետ գնացել են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղ: Ներկայացրել են իրենց փաստաթղթերը, ստորագրել բանկի տված թղթերի տակ, որից հետո Քանաքարա Ստեփանյանը մոտեցել է դրամարկղ և ստացել գումարը: Դրանից հետո միասին վերադարձել են գյուղ: 2009 թվականի սեպտեմբերին իրենց տուն են եկել ԴԱՀԿ ծառայության աշխատակիցները և ասել, որ Քանաքարա Ստեփանյանն ամբողջությամբ չի մարել վարկը և որպես երաշխավոր ինքը պետք է վճարի այդ գումարը: Հաջորդ օրը Քանաքարա Ստեփանյանի հոր՝ Օնիկ Ստեփանյանի հետ գնացել են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղ, որպեսզի Օնիկ Ստեփանյանը վճարի վարկի գումարը: Հենց բանկում էլ իմացել է, որ իր անվամբ 1.000.000 ՀՀ դրամի անասնաբուժական վարկ է ձևակերպված մինչև 2009 թվականի հոկտեմբերի 23-ը մարման ժամկետով և որևէ մարում կատարված չի եղել: Քանի որ ինքը վարկ վերցրած չի եղել՝ ներկայացել է ոստիկանության Սևանի բաժին և հաղորդում տվել կատարվածի մասին:

Վկա Քանաքարա Ստեփանյանը ցուցմունք տվեց, որ 2007 թվականի աշնանը, իր եղբոր՝ Բենիկ Ստեփանյանի բնակարանը վերանորոգելու նպատակով և նրա խնդրանքով համաձայնել է իր անունով վարկ ձևակերպել և անձնագիրը վերցնելով՝ եղբոր հետ գնացել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղ: Բանկի վարկային բաժնի տնտեսագետ Կարեն Ղասաբօղյանի մոտ ստորագրել է վարկային պայմանագիր՝ ներկայացնելով միայն անձնագիրը: Այնուհետև դրամարկղից ստացել է 1.000.000 ՀՀ դրամ և այն հանձնել եղբորը՝ Բենիկ Ստեփանյանին: Վերջինս կատարել է վարկի մարումները և սահմանված ժամկետում փակել այն: Անդրադառնալով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում իր անվամբ ձևակերպված 2.000.000 ՀՀ դրամ վարկին՝ Քանաքարա Ստեփանյանը նշեց, որ այդ մասին չի իմացել, ավտոմեքենա չի ունեցել և չի գրավադրել, իսկ այդ վարկի գումարը մուծելու հարցով բանկից իրեն երբեք չեն անհանգստացրել:

Վկա Էդուարդ Բարեղամյանը ցուցմունք տվեց, որ 2007 թվականին «Ֆինքս» վարկային կազմակերպությունից ստացել է 250.000 ՀՀ դրամի վարկ, որը տվել է Բենիկ Ստեփանյանին, իսկ վերջինս էլ կատարել է վարկի մարումները: 2008 թվականի ամռանը Բենիկ Ստեփանյանը հանդիպել է իրեն և խնդրել, որպեսզի միասին գնան «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղ՝ իր անունով վերցված վարկը փակելու համար: Գնացել են բանկի աշխատակից Կարեն Ղասաբօղյանի մոտ, ինքը ներկայացրել է իր անձնագիրը, Կարեն Ղասաբօղյանն ինչ-որ թղթեր է լրացրել և տվել իրեն ստորագրելու՝ ասելով, որ իջնի դրամարկղից գումար ստանա: Առանց որևէ բան հարցնելու՝ ստորագրել է, իջել դրամարկղ, աշխատակցին ասել է, որ իրեն Բենիկ Ստեփանյանն է ուղարկել, և առանց որևէ փաստաթուղթ ներկայացնելու՝ ստացել է 1.000.000 ՀՀ դրամ: Վերադարձել է Կարեն Ղասաբօղյանի աշխատասենյակ և գումարը հանձնել Բենիկ Ստեփանյանին: Վերջինս այդ գումարից 200.000 ՀՀ դրամը տվել է Կարեն Ղասաբօղյանին, իսկ իրեն ասել է,

թե իր անվամբ ձևակերպված վարկն ամբողջությամբ մարված է: 2009 թվականին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղից իրեն հայտնել են, որ իր անունով 1.000.000 ՀՀ դրամի վարկ է ձևակերպված, և գրավադրված է ձեռքի խոտհնձիչ, որպիսին ինքը երբեք չի ունեցել: Հասկացել է, որ Բենիկ Ստեփանյանն ու Կարեն Ղասաբոլյանը, չարաշահելով իր վստահությունը, խաբել են իրեն և իր անվամբ վարկ են ստացել:

Վկա Աշոտ Խաչատրյանը ցուցմունք տվեց, որ Սևան քաղաքի «Կենտրոն» համատիրության նախագահին է: 2008 թվականի ամռանը համատիրություն է եկել Պապ Մանուկյանը և Ալինա Սարգսյանի ընտանիքի կազմի մասին տեղեկանք ուզել: Պապ Մանուկյանն իրեն ասել է, որ բանկից ուզում է վարկ վերցնել Ալինա Սարգսյանի անունով, և վերջինս տեղյակ է այդ մասին: Ինքը մերժել է՝ պատճառաբանելով, թե Ալինա Սարգսյանն անձամբ կարող է վերցնել տեղեկանքը: Հաջորդ օրը Պապ Մանուկյանը կրկին եկել է իր մոտ և ներկայացնելով Ալինա Սարգսյանի անձնագիրը՝ դարձյալ խնդրել տեղեկանք տրամադրել: Քանի որ ինքը տեղյակ է եղել, որ նրանք ընտանիքներով մոտ հարաբերություններ ունեն, և բացի այդ, տեսնելով Ալինա Սարգսյանի անձնագիրը, հավատացել է Պապ Մանուկյանին և տրամադրել անհրաժեշտ տեղեկանքը:

Վկա Անդրանիկ Եփրեմյանը ցուցմունք տվեց, որ համատեղության կարգով աշխատել է Սևան քաղաքի բնակիչ Վլադիմիր Սարգսյանին պատկանող «Սինթեզ» արտադրական կոոպերատիվում՝ որպես գործադիր տնօրեն: 2008 թվականի ամռանը Պապ Մանուկյանը, որին ճանաչել է որպես մսավաճառի և մտերիմ հարաբերություններ է ունեցել նրա հետ, դիմել է իրեն՝ խնդրելով նրա հարևանուհու՝ Ալինա Սարգսյանի անունով աշխատավարձի չափի մասին տեղեկանք տալ, քանի որ ուզում է ապառիկով հեռուստացույց գնել: Խղճալով նրան և մտածելով, որ Պապ Մանուկյանն աշխատում է, ունի կայուն եկամուտ՝ տեղեկանք է տվել, թե իբրև Ալինա Սարգսյանը «Սինթեզ» արտադրական կոոպերատիվում աշխատում է որպես հաշվետար, իսկ նրա աշխատավարձի չափը կազմում է 115.000 ՀՀ դրամ:

Վկա Գրիշա Անտոնյանը ցուցմունք տվեց, որ 2007 թվականի հուլիսին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղից երկու տարի ժամկետով 1.000.000 ՀՀ դրամ վարկ է վերցրել, որն ամբողջությամբ մարել է 2009 թվականի սեպտեմբերին: Որպես վարկի ապահովման միջոց՝ գրավադրված է եղել իրեն պատկանող տրակտորը: Վարկի ձևակերպման համար ներկայացրել է տեղեկանքներ՝ բնակության վայրից, ընտանիքի կազմի և աշխատավարձի չափի վերաբերյալ, ինչպես նաև անձնագիր և սոցիալական քարտի պատճենները: Նշված վարկի մարումից հետո ինքն այլևս վարկ չի վերցրել և որևէ անձի համար երաշխավոր հանդես չի եկել: 2009 թվականի աշնանը դատարանից ծանուցագիր է ստացել, որում նշված է եղել, որ իր համազրույցի Օճիկ Ստեփանյանի կողմից վարկ վերցնելու համար ինքը հանդես է եկել որպես երաշխավոր, և քանի որ վարկը չի մարվել՝ բանկը դիմել է դատարան՝ վարկի գումարը բռնագանձելու հայցով: Նշված օրը ներկայացել է դատարան և հայտնել, որ Օճիկ Ստեփանյանի վերցրած վարկին որպես երաշխավոր հանդես չի եկել և ոչ մի փաստաթուղթ չի ստորագրել: Նայել է Օճիկ Ստեփանյանի վարկային գործում եղած փաստաթղթերը և նկատելով, որ իր ստորագրությունները կեղծված են՝ այդ մասին հայտնել է դատարանին: Բացի այդ, դատարան ներկայացած Օճիկ Ստեփանյանը նույնպես հայտարարել է, որ բանկից վարկ չի վերցրել և ոչ մեկին որպես երաշխավոր հանդես գալ չի խնդրել:

Վկա Ալեքսանդր Իսակովը ցուցմունք տվեց, որ 2007 թվականին պատահաբար հանդիպել է Արթուր Թովմասյանին, որի հետ նախկինում սովորել են նույն դպրոցում: Վերջինս խնդրել է «ՎՏԲ-

Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղում վարկ ձևակերպել և գումարը տալ նրան՝ խոստանալով վարկը ժամանակին փակել: Ինքը համաձայնել և Արթուր Թովմասյանին է տվել իր անձնագրի և սոցիալական քարտի պատճենները: Վարկը վերցնելու համար բանկ չի գնացել, որևէ փաստաթուղթ չի ստորագրել և նույնիսկ չի իմացել, թե Արթուր Թովմասյանն իր անունով որքան վարկ է ձևակերպել: Ինքն «Աստղիկ» ՍՊ ընկերությունում երբեք չի աշխատել և այդ ընկերությունից աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկանք չի վերցրել:

Վկա Նելլի Գեղամյանը ցուցմունք տվեց, որ իր մայրը՝ հանգուցյալ Ռոզա Խաչատրյանը, 1997 թվականին Սևան քաղաքում հիմնել է «Աստղիկ» ՍՊ ընկերությունը: Մոր առողջական վիճակի վատթարացման պատճառով դրանից շուրջ մեկ տարի անց նշված ընկերությունը գրանցվել է իր անվամբ: Ինքը չի իմացել թե ովքեր են աշխատել ընկերությունում, քանի որ այդ հարցերով զբաղվել է իր մայրը: Իմացել է միայն, որ ընկերությունը հաշվապահ չի ունեցել, և այդ հարցում իրենց օգնել են ծանոթները: Սկզբնական շրջանում խանութում վաճառվել է կտորեղեն, իսկ 2004 թվականից հետո՝ նաև էլեկտրատեխնիկա: Իր ամուսնու հետ ապրանքները ձեռք են բերել Երևան քաղաքի խանութներից ու շուկաներից, իսկ մայրը դրանք վերավաճառել է խանութում: «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի հետ համագործակցության, ձևակերպված վարկերի և տրամադրված տեղեկանքների մասին ոչինչ ասել չի կարող, քանի որ դրանք եղել են մինչև իր տնօրեն դառնալը: Արթուր Թովմասյանին ճանաչել է որպես էլեկտրատեխնիկայի վաճառողի, սակայն իր տնօրեն դառնալուց հետո, վերջինս այլևս խանութում չի աշխատել:

Վկա Մանուկ Թովմասյանը ցուցմունք տվեց, որ 2006 թվականին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի միջոցով, համապատասխան փաստաթղթեր ներկայացնելով, «Աստղիկ» ՍՊ ընկերությունից ապառիկ կարգով, ձեռք է բերել կենցաղային տեխնիկա և ըստ բանկի կողմից տրված ժամանակացույցի՝ կանոնավոր կերպով, երկու տարվա ընթացքում մարել է ողջ գումարը՝ տոկոսներով հանդերձ: 2007 թվականին, տան վերանորոգման նպատակով «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղից դարձյալ վարկ է վերցրել՝ 1.200.000 ՀՀ դրամ, երկու տարի մարման ժամկետով և 22% տոկոսադրույքով, որը նույնպես պարտաճանաչ կերպով ըստ ժամանակացույցի մարել է: 2008 թվականի հունվարին կամ փետրվարին իրեն դիմել է իր հորեղբոր որդին՝ Արթուր Թովմասյանը, խնդրելով ժամանակավորապես նրան տալ իր անձնագիրը՝ պատճառաբանելով, թե խանութի համար ապրանք ստանալու համար գործարք պիտի կատարի: Ինքը չի մերժել, սակայն դրանից մի քանի օր անց Արթուր Թովմասյանը խնդրել է տեղեկանք տալ նաև բնակության վայրի մասին՝ հայտնելով, որ ցանկանում է իր անվամբ վարկ վերցնել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղից: Այս անգամ ինքը մերժել է՝ պատճառաբանելով, որ իր անվամբ արդեն վարկ կա ձևակերպված, որը դեռևս ամբողջությամբ մարված չի: Մի քանի օր անց Արթուր Թովմասյանը վերադարձրել է իր անձնագիրը, իսկ 2008 թվականին, երբ գնացել է բանկ՝ վարկի մասնակի մարում կատարելու համար, իրեն հայտնել են, որ իր անվամբ վարկ է գրանցված 600.000 ՀՀ դրամի չափով: Այդ ժամանակ հանդիպել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի աշխատակից Կարեն Ղասաբոլյանին և նրանից տեղեկացել, որ վարկը ձևակերպել է Արթուր Թովմասյանը: Տեղեկացել է նաև, որ այդ վարկի մի մասն արդեն մարված է: 2009 թվականի մարտին դիմել է «Հայէկոնոմբանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղ՝ նոր վարկ վերցնելու նպատակով, սակայն բանկում իրեն պատասխանել են, որ գրանցված է անբարեխիղճ վարկառուների ցուցակում՝ ժամկետանց վարկ ունենալու

պատճառով: Իր անունը նշված ցուցակից հանելու համար դիմում է գրել ՀՀ Կենտրոնական Բանկին և որոշ ժամանակ անց «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի կառավարիչ Արսեն Առաքելյանը գանգահարել և հրավիրել է իրեն: Բանկում Արսեն Առաքելյանը ցույց է տվել իր անձնագրի պատճենը, 130.000 ՀՀ դրամ աշխատավարձով «Աստղիկ» ՍՊ ընկերությունում որպես հածվապահ-տնտեսագետ աշխատելու մասին տեղեկանքը, իր անվամբ լրացված գույքի հանձնման - ընդունման ակտ և 160.000 ՀՀ դրամ կանխավճարի վճարման անդորրագիր: Համոզվելով, որ վերը նշված բոլոր փաստաթղթերում իր ստորագրությունները կեղծված են՝ հանդիպել է Արթուր Թովմայանին, որն էլ իրեն հայտնել է, որ այդ ամենը կատարվել է Կարեն Ղասաբոլյանի միջոցով:

Վկա Վահե Սաղաթելյանը ցուցմունք տվեց, որ 2009 թվականի հոկտեմբերին կամ նոյեմբերին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից, ոսկու գրավադրմամբ, 974.000 ՀՀ դրամի վարկ է ստացել, որի ժամկետը պետք ավարտվեր 2010 թվականի ապրիլին, սակայն մինչ այդ ամբողջությամբ մարել է վարկը: 2005 թվականի գարնանը երաշխավորել է ընկերոջ՝ Գարուշ Թորոսյանի վարկի վերադարձը: Վերջինս վարկի դիմաց գրավադրել է Չկալովկա գյուղում գտնվող առանձնատուն: Այդ գործարքի համար ինքն ընկերոջ հետ գնացել է բանկի մասնաճյուղ, որտեղ թողել է իր անձնագրի պատճենը և ստորագրել փաստաթղթեր: Գարուշ Թորոսյանն ամբողջությամբ մարել է վարկը, և ինքն այլևս բանկ չի գնացել: Բացի այդ, Գարուշ Թորոսյանը մեկ անգամ ևս վարկ է վերցրել նշված բանկից՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով, որի վերջնական մարումը կատարել են միասին՝ արդեն ներկայիս բանկի կառավարիչ Գրիշա Բաղդասարյանի օրոք: Դրանից հետո Գարուշ Թորոսյանն իրեն հայտնել է, թե իբրև «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում նրա անվամբ ձևակերպված 1.000.000 ՀՀ դրամի չմարված վարկ կա, և որ ինքն էլ հանդես է գալիս որպես երաշխավոր: Բացի վերոհիշյալ դեպքերից ինքը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում որևէ գործարք չի կատարել և միայն 2005 թվականին է երաշխավորել Գարուշ Թորոսյանի վարկի վերադարձը, որն էլ ամբողջությամբ մարվել է:

Վկա Գարուշ Թորոսյանը ցուցմունք տվեց, որ 2005 թվականին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից ստացել է 2.000.000 ՀՀ դրամի չափով վարկ, որը սահմանված ժամկետում մարել է: Այնուհետև՝ 2007 թվականի դեկտեմբերին ապառիկ կահույք է ձեռք բերել, որի համար վարկը տրամադրել է «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղը՝ 8 ամիս ժամկետով: Հիշյալ վարկի վերջին մարումը կատարելու ժամանակ տեղեկացել է, որ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում իր անունով 1.000.000 ՀՀ դրամի ժամկետանց վարկ կա գրանցված: Դիմել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի վարկային բաժնի տնտեսագետ Կարեն Ղասաբոլյանին, որն էլ ասել է, թե դա թյուրիմասժություն է: Բանկի գանձապահ Սահականույշ Ասատրյանից տեղեկանալով, որ իր անվամբ 1.000.000 ՀՀ դրամի վարկ կա ձևակերպված՝ կրկին դիմել է Կարեն Ղասաբոլյանին: Վերջինս խոստովանելով, որ վարկը ձևակերպել է նախկինում վերցրած վարկերի համար ներկայացված փաստաթղթերով և ստորագրությունները կեղծելով՝ խնդրել է ոչ ոքի չասել այդ մասին: Կատարվածի մասին հայտնել է կառավարիչ Արսեն Առաքելյանին, որն էլ ասել է, թե տեղեկություն չունի, սակայն Սահականույշ Ասատրյանից իմացել, որ կառավարչի կողմից ստորագրված և կնքված փաստաթղթերի հիման վրա է նա գումարը տվել Կարեն Ղասաբոլյանին: Ինքն անձնական օգտագործման ավտոմեքենա չի ունեցել և տեղեկություն չունի թե ինչ ավտոմեքենա է գրավադրված

այդ վարկի դիմաց:

Վկա Արտակ Թորոսյանը ցուցմունք տվեց, որ 2007 թվականին ցանկացել է «Աստղիկ» ՍՊ ընկերությունից ապառիկ կարգով ձեռք բերել տեսախցիկ և այդ նպատակով դիմել է խանութի աշխատող Արթուր Թովմասյանին: Ներկայացրել է վերջինիս պահանջած բոլոր փաստաթղթերը, սակայն ապառիկի ձևակերպումը հետաձգվել է, քանի որ խանութում իր ուզած տեսախցիկից չի եղել: Մի քանի օր անց իրեն զանգահարել է Արթուր Թովմասյանը և հայտնելով, որ խանութում իր ուզած տեսախցիկից կա՝ պահանջել է որպես կանխավճար մուծել դրա արժեքի 30%: Քանի որ այդ պահին գումար չի ունեցել, հրաժարվել է գնումից և խնդրել է Արթուր Թովմասյանին պատռել ներկայացրած փաստաթղթերը: 2008 թվականի մարտին իրեն զանգահարել են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից և հայտնել, որ բանկում 680.000 ՀՀ դրամի չափով ժամկետանց վարկ ունի: Գնալով բանկ՝ իր անվամբ կազմված վարկային գործում տեսել է այն բոլոր փաստաթղթերը, որոնք ինքը տվել էր Արթուր Թովմասյանին՝ տեսախցիկն ապառիկ ձևակերպելու համար: Այդ մասին հայտնել է բանկի կառավարիչ Արսեն Առաքելյանին: Վերջինս կանչել է բանկի աշխատակից Կարեն Ղասաբօղյանին, որն էլ խոստովանել է, որ նա է վարկը ձևակերպել, ապա պարտավորվել է մարել այն:

Վկա Դավիթբեկ Դավթյանը ցուցմունք տվեց, որ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից ստացել է 1.000.000 ՀՀ դրամի չափով գյուղատնտեսական վարկ: Վարկային գործով զբաղվող Արա Մկրտչյանն ասել է, թե 98.100 ՀՀ դրամ պետք է մուծել դրամարկղ՝ որպես վեց ամսվա տոկոս, և քանի որ դրամարկղն արդեն փակ է եղել, Կարեն Ղասաբօղյանն առաջարկել է գումարը թողնել նրա մոտ, իսկ հաջորդ օրը գալ և վերցնել անդորրագիրը: Հավատալով վերջինիս՝ 100.000 ՀՀ դրամ է թողել նրա մոտ: Կարեն Ղասաբօղյանին է տվել նաև 20.000 ՀՀ դրամ: Հաջորդ օրը, գործեր ունենալու պատճառով, չի կարողացել գնալ ու վերցնել անդորրագիրը և այդ գործը հանձնարարել է կնոջը: Դրանից հետո նախ որդին, ապա նաև ինքը մեկնել են Ռուսաստան, որտեղից էլ գումարներ են ուղարկել, իսկ կինը պարբերաբար կատարել է վարկի մարումները: Վերադառնալով ռուսաստանից՝ վերցրել է վարկի մարման անդորրագրերը և գնացել բանկ՝ Արա Մկրտչյանի հետ վարկի մնացորդը ճշտելու համար: Վերջինս համակարգչով ստուգելուց հետո վարկի մնացորդը 100.000 ՀՀ դրամով ավել է ասել: Հասկացել է, որ Կարեն Ղասաբօղյանին տված 100.000 ՀՀ դրամը, որի անդորրագիրը կինը վերցրել է բանկից, չի մուծվել:

Վկա Եղիշե Սարգսյանը ցուցմունք տվեց, որ իր եղբայրը՝ Արթուր Սարգսյանը 2007 թվականի դեկտեմբերին որոշել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից 1.500.000 ՀՀ դրամ վարկ վերցնել: Այն տրամադրելու համար, բանկը որպես վարկի ապահովման միջոց արգելանքի տակ է վերցրել անձնական օգտագործման «ՎԱԶ 21-06» մակնիշի ավտոմեքենան և պահանջել է ներկայացնել երաշխավորների: Եղբորն օգնելու համար՝ ինքը գնացել է բանկ, և ստորագրելով երաշխավորության պայմանագրերը, հանդես է եկել որպես երաշխավոր: Արթուր Սարգսյանը սահմանված ժամկետում մարել է վարկը և ավտոմեքենան հանել է արգելանքից: Դրանից բացի իրենք վարկ չեն վերցրել, ինքն էլ ոչ մեկի վարկի վերադարձը չի երաշխավորել: Հետագայում ցանկացել է վարկ վերցնել, սակայն իրեն ասել են, որ իր անունով ապառիկ կա գրանցված, իսկ ավելի ուշ բանկից երկու անգամ ժամուցագիր է եկել՝ ըստ որի ինքը 146.000 ՀՀ դրամի ժամկետանց վարկ ունի: Երկար ժամանակ բանկը մերժել է տրամադրել վարկային գործը, սակայն հետագայում ցույց են տվել պայմանագիրը, անձնագրի ու սոցիալական քարտի պատճենները և հայտնել, որ այդ վարկով տեսախցիկ է ձեռք բերվել: Ինքն այդ

գումարը մուծել է, սակայն բանկերը դեռևս հրաժարվում են իրեն վարկ տրամադրել, քանի որ ինքը ժամկետանց վարկ է ունեցել:

Վկա Մարիետա Գրիգորյանը ցուցմունք տվեց, որ 2010 թվականի հունիսի 07-ին դիմում է գրել Գեղարքունիքի մարզի դատախազին և հայտնել, որ Բենիկ Ստեփանյանի անվամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի հետ կնքված թիվ 46 գյուղատնտեսական վարկի ստացման ժամանակ ինքը որպես երաշխավոր հանդես չի եկել և չգիտի, թե ինչպես է պատահել, որ Բենիկ Ստեփանյանի կողմից ստացված վարկի 25.06.07թ. երաշխավորության պայմանագրում, որպես երաշխավոր նշված է իր անունը: Այդ պայմանագիրն ինքը չի ստորագրել, ստորագրությունն իրենը չէ և չգիտի, թե ով է այն ստորագրել: Գործը դատարանում քննելիս՝ պայմանագրում առկա ստորագրությունն ուղարկվել է դատաձեռագրաբանական փորձաքննության և հաստատվել է, որ այն իր ստորագրությունը չէ: Դրանից հետո գործի իր մասը կարճվել է:

Վկա Կարեն Առաքելյանը ցուցմունք տվեց, որ Արթուր Թովմասյանը խոստանալով իրեն աշխատանքի տեղավորել «Աստղիկ» ՍՊ ընկերությունում՝ վերցրել է իր անձնագրի և սոցիալական քարտի պատճենները, իսկ մի քանի օր անց նաև տեղեկանքներ՝ բնակության վայրից և ընտանիքի կազմի վերաբերյալ: Արթուր Թովմասյանն իրեն հայտնել է, որ աշխատանքի անցնելուց հետո իր անունով վարկ է ձևակերպելու, սակայն այդպես էլ աշխատանքի չի ընդունվել: 2009 թվականի սկզբին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից ծանուցագիր է ստացել այն մասին, որ նույն բանկում իր անվամբ շուրջ 120.000 ՀՀ դրամի ժամկետանց վարկ կա: Արթուր Թովմասյանին աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկանք չի տվել, բանկ չի գանցել և որևէ փաստաթուղթ չի ստորագրել: Այդ մասին հարցրել է Արթուր Թովմասյանին, իսկ վերջինս պարտավորվել է մարել վարկը:

Վկա Հայկ Մնացականյանը ցուցմունք տվեց, որ 2008 թվականի սկզբներին Արթուր Թովմասյանը հանդիպել է իրեն և ասել, որ ցանկանում է ապառիկ կարգով կենցաղային տեխնիկա ձեռք բերել, ապա խնդրել է, որ ապառիկը ձևակերպվի իր անունով, քանի որ նրա անունով արդեն ձևակերպված վարկ կա: Հաշվի առնելով իրենց մտերմությունը՝ ինքը համաձայնել է, պատրաստել անհրաժեշտ փաստաթղթերը և Արթուր Թովմասյանի հետ գնացել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի վարկային բաժնի տնտեսագետ Կարեն Ղասաբօղյանի մոտ՝ 300.000 ՀՀ դրամի ապառիկ ձևակերպելու համար: Կարեն Ղասաբօղյանն իմանալով, որ վարկը ձևակերպվելու է իր անունով, սակայն մարումը կատարելու է Արթուր Թովմասյանը՝ խնդրել է, պահանջվող գումարն ավելացնել ևս 300.000 ՀՀ դրամով՝ խոստանալով մարել վարկի այդ մասը: Ինքը համաձայնել է նաև այդ պայմանին և իր անվամբ ձևակերպվել է 600.000 ՀՀ դրամի վարկ: Ներկայացրել է անձնագիրը, սոցիալական քարտը և տեղեկանք ընտանիքի կազմի վերաբերյալ: «Աստղիկ» ՍՊ ընկերությունում երբեք չի աշխատել: Փաստաթղթերը ստորագրել է Կարեն Ղասաբօղյանի աշխատասենյակում, սակայն ինքը գումար չի ստացել, և կանխավճար չի վճարել: Հետագայում Արթուր Թովմասյանը վճարել է 300.000 ՀՀ դրամը, իսկ մնացած վարկի գումարը ստիպված մարել է ինքը:

Վկա Պավել Գաբրիելյանը ցուցմունք տվեց, որ 2007 թվականի սեպտեմբերին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից օրինական կարգով 2.000.000 ՀՀ դրամի վարկ է վերցրել՝ 18 ամիս մարման ժամկետով, որի համար գրավադրել է իր հայրական տունը: Շուրջ 10 ամսվա ընթացքում ամբողջությամբ մարել է վարկը և բանկի հետ այլևս գործարք չի ունեցել: Սույն

քրեական գործի նախաքննության ընթացքում իմացել է, որ իր անվամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում 680.000 ՀՀ դրամի վարկ է ձևակերպված, որից ինքը տեղյակ չէ: Հետևաբար այն կեղծ է: Համոզված է որ օգտագործել են նախկինում մարված իր վարկային գործում եղած իր անձնագրային և այլ տվյալները:

Վկա Յուրի Հովհաննիսյանը ցուցմունք տվեց, որ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից 2008 թվականի հուլիսի 08-ին որևէ վարկ չի վերցրել և իր անվամբ ձևակերպված վարկից տեղեկություն չունի: Չի կարող հասկանալ, թե իր տվյալներն ինչպես են հայտնվել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում, երբ իր անձնագիրը կամ դրա պատճեն որևէ մեկին չի տվել: Սարգիս Ոսկանյանին չի ճանաչում և նրան որևէ տեղեկանք չի տվել: Որ իր անվամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում վարկ կա ձևակերպված՝ իմացել է, երբ գտնվել է կալանավայրում:

Վկա Օնիկ Ստեփանյանը ցուցմունք տվեց, որ 2007 թվականի ամռանը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից, ոսկու գրավադրմամբ, 200.000 ՀՀ դրամի վարկ է վերցրել, որը հետագայում մարել է: 2008 թվականին իր որդու՝ Բենիկ Ստեփանյանի հետ գնացել է բանկ, այնտեղ ինչ-որ փաստաթղթեր ստորագրել, որից հետո որդին բացատրել է, որ մեկնում է Ռուսաստան, իսկ ինքը պարտավորվել է որդու փոխարեն վճարել շուրջ 700.000 ՀՀ դրամ, որը նա կուղարկի Ռուսաստանից: Տրակտոր ինքը չի ունեցել և տեղյակ չէ, թե ինչ տրակտոր է գրավադրված: Սարգիս Ոսկանյանին ճանաչում է, սակայն նրա ստացած վարկի համար որպես երաշխավոր երբեք հանդես չի եկել: Իր դուստրը՝ Քանաքարա Ստեփանյանը 2007 թվականի սեպտեմբերին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից 1.000.000 ՀՀ դրամի վարկ է ստացել, որն ամբողջությամբ մարվել է:

Վկա Կարեն Նավասարդյանը ցուցմունք տվեց, որ 2006 թվականին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից վարկ է ստացել՝ ապառիկ կարգով հեռուստացույց գնելու համար: Վարկային պայմանագիրը կազմել է Կարեն Ղասաբօղյանը: Վարկն ամբողջությամբ մարել է մեկ տարվա ընթացքում: 2007 թվականի հունիսին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից ծանուցագիր է ստացել այն մասին, որ մասնաճյուղում իր անվամբ կենցաղային տեխնիկա ձեռք բերելու չմարված վարկ կա: Գնալով բանկ՝ պարզել է, որ բանկում իր անունով 600.000 ՀՀ դրամի կենցաղային տեխնիկա՝ սառնարան և տեսախցիկ, ձեռք բերելու վերաբերյալ վարկ կա: Չնայած, որ այդ վարկից տեղյակ չէ, և վարկային պայմանագրում առկա ստորագրությունն իրենը չէ, այլ նմանեցված է՝ ինքն ամբողջովին մարել է այդ վարկը:

Վկա Գոհար Մկրտչյանը ցուցմունք տվեց, որ 2008 թվականին «ՎՏԲ- Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից 50.000 ՀՀ դրամի վարկ է վերցրել, որն ամբողջությամբ մարել է: Հետո իմացել է, որ նույն բանկում իր կամ ամուսնու՝ Յուրի Հովհաննիսյանի, անունով 500.000 ՀՀ դրամի չափով վարկ է ձևակերպված, սակայն այդ ընթացքում իր ամուսինն ազատագրկման մեջ է եղել և պատիժ է կրել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, իսկ ինքը, բացի 2008 թվականի 50.000 ՀՀ դրամի վարկից այլ վարկ չի վերցրել, որն էլ ամբողջությամբ մարել է: Բանկի նոր կառավարիչի պահանջով 30.000 ՀՀ դրամ է վճարել, սակայն հետո հրաժարվել, ու այլևս մարում չի կատարել:

Վկա Սարգիս Շահբաջյանը ցուցմունք տվեց, որ 2007 թվականի

մայիսին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղից ստացել է 1.000.000 ՀՀ դրամի վարկ՝ գրավադրելով ՀՀ Պետարքունիքի մարզի Ջովաբեր գյուղում գտնվող իր սեփական տունը: Բարեխիղճ կերպով կատարել է վարկի մուծումները: Նույն թվականի նոյեմբերի 06-ին դարձյալ գնացել է բանկ, հանդիպել վարկային բաժնի տնտեսագետ Կարեն Ղասաբոլյանին և ասել, որ ամբողջությամբ ցանկանում է մարել վարկը: Կարեն Ղասաբոլյանն իրենից վերցրել է 640.000 ՀՀ դրամ, ապա որոշ ժամանակ անց, վերադառնալով աշխատասենյակ, իրեն է տվել հիշյալ գումարի վճարման անդորրագիրը: Կարեն Ղասաբոլյանը վերադարձրել նաև գրավադրված տան սեփականության վկայականը՝ ասելով, որ գրություն կուղարկի կադաստր, որպեսզի տունն արգելանքից հանեն: 2009 թվականի սեպտեմբերի 09-ին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղից ծանուցագիր է ստացել այն մասին, որ իր անունով 640.000 ՀՀ դրամի չմարված վարկ ունի: Գնացել է բանկ, մասնաձյուղի կառավարիչ Գրիշա Բաղդասարյանին ներկայացրել վճարման անդորրագրերը և տան սեփականության վկայականը: Այնտեղ ներկա է գտնվել նաև մասնաձյուղի նախկին կառավարիչ Արսեն Առաքելյանը:

Վկա Ալեքսան Դավթյանը ցուցմունք տվեց, որ 2007 թվականին ցանկացել է ապառիկ կարգով կենցաղային տեխնիկա ձեռք բերել, ուստի դիմել է Արթուր Թովմասյանին, որն այդ ժամանակ աշխատել է կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող խանութում: Վերջինս հայտնել է այն փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ են գործարքի համար: Ինքն Արթուր Թովմասյանին է տվել իր անձնագրի պատճենը և ընտանիքի կազմի վերաբերյալ տեղեկանքը, սակայն հետագայում փոշմանել և ապառիկ չի ձևակերպել, իսկ փաստաթղթերը մնացել են Արթուր Թովմասյանի մոտ: Դրանից շուրջ երկու ամիս անց հանդիպել է Արթուր Թովմասյանին, որն էլ խնդրել է նրա համար վարկ ձևակերպել իր անունով, ինչին ինքը համաձայնել է, սակայն մանրամասները չի հարցրել: «Աստղիկ» ՍՊ ընկերությունում ինքն ընդհանրապես չի աշխատել, բանկ չի գնացել և ոչ մի փաստաթուղթ չի ստորագրել:

Վկա Արման Առաքելյանը ցուցմունք տվեց, որ 2007 թվականի աշնանն իր ընկեր Մուրադ Դավթյանը խնդրել է երաշխավորել նրա կողմից «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղից ստացվող վարկի վերադարձը: Ինքը համաձայնել և ներկայացրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ անձնագրի և սոցիալական քարտի պատճենները, ինչպես նաև բնակության և աշխատանքի վայրից տեղեկանքները: Դրանից հետո Մուրադ Դավթյանի և նրա հոր՝ Դավիթբեկ Դավթյանի հետ գնացել է բանկի մասնաձյուղ, որտեղ ստորագրել է երաշխավորության պայմանագիրը: Մուրադ և Դավիթբեկ Դավթյաններն իջել են դրամարկղ և ստացել վարկի գումարը: Բանկի մասնաձյուղից հեռանալուց տեղեկացել է, որ ստացած վարկի վեց ամսվա տոկոսագումարը՝ շուրջ 100.000 ՀՀ դրամ, Դավթյանները մարել են, սակայն, աշխատանքային օրվա ավարտի հետ կապված, անդորրագիրը չեն վերցրել: Շուրջ երկու օր անց հանդիպել է Մուրադ Դավթյանին և իմացել, որ անդորրագիրը դեռ չեն վերցրել: Դրանից հետո Մուրադ Դավթյանը մեկնել է Ռուսաստան և ինքն այլևս այդ հարցով չի հետաքրքրվել: 2009 թվականին դատարանից ծանուցագիր է ստացել այն մասին, որ Մուրադ Դավթյանը չի կատարել իր վարկային պարտավորությունները, չի մարել վարկի գումարը և այն դատական կարգով պետք է իրենից բռնագանձեն: Մուրադ Դավթյանից տեղեկացել է, որ վարկի գումարներն ամբողջությամբ մարված են, սակայն վարկի ստացման օրը վճարած 100.000 ՀՀ դրամը դրամարկղ չի մուտքագրվել, որի հետևանքով էլ մասնաձյուղը դիմել է դատարան: Իմացել է նաև, որ Մուրադ Դավթյանի Ռուսաստան գնալուց հետո նրա մայրը բանկից վերցրել է 100.000 ՀՀ դրամի անդորրագիրը և Դավթյանները պահում են

վճարման բոլոր անդորրագրերը:

Վկա Արամ Գրիգորյանը ցուցմունք տվեց, որ 2001 թվականին հիմնադրել է «Գետուկ» ՍՊ ընկերությունը և 2004 թվականից զբաղվել տեխնիկայի առքուվաճառքով: 2006 թվականի մարտ ամսից «Գետուկ» ՍՊ ընկերությունը պայմանագիր է կնքել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի հետ՝ կենցաղային տեխնիկայի ապառիկ վաճառք կատարելու համար: Կարեն Ղասաբոլյանի մայրը՝ Էլմիրա Վարդանյանը, 11.04.2008թ. իր խանութից ապառիկ կարգով ձեռք է բերել 400.000 ՀՀ դրամի կենցաղային տեխնիկա, որից 220.000 ՀՀ դրամը դեռևս մարված չէ: Կարեն Ղասաբոլյանի մորաքույրը՝ Էվելինա Ալեքսանյանը, ապառիկով ձեռք է բերել 300.000 ՀՀ դրամի կենցաղային տեխնիկա, որից 120.000 ՀՀ դրամը մարված չէ, իսկ քույրը՝ Կարինե Ղասաբոլյանը, 21.01.2008թ. ձեռք է բերել 600.000 ՀՀ դրամի կենցաղային տեխնիկա, որից 200.000 ՀՀ դրամը նույնպես մարված չէ: Չի հիշում թե վերը նշված երեք դեպքերով ով է տարել տեխնիկան, սակայն համոզված է, որ տրվել է տեխնիկա, այլ ոչ թե գումար:

Վկա Մուրադ Ղավթյանը ցուցմունք տվեց, որ 2007 թվականի աշնանը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում իր անունով գյուղատնտեսական վարկ է ձևակերպվել 1.000.000 ՀՀ դրամի չափով: Վարկը ձևակերպելուց հետո հայրը՝ Ղավթիթեկ Ղավթյանը, որպես կանխավճար, բանկի աշխատակից Կարեն Ղասաբոլյանի է տվել 100.000 ՀՀ դրամ և 20.000 ՀՀ դրամ: Դրանից հետո ինքն ու հայրը մեկնել են Ռուսաստան: Մուծված 100.000 ՀՀ դրամի անդորրագիրը հետագայում վերցրել է իր մայրը: 2009 թվականի գարնանը հայրը գնացել է բանկ՝ վարկի մնացորդը ճշտելու համար: Այնտեղ տեղեկացել է, որ վարկի մնացորդը 100.000 ՀՀ դրամով ավել է: Պարզել են, որ բանկում մուտքագրված չէ վարկի վերցնելու օրը մուծված 100.000 ՀՀ դրամը, որի անդորրագրի վրա, ի դեպ, 2007 թվականի հոկտեմբերի 06-ի փոխարեն գրված է հոկտեմբերի 18:

Վկա Քնարիկ Ճաղարյանը ցուցմունք տվեց, որ 2009 թվականի աշնանը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից ծանուցում է ստացել այն մասին, որ ոմն Բենիկ Ստեփանյանի կողմից 1.000.000 ՀՀ դրամի վարկ ստանալու ժամանակ ինքը հանդես է եկել որպես երաշխավոր, և քանի որ վերջինս չի մարել վարկի գումարը՝ ինքը պետք է կատարի մուծումները: Դրանից շուրջ երեք տարի առաջ, որպես երաշխավոր, նույն բանկում հանդես է եկել իր եղբոր վարկի՝ 1.500.000 ՀՀ դրամի համար: Այլ անծանց համար ինքը որպես երաշխավոր հանդես չի եկել: Եղբոր վարկային գործը կազմել է Կարեն Ղասաբոլյանը և հավանաբար, իր տվյալները վերցվել են եղբոր վարկային գործից:

Վկա Ռուզաննա Ղարիբյանը ցուցմունք տվեց, որ իր փեսան՝ «Վարդան և Գայանե Ղավոյաններ» ՍՊ ընկերության տնօրեն Արտյոմ Ղավոյանը, իր անվամբ վարկ է վերցրել, ապա նաև իր օգնությամբ այն մարել է: Պատճառաբանելով, որ չի հիշում գործարքի մանրամասնությունները, իսկ գործի նախաքննության ընթացքում ցուցմունքը գրել է անծամբ և այն ճիշտ է՝ վկա Ռուզաննա Ղարիբյանը պնդեց նախաքննական իր ցուցմունքը: Գործի նախաքննության ընթացքում վկա Ռուզաննա Ղարիբյանը ցուցմունք է տվել, որ Արտյոմ Ղավոյանն իր դատեր ամուսինն է՛ և հանդիսացել է Սևան քաղաքում գործող «Վարդան և Գայանե Ղավոյաններ» ՍՊ ընկերության տնօրենը: Ինքն աշխատել է նշված ընկերությունում՝ որպես օպերատոր՝ 2007 թվականին Արտյոմ Ղավոյանը հայտնվել է ֆինանսական ծանր դրության մեջ և որոշել է վաճառել բնակարանը՝ Ինքը, ցանկանալով ինչ-որ կերպ օգնել

փեսային, հիփոթեքային վարկի միջոցով գնել է փեսայի բնակարանը՝ ըստ կարգի ներկայացնելով բոլոր փաստաթղթերը և գրավադնելով նշված բնակարանը: Իր անվամբ ստացել է հիփոթեքային վարկ՝ վճարելով 30% կանխավճար: Բարեխիղճ կերպով կատարել է մարումները, իսկ մեկ տարի անց՝ 2008 թվականի աշնանը, իր ընտանիքի և փեսայի համատեղ աշխատանքով հնարավորություն են ունեցել վարկն ամբողջությամբ փակելու և որպեսզի ավելորդ տոկոսներ չվճարեն բանկին՝ վարկն ամբողջությամբ մարել են և բնակարանն էլ արգելանքից հանել: Վարկի բոլոր մարումները կատարել է փեսան՝ Արտյոմ Դավոյանը, և հավանաբար նրա մոտ կլինեն վարկի վճարման անդորրագրերը: Այն, որ բանկում իր անվամբ 3.500.000 ՀՀ դրամ վարկի չմարված գումար է մնացել՝ չի համապատասխանում իրականությանը, որովհետև այն ամբողջությամբ փակվել է, և բանկն իրեն ոչ մի անգամ չի անհանգստացրել:

Վկա Արտյոմ Դավոյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ հանդիսացել է Սևան քաղաքում գործող «Վարդան և Գայանե Դավոյաններ» ՍՊ ընկերության տնօրենը: 2009 թվականին ընկերությունը լուծարվել է: Իր մոտ աշխատել նաև զոքսանչը՝ Ռուզաննա Ղարիբյանը և կնոջ եղբայրը՝ Աղվազ Դարիբյանը: 2007 թվականին ինքը հայտնվել է ֆինանսական ծանր դրության մեջ և որոշել է վաճառել բնակարանը: Ջոքսանչը, ցանկանալով ինչ-որ կերպ օգնել իրեն, հիփոթեքային վարկի միջոցով գնել է իրենց բնակարանը, և ըստ կարգի ներկայացնելով բոլոր փաստաթղթերը և գրավադնելով բնակարանը՝ նրա անվամբ կնքվել է վարկային և անշարժ գույքի գրավի պայմանագրեր: Ձևակերպվել է հիփոթեքային վարկ, իր հաշվին զոքսանչը փոխանցել է բնակարանի արժեքի 30% կանխավճարը, բարեխիղճ կերպով, յուրաքանչյուր ամիս գումարը տվել է իրեն, ինքն էլ բանկում նրա անվամբ կատարել է մարումները: Մեկ տարի անց՝ 2008 թվականի ամռանը, զոքսանչի ընտանիքի և իր համատեղ աշխատանքով հնարավորություն են ունեցել վարկն ամբողջությամբ փակելու և որպեսզի ավելորդ տոկոսներ չվճարեն բանկին՝ վարկն ամբողջությամբ մարել են և բնակարանն էլ արգելանքից հանել: Վարկի վերջին մարումը կատարելու ժամանակ մնացորդ կազմել է 3.600.000 ՀՀ դրամ, որն ամբողջովին տվել է բանկի կառավարիչ Արսեն Առաքելյանին: Այդ ժամանակ ներկա է եղել նաև Կարեն Խաչատրյանը: Գումարն Արսեն Առաքելյանին տալուց հետո նա ասել է, որ վարկն ամբողջությամբ մարված է, և հաջորդ օրն ինքը կարող է վերցնել բնակարանի սեփականության վկայականը և տեղեկանք, որպեսզի ներկայացնի կադաստր և բնակարանն արգելանքից հանի: Գումարի վճարման համար Արսեն Առաքելյանն իրեն անդորրագիր չի տվել: Գումարի վճարումից հետո, 2-3 օր անց, Կարեն Խաչատրյանը գնացել և վերցրել է բնակարանի սեփականության վկայականը: Հիշյալ ցուցմունքը վկա Արտյոմ Դավոյանը պնդել է նաև ամբաստանյալ Արսեն Առաքելյանի հետ առերես հարցաքննության ժամանակ:

Վկա Կարեն Խաչատրյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ Սևան քաղաքի բնակիչ Արտյոմ Դավոյանին ճանաչում է շատ վաղուց՝ նրա հետ ընկերական փոխհարաբերությունների մեջ է: 2006-2010 թվականներին աշխատել է նրան պատկանող գազի լցակայանում՝ որպես կոմպրեսորիստ: 2007 կամ 2008 թվականներին Արտյոմ Դավոյանը զոքսանչի՝ Ռուզաննա Ղարիբյանի անվամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» Սևանի մասնաճյուղում վարկ է ծնակերպել 5.000.000 ՀՀ դրամի չափով և խնդրել է իրեն երաշխավորել այդ վարկի հարցում: Ինքը նրան չի մերժել, նրա հետ գնացել են նշված բանկ և հանդես է եկել որպես երաշխավոր՝ ստորագրելով վարկային և երաշխավորության պայմանագրերը: Վարկը ստանալուց հետո Արտյոմ Դավոյանը մաս-

մաս այն մարել է, իսկ վերջին մարման ժամանակ ինքը Արտյոն Դավոյանի հետ գնացել է բանկ, նրանք միասին մտել են բանկի նախկին կառավարիչ Արսեն Առաքելյանի առանձնասենյակ, որտեղ Արտյոն Դավոյանը Արսեն Առաքելյանին է տվել մեծ գումար, իսկ վերջինս շնորհակալություն է հայտնել Արտյոն Դավոյանին՝ վարկն ամբողջությամբ մարելու համար: Սակայն այդ օրը վճարման անդորրագիր չեն տվել: Դրանից 2-3 օր անց, Արտյոն Դավոյանի խնդրանքով, ինքը գնացել է բանկ և ստացել Արտյոն Դավոյանի զոքանջի՝ Ռուզաննա Ղարիբյանի կողմից գրավադրված բնակարանի սեփականության վկայականը և գույքն արգելանքից հանելու վերաբերյալ Արսեն Առաքելյանի կողմից տրված գրությունը, որոնք տվել է Արտյոն Դավոյանին:

Անդրադառնալով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության կողմից Ռուզաննա Ղարիբյանին հասցեագրված և «25.12.2008» թվագրված գրությանը, որի ներքևում կատարված է գրառում՝ «ստացա մեկ օրինակը», «պարտավորվում եմ վճարումները կատարել մինչև տարվա վերջ» և առկա ստորագրություն՝ վկա Կարեն Խաչատրյանը նշել է, որ գրառումներն ու ստորագրությունն իր կողմից չեն կատարվել և ինքն այդ փաստաթղթից տեղյակ չէ: Վկա Կարեն Խաչատրյանն իր հիշյալ ցուցմունքը պնդել է նաև ամբաստանյալ Արսեն Առաքելյանի հետ առերես հարցաքննության ժամանակ:

Վերլուծելով վկաներ Ռուզաննա Ղարիբյանի, Արտյոն Դավոյանի և Կարեն Խաչատրյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքները, դրանք համադրելով այլ ապացույցների հետ՝ դատարանը գտնում է, որ նրանց ցուցմունքները չեն համապատասխանում գործով ձեռք բերված և դատաքննությամբ հաստատված մյուս ապացույցներին:

Հետևաբար՝ վկաներ Ռուզաննա Ղարիբյանի, Արտյոն Դավոյանի և Կարեն Խաչատրյանի ցուցմունքները դատարանն արժանահավատ չի համարում:

Վկա Ռոզա Խաչատրյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ 1997 թվականից հիմնադրել է «Աստղիկ» ՍՊ ընկերությունը և հանդիսացել է այդ ընկերության տնօրենը: Ներկայումս տնօրինությունը ստանձնել է իր դուստրը՝ Նելլի Գեղամյանը: Ընկերությունն ունի խանութ, որն իրականացնում է կենցաղային տեխնիկայի առուվաճառք: Գործունեության ընթացքում ընկերությունը պայմանագիր կնքել «Արդշինվեստբանկի», «ՎՏԲ-Հայաստան բանկի» և «ԱԿԲԱ բանկի» Սևանի մասնաձյուղերի հետ և նշված բանկերի մասնաձյուղերի միջոցով իրականացրել է կենցաղային տեխնիկայի ապառիկ վաճառք: Արթուր Թովմայանը մինչև 2008 թվականի մայիսն «Աստղիկ» ՍՊ ընկերությունում աշխատել է որպես վաճառող և նրա ամսական աշխատավարձը կազմել է 40-50 հազար ՀՀ դրամ: Ինչ վերաբերում է Սևան քաղաքի բնակիչներ Կարո Առաքելյանին, Ալեքսան Իսակովին, Ալեքսան Դավթյանին, Մխիթար Հովհաննիսյանին և Հայկ Մնացականյանին՝ ապա ինքը նրանց չի ճանաչում և ինչպես նշված անձանց, այնպես էլ Արթուր Թովմայանին ոչ մի անգամ աշխատավարձի վերաբերյալ տեղեկանք չի տվել: 2009 թվականի ապրիլի վերջերին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության աշխատակիցները ստուգումներ են անցկացրել Սևանի մասնաձյուղում, և հայտնել են իրեն, որ «Աստղիկ» ՍՊ ընկերության կողմից տրված տեղեկանքների հիման վրա բանկի մասնաձյուղում վարկեր են ձևակերպվել: Ինքը պատասխանել է, որ նման տեղեկանքներ չի տվել: Իր ներկայությամբ նրանք կանչել են Արթուր Թովմայանին և հարցրել, թե ինքը որևէ մեկին տեղեկանք տվել է, թե՛ ոչ: Արթուր Թովմայանը պատասխանել է, որ չի տվել: Այդ դեպքից հետո իր համար պարզ է դարձել, որ Արթուր Թովմայանը, կեղծելով իր ստորագրությունը, կազմել է կեղծ տեղեկանքներ և դրանց միջոցով իր աներոջ որդու՝

Կարեն Ղասաբօղլյանի հետ, որն աշխատում է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում՝ որպես վարկային բաժնի տնտեսագետ, տարբեր անձանց անուններով վարկեր է ձևակերպել:

Նշել է նաև, որ ապառիկ կարգով վաճառված ապրանքների գումարները «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից, իր գիտությամբ, ստացել է Արթուր Թովմասյանը: Գումարները ստանալու ժամանակ ինքը կնիքը տվել է Արթուր Թովմասյանին, որպեսզի նա բանկում գումարներն ստանալու ժամանակ կնքի համապատասխան անդորրագրերը: Օգտվելով այդ հանգամանքից, նա կազմել ու կնքել է կեղծ տեղեկանքներ և աներորդու՝ Կարեն Ղասաբօղլյանի հետ վարկեր է ձևակերպել: Վկա Ռոզա Խաչատրյանը գործի նախաքննության ընթացքում մահացել է:

Վկա Մխիթար Հովհաննիսյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ Սևան քաղաքի բնակիչ Արթուր Թովմասյանին ճանաչել է վաղուց և նրա հետ գտնվել է մոտ հարաբերությունների մեջ: Արթուր Թովմասյանն աշխատել է Սևան քաղաքի «Աստղիկ» ՍՊ ընկերությունում՝ որպես վաճառող: 2008 թվականին Արթուր Թովմասյանն իրեն ասել է, որ ցանկանում է ապառիկով ձեռք բերել կենցաղային տեխնիկա և խնդրել է ապառիկը ձևակերպել իր անունով, քանի որ նա արդեն ապառիկ վերցրել էր և առանց գումարը մարելու՝ չէր կարող երկրորդ անգամ վերցնել: Ինքը չի մերժել Արթուր Թովմասյանին: Նրան է տվել միայն անձնագրի և սոցիալական քարտի պատճենները: Ուրիշ փաստաթուղթ Արթուր Թովմասյանն իրենից չի ուզել, միայն խնդրել է, որ գումարի ստացման օրը գնա բանկ և ստորագրի, որին ինքը համաձայնել է: Սակայն Արթուր Թովմասյանն իրեն այլևս ոչինչ չի ասել և ինքն էլ բանկ չի գնացել ու կարծել է, որ վերջինս վարկը չի ձևակերպել: Դրանից հետո՝ մի քանի ամիս անց, իրեն են զանգահարել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից և հայտնել, որ ժամկետանց վարկ ունի իր անունով: Ինքը զանգահարել է Արթուր Թովմասյանին և պատմել կատարվածի մասին, նա էլ պատասխանել է, որ վարկը ձևակերպել և ստացել է, այժմ գնում է մուծումներ կատարելու, և որ այն ժամանակին կփակի: Այդպես էլ եղել է, քանի որ վարկի ամբողջական մարումից հետո Արթուր Թովմասյանն իրեն տվել է բանկի կտրոն՝ վարկի ամբողջական մարման վերաբերյալ: Այդ մասին, համակարգչում ստուգելով, իրեն ասել է նաև բանկի դրամարկղի աշխատակիցը: 2009 թվականի գարնանը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից ստացել է ծանուցագիր, որտեղ նշված է եղել, որ բանկում ունի 190.000 ՀՀ դրամի կենցաղային տեխնիկայի ժամկետանց վարկ: Հանդիպել է Արթուր Թովմասյանին և հարցրել պատճառը, նա էլ պատասխանել է, որ վարկի վերջին մարման գումարը տվել է վարկային բաժնի տնտեսագետ, նրա կնոջ եղբայր Կարեն Ղասաբօղլյանին, որպեսզի նա կատարի վճարումը, սակայն վերջինս, հավանաբար, գումարը դրամարկղ մուտք չի արել, չնայած որ, ըստ նրա տված կտրոնի, վարկն ամբողջությամբ մարված էր: Վարկի գումարն ինքը չի ստացել, բանկում ոչ մի փաստաթուղթ չի ստորագրել, իսկ «Աստղիկ» ՍՊ ընկերությունում 2005 թվականին ընդամենը մեկ ամիս եղել է ստաժոր և աշխատավարձ չի ստացել:

Վկա Արման Պողոսյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ 2007 թվականի փետրվարին, Ռուսաստանից Հայաստան վերադառնալիս, «Զվարթնոց» օդանավակայանում վերցրել են իր անձնագիրը և չեն վերադարձրել: Դիմում է գրել ստիկանություն՝ նոր անձնագիր ստանալու համար: 2008 թվականի գարնանը նոր անձնագիր է ստացել: 2008 թվականի մայիսի վերջերին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից իրեն ծանուցագիր են ուղարկել, որով հայտնել են, որ ինքը նշված մասնաճյուղից 450.000 ՀՀ դրամ վարկ է ստացել և

մարում չի կատարել: Գոյացել է նաև 66.000 ՀՀ դրամի տոկոսագումար՝ Որպեսզի պարզի, թե ինչ վարկի մասին է խոսքը՝ ինքը գնացել է մասնաձյուղ և հայտնել, որ երբեք նշված մասնաձյուղից վարկ չի վերցրել: Այդ ժամանակ մասնաձյուղի աշխատակիցներից մեկը համակարգչով ստուգել և ասել է, որ բացի ծանուցագրում նշված 450.000 ՀՀ դրամի վարկից, իր անվամբ գրանցված է նաև 1.000.000 ՀՀ դրամի գյուղատնտեսական վարկ՝ Ըստ բանկի աշխատակցի՝ այդ երկու վարկերն էլ ձևակերպվել են 2007 թվականի ընթացքում, այսինքն՝ այն ժամանակահատվածում, երբ ինքը կորցրած է եղել իր անձնագիրը և նորը դեռևս ստացած չի եղել: Վարկերից մեկը ձևակերպված է եղել կենցաղային տեխնիկա ձեռք բերելու համար, իսկ մյուսը՝ գյուղատնտեսական վարկ, որի դիմաց իբրև ինքը գրավ է դրել տրակտոր և հողամաս՝ Իր ավանդում ինքը երբեք տրակտոր կամ հողամաս չի ունեցել: Երբ այս ամենի մասին իմացել է՝ իր համար պարզ է դարձել, որ վարկերն իր անվամբ ձևակերպել է բանկի աշխատակից Կարեն Ղասաբոլյանը, որի հետ ինքը գտնվել է մոտ հարաբերությունների մեջ՝ 2007 թվականին, երբ վերադարձել է Ռուսաստանից, վարձակալել է «ԳԱԶ-3110» ավտոմեքենա և զբաղվել է ուղևորների փոխադրմամբ: Այդ ժամանակ Կարեն Ղասաբոլյանն աշխատել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղում՝ որպես վարկային բաժնի տնտեսագետ, և հաճախ է օգտվել իր ավտոմեքենայից: Մի քանի անգամ խնդրել է Կարեն Ղասաբոլյանին, վարկ ձևակերպել իր անվամբ, որպեսզի կարողանա ավտոմեքենա գնել, սակայն վերջինս պատասխանել է, որ չի կարող, քանի որ իրենց բանկը վարկեր չի տրամադրում: Դրանից ելնելով էլ նշել է, որ իր անվամբ վարկերը ձևակերպել է Կարեն Ղասաբոլյանը, իր կորցրած անձնագրի տվյալներով, որի պատճենը գտնվել է նշված ամտոմեքենայի մեջ: Հավանաբար Կարեն Ղասաբոլյանն այն վերցրել, վարկեր է ձևակերպել և նա էլ ստացել է գումարները: Ինքը Կարեն Ղասաբոլյանին ոչ մի փաստաթուղթ չի տվել, բանկ չի գնացել և ոչ մի բանկային փաստաթուղթ չի ստորագրել:

Վկա Արման Աղամայանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ իր անվամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղում ձևակերպված 2.000.000 ՀՀ դրամի վարկից ոչ մի տեղեկություն չունի, բանկ չի գնացել և այդ հարցով երբեք չի դիմել, իսկ ինչ վերաբերում է «Պենտիում» մակնիշի համակարգչի գրավադրմանը, ապա ինքը տանը համակարգիչ չունի և չի ունեցել: Նախկինում այդ բանկից վարկ է ստացել իր մայրը, սակայն իր անձնագիրը թե ինչպես է հայտնվել բանկում ինքը չգիտի և չի կարող ասել: Ինքը վարկ չի ստացել և դրա համար չի ստորագրել: «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի աշխատակից Կարեն Ղասաբոլյանին ձանաչում է՝ Իր մայրը և Կարեն Ղասաբոլյանի մայրը նախկինում միասին աշխատել են, սակայն նա իրենից անձնագիր կամ դրա պատճեն չի խնդրել:

Վկա Արսեն Սուքիասյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ 2008 թվականի հունվար կամ փետրվար ամսին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղից վարկ է վերցրել և «Աստղիկ» ՍՊ ընկերությունից ապառիկ կարգով ձեռք բերել կենցաղային տեխնիկա, որն ամբողջությամբ մարել է: Վարկի հետ կապված գործարքը կատարել է Կարեն Ղասաբոլյանը: «Աստղիկ» ՍՊ ընկերությունից կենցաղային տեխնիկա ձեռք բերելուց երկու օր անց հանդիպել է Կարեն Ղասաբոլյանին, որը խնդրել է իր անունով վարկ ձևակերպել, և այն ինքն էլ կփակի: Ինքը չի համաձայնել: Կարեն Ղասաբոլյանի հետ, վերջինս էլ ասել է, որ եթե համաձայն չէ՝ չի անի: Ինքը բանկում ձևակերպված իր անվամբ 1.000.000 ՀՀ դրամ վարկի հետ առնչություն չունի, վարկ չի վերցրել: Այդ վարկը ձևակերպել է Կարեն Ղասաբոլյանը և նա էլ կատարել է:

կեղծիքները հինքն ավտոմեքենա չի ունեցել և վարկի դիմաց գրավ չի դրել, ինչպես նաև չի ստորագրել վարկի ստացման դրամարկղի ելքի անդորրագրումը

Վկա Գուրգեն Առաքելյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ Արթուր Թովմայանին ճանաչել է վաղուց՝ միասին բանակում ծառայել են 2008 թվականի մարտի վերջերին Սևան քաղաքում պատահաբար հանդիպել է նրան, գրուցել են, հետո Արթուր Թովմայանը հարցրել է, թե անձնագիրն իր մոտ է՞ Ինքը պատասխանել է, որ իր մոտ է՞ Արթուր Թովմայանը խնդրել է իր անունով վարկ ձևակերպել, իսկ դրա մարումը նա կկատարի՞ Ինքը չի մերժել, և նրանք միասին գնացել են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղ՝ վարկային պատասխանատու Կարեն Ղասաբողյանի մոտ, որին ինքն այն ժամանակ չի ճանաչել Կարեն Ղասաբողյանը պատճենահանել է իր անձնագիրը, իսկ Արթուր Թովմայանն ասել է, որ իրականում վարկը Կարեն Ղասաբողյանին է անհրաժեշտ և նա է կատարելու մարումները: Իմանալով այդ մասին՝ հրաժարվել է գործարքից և վերցրել է անձնագիրը Հաջորդ օրը մեկնել է Ռուսաստան և մինչև 2008 թվականի դեկտեմբերն այլևս բանկ չի գնացել և նրանց չի հանդիպել Լյն մասին, որ իր անունով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում 1.900.000 ՀՀ դրամի վարկ է ձևակերպված և գրավադրված է ավտոմեքենա՝ իմացել է ոստիկանության Սևանի քննչական բաժանմունքում: Ինքն ավտոմեքենա չի ունեցել և բանկից վարկ չի վերցրել Լյդ վարկը, առանց իր գիտության, ձևակերպել է Կարեն Ղասաբողյանը՝ օգտագործելով իր անձնագրի պատճենը

Վկա Արթուր Սարգսյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ շուրջ 3-4 տարի առաջ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղ ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ ստացել է 500.000 ՀՀ դրամ վարկ՝ մեկ տարի մարման ժամկետով, որով Սևան քաղաքում գտնվող «Աստղիկ» ՍՊ ընկերության խանութից ձեռք է բերել կենցաղային տեխնիկա՝ Համաձայն բանկի հետ կնքած պայմանագրի՝ գրավադրվել են ձեռք բերված կենցաղային ապրանքները՝ Սահմանված ժամկետում ամբողջ վարկը մարել է 2007 թվականին դարձյալ նույն բանկից, օրինական փաստաթղթերով և գրավ դնելով իր ավտոմեքենան, վարկ է ստացել 1.500.000 ՀՀ դրամի չափով Բանկային ձևակերպումները կատարել է բանկի վարկային բաժնի տնտեսագետ Կարեն Ղասաբողյանը 2009 թվականին վարկն ամբողջությամբ մարել է և ավտոմեքենան արգելանքից դուրս բերել 2008 թվականի գարնանը «Հարսնաքար» հյուրանոցում հանդիպել է Կարեն Ղասաբողյանին, որն էլ խնդրել իր անվամբ բանկում վարկ ձևակերպել, որի դեպքում գումարը պետք է ստանար և մարումները կատարեր Կարեն Ղասաբողյանը Ինքը նրան մերժել է՝ պատճառաբանելով, որ արդեն վարկ վերցրել է և առանց մարելու չի կարող երկրորդը վերցնել 2009 թվականի գարնանն իրեն հանդիպել են բանկի աշխատակիցները և ասել, որ իր անունով 1.000.000 ՀՀ դրամի վարկ ունի ձևակերպած Ինքը պատասխանել է, որ այդ վարկից տեղյակ չէ և Ղա հավանաբար Կարեն Ղասաբողյանն է ձևակերպել իր անունով և ստացել գումարը, իսկ ձևակերպման համար օգտագործել է նախկին վարկի ձևակերպման համար իր կողմից ներկայացված փաստաթղթերը

Վկա Արման Ալեքսանյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ Կարեն Ղասաբողյանն իր մորաքրոջ տղան է, որը մինչև 2008 թվականի նոյեմբերն աշխատել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում՝ որպես վարկային բաժնի մասնագետ Իրենք գտնվել են նորմալ հարաբերություններին մեջ 2008 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից իրեն

զանգահարել է կառավարիչ Արսեն Առաքելյանը և կանչել բանկ, որտեղ իրեն հայտնել են, որ իր անունով վարկ ունի ձևակերպված և մարումներ չի կատարել: Ինքը զարմացել է և ասել, որ նշված բանկում ոչ մի գործարք չի կատարել և տեղյակ չէ այդ վարկից: Դրանից հետո հանդիպել է Կարեն Ղասաբոլյանին և հարցրել, թե ինչ վարկի մասին է խոսքը: Վերջինս պատասխանել է, որ նա է ձևակերպել վարկն իր անունով, սակայն անհանգստանալու կարիք չկա, որովհետև նա կմարի ամբողջ գումարը: 2009 թվականի մայիսին իրեն կրկին հրավիրել են բանկ և հայտնել, որ իր անվամբ երեք վարկ կա ձևակերպված, որոնցից երկուսը 1.000.000 ՀՀ դրամի չափով, իսկ մեկը՝ 1.400.000 ՀՀ դրամի չափով: Ինքը բացատրել է, որ ոչ մի վարկ չի վերցրել, ոչ մի փաստաթուղթ դրա վերաբերյալ չի ներկայացրել և չի ստորագրել: Այդ վարկերը ձևակերպել է Կարեն Ղասաբոլյանը՝ կեղծ փաստաթղթեր կազմելով և իր փոխարեն ստորագրելով, իսկ թե գումարներն ինչ է արել՝ ինքը չգիտի և ոչինչ ասել չի կարող:

Վկա Հերմինե Համբարձումյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ Բենիկ Օնիկի Ստեփանյանին վաղուց է ճանաչել: 2008 թվականի ամռանը Բենիկ Ստեփանյանը եկել է իրենց տուն և ասել, որ ցանկանում է ՎՏԲ բանկից վարկ վերցնել, սակայն դրա համար անհրաժեշտ են երեք հոգի՝ երաշխավոր, որոնցից երկուսը նրա քույրն ու հայրն են, ապա խնդրել է իրեն հանդես գալ որպես երրորդ երաշխավոր: Ինքը վստահելով նրան՝ համաձայնել է: Նրանք գնացել են բանկ, որտեղ Բենիկ Ստեփանյանին տվել է իր անձնագիրը և ստորագրել է ինչ-որ փաստաթղթեր: Վարկը ստացել է Բենիկ Ստեփանյանը, և ինքը չգիտի թե որքան գումար է այն կազմել: Բենիկ Ստեփանյանը նրան այդ մասին ոչինչ չի ասել: Դրանից հետո ինքն այլևս բանկ չի գնացել և անձամբ ընդհանրապես վարկ չի վերցրել, ավտոմեքենա չունի և գրավ չի դրել: Բենիկ Ստեփանյանն իրեն խաբել է և կեղծ փաստաթղթերի հիման վրա իր անվամբ ստացել 1.350.000 ՀՀ դրամի վարկը:

Վկա Համբարձում Բեգլարյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ 2007 թվականի ապրիլին «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղից 1.000.000 ՀՀ դրամ, երկու տարի մարման ժամկետով գյուղատնտեսական վարկ է վերցրել, որի համար գրավադրել է իր առանձնատունը: Վարկի ստացման համար իր կողմից բանկին ներկայացվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և մասնաճյուղի վարկային բաժնի տնտեսագետ Կարեն Ղասաբոլյանի միջոցով կնքվել են վարկային և գրավի պայմանագրեր: Որպես բարեխիղճ վարկառու՝ մեկ տարվա ընթացքում կատարել է մարումներ և 2008 թվականի հուլիսին, քանի որ գումար է ունեցել, որոշել է վարկն ամբողջությամբ մարել: Այդ նպատակով ինքն իր ընկերոջ՝ Արթուր Գրիգորյանի հետ գնացել են բանկ, այնտեղ հանդիպել Կարեն Ղասաբոլյանին: Հայտնել է իր մտադրության մասին, սակայն Կարեն Ղասաբոլյանն ասել է, որ ընդմիջման ժամ է և դրամարկղը փակ է, ու առաջարկել է գումարը թողնել նրա մոտ՝ խոստանալով ընդմիջման ավարտից հետո մուծել դրամարկղ, իսկ դրանից հետո ինքը կարող է գնալ և նրանից վերցնել տան սեփականության վկայականը: Վստահելով Կարեն Ղասաբոլյանին՝ ինքն Արթուր Գրիգորյանի ներկայությամբ 550.000 կամ 560.000 ՀՀ դրամ է տվել նրան, որն ամբողջությամբ պետք է մարեր վարկի գումարը: Այնուհետև, ըստ պայմանավորվածության, գնացել է բանկ և Կարեն Ղասաբոլյանից վերցրել իր առանձնատան սեփականության վկայականը և մի տեղեկանք, որն ինքը պետք է ներկայացներ կադաստր, որպեսզի տունն արգելանքից հանվեր: Վճարելու անդորրագիր Կարեն Ղասաբոլյանը տվել է, թե ոչ՝ չի հիշում: Դրանից հետո այլևս բանկ չի գնացել և գործարք չի կատարել: 2009 թվականի աշնանը իմացել է, որ իբրև իր վարկի մարումն ամբողջությամբ չի կատարել և

բանկին պարտք է մնացել 350.000 ՀՀ դրամ՝ Հասկացել է, որ Կարեն Ղասաբօղյանն իր տված գումարն ամբողջությամբ չի վճարել, այլ միայն 200.000 ՀՀ դրամն է մուտքագրել դրամարկղ, իսկ մնացածը յուրացրել էՔ

Վկա Գեղեցիկ Ավետիսյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ բնակվել է ամուսնու՝ Պապ Մանուկյանի և երեխաների հետՔ Իրենց շենքում բնակվել է նաև Ալինա Սարգսյանը, և իրենք ընտանիքներով մոտ ենՔ 2008 թվականի ամռանը, երբ ինքը դեռևս աշխատել է, ամուսինը գնացել է խանութ և իրեն տվել Ալինա Սարգսյանի անձնագիրըՔ Երբ հետաքրքրվել է, թե ինչու է վերցրել անձնագիրը՝ Պապ Մանուկյանն ասել է, որ ցանկացել է վարկ ձևակերպել, և Ալինա Սարգսյանն էլ պետք է հանդես գար որպես անձնագիրը տարել է տուն, ապա տվել Ալինա ՍարգսյանինՔ 2009 թվականի ամռանը, երբ ինքը գնացել է Ալինա Սարգսյանի տուն, այնտեղ են եկել նաև երկու երիտասարդ, ներկայացել որպես ՎՏԲ բանկի աշխատակիցներ և Ալինա Սարգսյանին հարցրել, թե ինչու իր ստացած վարկը չի փակումՔ Ալինա Սարգսյանը զարմացել է և ասել, որ ոչ մի վարկ չի ստացել ՎՏԲ բանկից, այնտեղ չի գնացել և ոչ մի փաստաթուղթ չի ստորագրելՔ Նրանք ասել են, որ այդ վարկը ձևակերպել և գումարը ստացել է իր ամուսինը՝ Պապ ՄանուկյանըՔ Երբ մի քանի օրից տուն է եկել ամուսինը, ասել է, որ իրոք Ալինա Սարգսյանի անունով վարկն ինքն է ձևակերպել։ Ստացել է կենցաղային տեխնիկա ու վաճառել այնՔ Սակայն ինքը չի տեսել, որ ամուսինը տուն բերի գազօջախ, լվացքի մեքենա կամ սառնարանՔ 2009 թվականի աշնանը բանկը դիմել է դատարան՝ Ալինա Սարգսյանից վարկի գումարը բռնագանձելու համար, սակայն վերջինս դատարան գնացել է, թե ոչ՝ ինքը չգիտիՔ Մեկ անգամ ինքն Ալինա Սարգսյանի հետ գնացել է բանկ, որտեղ վերջինս նոր կառավարչին ասել է, որ բանկ չի եկել, փաստաթուղթ չի ստորագրել և վարկ չի վերցրելՔ Դրանից հետո Ալինա Սարգսյանը դիմել է ոստիկանություն։

Վկա Արայիկ Սարգսյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ Ալինա Սարգսյանն իր մայրն է, և երբ ինքը վերադարձել է արտագնա աշխատանքից, վերջինս իրեն պատմել է, որ իրենց տուն են եկել ՎՏԲ բանկի աշխատակիցները և հարցրել, թե ինչու չի մարում իր անունով ձևակերպված 600.000 ՀՀ դրամի վարկը։ Մայրն ասել է նաև, որ նա վարկ չի ստացել և վարկի հետ որևէ առնչություն չունիՔ Պատմել է, որ 2008 թվականին իրենց հարևան Պապ Մանուկյանը խնդրել է վարկի ձևակերպման ժամանակ հանդես գալ որպես երաշխավոր, սակայն հետո վերադարձրել է անձնագիրը՝ ասելով, որ վարկը չի ստացվելՔ Դրանից հետո բանկը դիմել է դատարան, սակայն մայրը դատին չի մասնակցելՔ Ինքը գնացել է բանկի կառավարչի մոտ և հասկացել է, որ նա տեղյակ է գործից, քանի որ մայրը և Պապ Մանուկյանի կինը մինչ այդ եղել էին նրա մոտՔ Ինքը ցանկացել է հանդիպել և խոսել Պապ Մանուկյանի հետ, սակայն դա չի ստացվելՔ

Վկա Հովհաննես Վարդանյանը գործի նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ աշխատել է Սևանի քաղաքապետարանում՝ որպես առևտրի և սպասարկման բաժնի պետՔ «ՎՏԲ-Հայաստան բանկ» Սևանի մասնաճյուղի հետ ինքը միշտ էլ առնչություն ունեցել է, նաև իր թոշակն այնտեղից է ստանումՔ Հինգ-վեց տարի առաջ նշված բանկից վարկ է վերցրել և ամբողջությամբ մարելՔ Այդ ժամանակ իրենից պահանջել են տեղեկանքներ՝ բնակության վայրի, ընտանիքի կազմի և աշխատավարձի չափի մասին, անձնագրի պատճեն և բնակարանի սեփականության վկայականը, որոնք ինքը ներկայացրել է մասնաճյուղինՔ Բացի այդ, մեկ անգամ էլ հանդես է եկել որպես երաշխավոր իր հարևան Կարեն Հայրապետյանի կողմից վարկ վերցնելու ժամանակ և ստորագրել է երաշխավորության

պայմանագիրը՝ Ռաֆիկ Սուքիասյանին չի ճանաչում, նրա համար երաշխավոր հանդես չի եկել: Այն, որ այդ անձի վարկային գործում նշված են իր տվյալներն ու հասցեն, համոզված է, որ հենց մասնաձյուղի աշխատակիցներն են դրանք վերցրել նախկինում ձևակերպած վարկային գործից, որտեղ ինքը հանդես է եկել որպես երաշխավոր:

2009 թվականի նոյեմբերի 12-ի ձեռագրաբանական փորձաքննության ՀՆ 37470901 եզրակացությամբ հաստատված է, որ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի և Կարինե Ղասաբոլյանի միջև 21.01.2008թ. կնքված № 253 վարկային և կոշտ գրավի պայմանագրերի երկրորդ թերթերի «Վարկառու» մասում Կարինե Ղասաբոլյանի անունից ստորագրությունները հավանաբար չեն կատարվել Կարինե Ղասաբոլյանի կողմից, այլ կատարվել են մեկ այլ անձի կողմից: 2009 թվականի օգոստոսի 07-ի ձեռագրաբանական փորձաքննության ՀՆ 26210901 եզրակացությամբ հաստատված է, որ փորձաքննությանը տրամադրված 17.10.07թ., 08.11.07թ., 11.12.07թ., 17.12.07թ., 24.01.08թ., 06.02.08թ., 11.02.08թ. տեղեկանքներում ««Աստղիկ» ՍՊԸ-ի տնօրեն» և «Ռ. Խաչատրյան» բառերի միջև տեղավորված ստորագրությունները չեն կատարվել Ռոզա Սիրեկանի Խաչատրյանի կողմից, այլ կատարվել են մեկ այլ անձի /անձանց/ կողմից՝ Ռ. Խաչատրյանի ստորագրության ընդօրինակմամբ:

2009 թվականի սեպտեմբերի 15-ի ձեռագրաբանական փորձաքննության ՀՆ 30520901 եզրակացությամբ հաստատված է, որ փորձաքննությանը տրամադրված № 283 վարկային գործում առկա՝ 12.04.08թ. «ՎՏԲ-Հայաստան բանկ» Սևանի մասնաձյուղի № 283 վճարման հանձնարարագրի ներքևի մասում «Հաճախորդի ստորագրությունը» բառերի դիմաց, արտահաշվեկշռային մուտքի օրդերի «ստորագրություններ» տողագծերում, դիմում-հայտի ներքևի «Հայտատու» մասում, հաճախորդի վճարունակության վերլուծության միջնամասում «Հայտատուի ստորագրություն» տողագծում, վարկ /ավանդ.վարկեր/ ժամանակացույցի միջնամասում «Վարկառու» և «Է. Ալեքսանյան» բառերի միջև, գույքի հանձնման-ընդունման ակտի «Գույքը ընդունեց» մասում, կոշտ գրավի պայմանագրի երկրորդ թերթի «Վարկառու» մասում, վարկային պայմանագրի երկրորդ թերթի «Վարկառու» մասում տեղավորված ստորագրությունները, հավանաբար, չեն կատարվել էվելինա Ալեքսանյանի կողմից, այլ կատարվել են մեկ այլ անձի կողմից:

2009 թվականի հոկտեմբերի 06-ի ձեռագրաբանական փորձաքննության ՀՆ 34150901 եզրակացությամբ հաստատված է, որ փորձաքննությանը տրամադրված 13.12.07թ. № 7121300640584 ելքի դրամարկղային օրդերի վերևի ձախ մասում «Վճարել» բառի դիմաց տեղավորված ստորագրությունը /ձեռագիր/, հավանաբար, կատարվել է Գարուշ Թորոսյանի կողմից:

2010 թվականի մայիսի 17-ի ձեռագրաբանական փորձաքննության ՀՆ 06341001 եզրակացությամբ հաստատված է, որ փորձաքննությանը տրամադրված 03.06.2008թ. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Սևանի տարածքային ստորաբաժանման կառավարիչ՝ պ-ն Ա. Առաքելյանին ուղղված դիմում-հայտի ներքևի մասում «Հայտատու» բառի դիմաց «ստորագրություն» տողագծի վրա, 03.06.2008թ. կոշտ գրավի թիվ 300 պայմանագրի 2-րդ էջի ներքևի հատվածում «Վարկառու Սարգսյան Ալինա Աղվանի» բառերից ներքև, 03.06.2008թ. թիվ 300 վարկային պայմանագրի 2-րդ էջի ներքևի հատվածում «Վարկառու Սարգսյան Ալինա Աղվանի» բառերից ներքև, 03.06.2008թ. գույքի հանձնման-ընդունման ակտի ներքևի աջ հատվածում «Գույքը ընդունեց Ա. Սարգսյան» բառերից ներքև «ստորագրություն» տողագծի վրա տեղավորված ստորագրությունները, հավանաբար կատարվել են Ալինա Սարգսյանի կողմից:

2010 թվականի հունիսի 25-ի դատաձեռագրաբանական փորձաքննության Հմ 10-0521 եզրակացությամբ հաստատված է, որ՝

- Սարգիս Ռաֆիկի Ոսկանյանի անվամբ Գ 71 վարկային գործում առկա դիմումի «Հայտատու» բառի դիմաց, մեքենա-մեխանիզմի գնահատման թիվ Գ 71 ակտի «Գրավատու» տողի տակ, թիվ Գ 71 վարկային պայմանագրի «Վարկառու» տողի տակ, կոշտ գրավի Գ 71 պայմանագրի «Գրավատու» տողի տակ, երաշխավորության Գ 71 պայմանագրի «Պարտապան» տողի տակ տեղավորված, 23.10.07թ. արտահաշվեկշռային մուտքի օրդերների, 23.10.07թ. արժեքին ուղեկցող պիտակների, «ստորագրություններ» տողի դիմաց տեղավորված ստորագրությունները, հավանաբար չեն կատարվել Ս. Ոսկանյանի կողմից՝
- 23.10.07թ. կազմված դրամարկղային ելքի թիվ 7102300621862 օրդերի «Վճարել» բառի դիմաց տեղավորված ստորագրությունը կատարվել է Ս. Ոսկանյանի կողմից՝
- Սարգիս Ռաֆիկի Ոսկանյանի անվամբ Երաշխավորության Գ 71 պայմանագրի «Երաշխավոր» տողի տակ, 23.10.07թ. արտահաշվեկշռային մուտքի օրդերների և 23.10.07թ. արժեքին ուղեկցող պիտակների «ստորագրություններ» բառերի դիմաց, 08.04.08թ. թիվ 8040800683978 հայտարարագրի «Վճարող» բառի դիմաց, Քնքուշ Աղվանի Մելքոնյանի անվամբ Գ 106 վարկային գործում առկա Երաշխավորության Գ 106 պայմանագրի «Երաշխավոր» տողի տակ, Բենիկ Օնիկի Ստեփանյանի անվամբ Գ 75 վարկային գործում առկա դիմումի «Հայտատու» տողի դիմաց, Հայտ-ծրագրի «Հայտատուի ստորագրությունը» բառերի դիմաց, Մեքենա-մեխանիզմի գնահատման թիվ Գ 75 ակտի «Գրավատու» տողի տակ, կոշտ գրավի թիվ Գ-75 պայմանագրի «Գրավատու» տողի տակ, թիվ Գ 75 վարկային պայմանագրի 2-րդ թերթի «Վարկառու» տողի տակ, երաշխավորության Գ 75 պայմանագրի «Պարտապան» տողի տակ, ինչպես նաև 08.11.07թ. արտահաշվեկշռային մուտքի օրդերի և արժեքին ուղեկցող պիտակի «ստորագրություններ» տողի դիմաց տեղավորված, 17.05.08թ. ելքի դրամարկղային թիվ 8051700698770 օրդերի «Վճարել» բառի դիմաց տեղավորված ստորագրությունները, հավանաբար, կատարվել են Բենիկ Օնիկի Ստեփանյանի կողմից՝
- Սարգիս Ռաֆիկի Ոսկանյանի անվամբ Գ 71 վարկային գործում առկա Մեքենա-Մեխանիզմի գնահատման ակտի «գնահատող» տողի տակ, վարկային կոմիտեի թիվ Գ 71 որոշման վրա «անդամներ» և «Կ.Ղասաբօղյան» բառերի միջև, Քնքուշ Աղվանի Մելքոնյանի անվամբ Գ 106 վարկային գործում առկա 09.04.08թ. կազմված դրամարկղային ելքի թիվ 80409000684736 օրդերի «Պատասխ. կատարող» բառերի դիմաց, Կարեն Աղասու Առաքելյանի անվամբ թիվ 229 վարկային գործում առկա «Հաճախորդի վճարունակության վերլուծություն» փաստաթղթում «նպատակահարմար է» տողի դիմաց, Ալեքսան Լյովայի դավթյանի անվամբ թիվ 243 վարկային գործում առկա «Հաճախորդի վճարունակության վերլուծություն» փաստաթղթում «նպատակահարմար է» տողի դիմաց, Արման Օնիկի Պողոսյանի անվամբ 245 վարկային գործում առկա «Հաճախորդի վճարունակության վերլուծություն» փաստաթղթում «նպատակահարմար է» տողի դիմաց, 31.03.08թ. և 17.04.08թ. թիվ 8033100681727, 8041700688202 կանխիկ դրամի մուտքի հայտարարագրերի «Կատարող» բառի դիմաց և 19.11.07թ. Գ 78 վարկային գործի, որը մասնաձյուղում բացակայում է, ելքի դրամարկղային թիվ 7111900631998 օրդերի «պատասխ. կատարող» բառի դիմաց, Բենիկ Օնիկի Ստեփանյանի անվամբ Գ 75 վարկային գործում Մեքենա-Մեխանիզմի գնահատման Գ 75 ակտի «գնահատող» տողի տակ, Գուրգեն Սամվելի Առաքելյանի անվամբ Ա/Գ 105 վարկային գործով 24.03.08թ. կազմված ելքի դրամարկղային թիվ 8032400678331 օրդերի «Պատասխ.կատարող» բառի դիմաց տեղավորված ստորագրությունը կատարվել է Արա Մկրտչյանի կողմից՝

- Սարգիս Ռաֆիկի Ոսկանյանի անվամբ Ք 71 վարկային գործում առկա Մեքենա-Մեխանիզմի գնահատման թիվ Ք 71 ակտի ստորին մասում «կառավարիչ» և «Ա. Առաքելյան» բառերի միջև, վարկային կոմիտեի թիվ Ք 71 որոշման վրա «Վարկային կոմիտեի նախագահ» և «Ա. Առաքելյան» բառերի միջև, կոշտ գրավի պայմանագրի հակառակ երեսի ստորին ձախ մասում «կառավարիչ Ա. Առաքելյան» բառերի տակ, վարկային թիվ Ք 71 պայմանագրի 2-րդ էջի հակառակ երեսի ստորին ձախ մասում «Ա. Առաքելյան» բառերի դիմաց, երաշխավորության թիվ Ք 71 պայմանագրի հակառակ երեսի ստորին ձախ մասում «Ա. Առաքելյան» բառերի դիմաց, Քնքուշ Աղվանի Մելքոնյանի անվամբ Ք 106 ակտի ստորին մասում «կառավարիչ» և «Ա. Առաքելյան» բառերի միջև, կոշտ գրավի պայմանագրի հակառակ երեսի ստորին ձախ մասում «կառավարիչ Ա. Առաքելյան» բառերի տակ, վարկային և երաշխավորության թիվ Ք 106 պայմանագրերի ստորին ձախ մասում «Ա. Առաքելյան» բառերի դիմաց, Կարեն Աղասու Առաքելյանի անվամբ թիվ 229 վարկային գործում առկա դիմում-հայտի վերևի մասում, հաճախորդի վճարունակության վերլուծության «նպատակահարմար» տողի դիմաց, ժամանակացույցի վրա «կառավարիչ» և «Ա. Առաքելյան» բառերի միջև, վարկային և կոշտ գրավի պայմանագրերի վերջին էջերի ստորին ձախ մասերում «Ա. Առաքելյան» բառերի դիմաց, Ալեքսան Լյովայի Դավթյանի անվամբ թիվ 243 վարկային գործում առկա դիմում-հայտի վերևի մասում, հաճախորդի վճարունակության վերլուծության ստորին մասում «նպատակահարմար» տողի դիմաց, ժամանակացույցի վրա «կառավարիչ» և «Ա. Առաքելյան» բառերի միջև, վարկային և կոշտ գրավի պայմանագրերի վերջին էջերի ստորին ձախ մասերում «Ա. Առաքելյան» բառերի դիմաց, Արման Օնիկի Պողոսյանի անվամբ թիվ 245 վարկային գործում առկա դիմում-հայտի վերևի մասում, հաճախորդի վճարունակության վերլուծության վրա «նպատակահարմար» տողի դիմաց, ժամանակացույցի վրա «կառավարիչ» և «Ա. Առաքելյան» բառերի միջև, վարկային և կոշտ գրավի պայմանագրերի վերջին էջերի ստորին ձախ մասերում «Ա. Առաքելյան» բառերի դիմաց, Բենիկ Օնիկի Ստեփանյանի անվամբ Ք 75 վարկային գործում առկա Կոշտ գրավի պայմանագրի և վարկային պայմանագրերի վերջին էջերի ստորին ձախ մասերում «Ա. Առաքելյան» բառերի դիմաց, Էլմիրա Լյուդվիգի Վարդանյանի անվամբ 280 գործում առկա Դիմում-հայտի վերևի մասում հաճախորդի վճարունակության վերլուծության վրա «նպատակահարմար» տողի դիմաց, ժամանակացույցի վրա «կառավարիչ» և «Ա. Առաքելյան» բառերի միջև, վարկային և կոշտ գրավի պայմանագրերի վերջին էջերի ստորին ձախ մասերում «Ա. Առաքելյան» բառերի դիմաց, 27.03.2008թ. թիվ Ք 101 երաշխավորության պայմանագրի հակառակ երեսի ստորին ձախ մասում «Ա. Առաքելյան» բառերի դիմաց տեղավորված ստորագրությունները կատարվել են Արսեն Առաքելյանի կողմից՝ - Քնքուշ Աղվանի Մելքոնյանի անվամբ Ք 106 վարկային գործում առկա դիմումի ստորին մասում «Հայտատու» բառի դիմաց, Հայտ-ծրագրի ստորին ձախ մասում «Հայտատուի ստորագրությունը» տողերի դիմաց, Մեքենա-մեխանիզմի գնահատման ակտի վրա «Գրավատու» տողի տակ, կոշտ գրավի թիվ Ք 106 պայմանագրի հակառակ երեսի ստորին աջ մասում «Գրավատու» տողի տակ, թիվ Ք 106 վարկային պայմանագրի 2-րդ թերթի ստորին աջ մասում «Վարկառու» տողի տակ, երաշխավորության թիվ Ք 106 պայմանագրի հակառակ երեսի ստորին աջ մասում «Պարտապան» տողի տակ, 09.04.08թ. թվագրված, 8115 համարով արտահաշվեկշռային մուտքի օրդերի և արժեքին ուղեկցող պիտակի վրա «ստորագրություններ» տողերի դիմաց, 09.04.08թ. կազմված դրամարկղային էլքի թիվ 8040900684736 օրդերի վրա «Վճարել» բառի դիմաց տեղավորված ստորագրությունները կատարվել են Քնքուշ Մելքոնյանի կողմից՝ - Ալեքսան Լյովայի Դավթյանի անվամբ թիվ 243 վարկային գործում առկա դիմում-հայտի ստորին աջ մասում, հաճախորդի

վճարունակության վերլուծության ստորին աջ մասում, թիվ 243 վարկային պայմանագրի 2-րդ թերթի հակառակ երեսի ստորին աջ մասում «Վարկառու» և կոշտ գրավի թիվ 243 պայմանագրի 2-րդ թերթի ստորին աջ մասում «Գրավատու» տողի տակ, ժամանակացույցի վրա «Վարկառու» տողի դիմաց, 11.12.2007թ. արտահաշվեկշռային մուտքի օրդերի և արժեքին ուղեկցող պիտակի վրա «ստորագրություններ» տողի դիմաց, թիվ 243 վճարման հանձնարարագրի վրա «Հաճախորդի ստորագրությունը» տողում տեղավորված ստորագրությունները, հավանաբար, չեն կատարվել Ա. Ղալթյանի կողմից, այլ կատարվել են մեկ այլ անձի կողմից՝

- Արսեն Ռաֆիկի Սուքիասյանի անվամբ Գ 94 վարկային գործով 15.02.08թ. կազմված դրամարկղային էլքի թիվ 8021500665393 օրդերի «Վճարել» բառի դիմաց տեղավորված ստորագրությունը կատարվել է Ա. Սուքիասյանի կողմից՝
- Արման Հայկարամի Աղամայանի անվամբ Ա/Գ 76 վարկային գործով 25.12.07թ. կազմված դրամարկղային էլքի թիվ 7122500645671 օրդերի վրա «Վճարել» բառի դիմաց տեղավորված ստորագրությունը չի կատարվել Ա. Աղամայանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից՝
- Արման Մերուժանի Ալեքսանյանի անվամբ Գ 104 վարկային գործով 07.04.08թ. թիվ 8040700683331, Ա/Գ 103 վարկային գործով 17.03.08թ. թիվ 8031700676496 և Գ 101 վարկային գործով 27.03.08թ. կազմված դրամարկղային էլքի թիվ 8032700679840 օրդերների վրա «Վճարել» բառի դիմաց, 27.03.2008թ. թիվ Գ 101 երաշխավորության պայմանագրի հակառակ երեսի ստորին աջ մասում «Պարտապան» բառի տակ տեղավորված ստորագրությունները կատարվել են Ա. Ալեքսանյանի կողմից՝
- Նվեր Սամվելի թովմասյանի անվամբ Գ 107 վարկային գործով 14.04.08թ. կազմված դրամարկղային էլքի թիվ 8041400686973 օրդերի վրա «Վճարել» բառի դիմաց տեղավորված ստորագրությունը կատարվել է Նվեր Թովմասյանի կողմից՝
- 27.03.2008թ. թիվ Գ 101 երաշխավորության պայմանագրի հակառակ երեսի ստորին մասում «Երաշխավոր» բառի տակ տեղավորված ստորագրությունը կատարվել է Արթուր Սարգսյանի կողմից՝
- Էդուարդ Հրաչիկի Բարեղամյանի անվամբ Գ 114 վարկային գործով 02.06.08թ. կազմված դրամարկղային էլքի թիվ 8060200703756 օրդերի վրա «Վճարել» բառի դիմաց տեղավորված ստորագրությունը կատարվել է Է. Բարեղամյանի կողմից՝
- Արթուր Աշոտի Վարդանյանի անվամբ թիվ Ա/Գ 125 վարկային գործում առկա արտահաշվեկշռային մուտքի օրդերի և արժեքին ուղեկցող պիտակի «ստորագրություններ» բառերի դիմաց, Դիմում-հայտի ստորին մասում «Հայտատու» բառի դիմաց, Կոշտ գրավի պայմանագրի հակառակ երեսին «Գրավատու-Վարկառու» տողի տակ, վարկային պայմանագրի հակառակ երեսի ստորին մասում «Վարկառու» տողի տակ, շարժական գույքի նկատմամբ իրավունքների մասին հայտարարության միջին մասում «Ա. Ա. Վարդանյան» բառերի դիմաց, ինչպես նաև 27.08.08թ. կազմված դրամարկղային էլքի թիվ 8082700733698 օրդերի վրա «Վճարել» բառի դիմաց տեղավորված ստորագրությունները կատարվել են Ա. Վարդանյանի կողմից՝
- Արթուր Աշոտի Վարդանյանի անվամբ թիվ Ա/Գ 125 վարկային գործում առկա 25.08.2008թ. տեղեկանքում անհատ ձեռնարկատեր բառերի դիմաց տեղավորված ստորագրությունը , հավանաբար չի կատարվել Հ. Ղարիբյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից՝
- Արթուր Աշոտի Վարդանյանի անվամբ թիվ Ա/Գ 125 վարկային գործում առկա 25.08.2008թ. տեղեկանքում «ԱՄԿ» ՍՊԸ տնօրեն» բառերի դիմաց տեղավորված ստորագրությունը , հավանաբար չի կատարվել Մ. Անտոնյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից՝
- Էլմիրա Լյուդվիգի Վարդանյանի անվամբ թիվ 280 վարկային

գործում առկա արտահաշվեկշռային օրդերի, արժեքին ուղեկցող պիտակի վրա «ստորագրություններ» բառերի դիմաց, վճարման թիվ 280 հանձնարարագրի ստորին մասում «Հաճախորդի ստորագրությունը» բառի դիմաց, դիմում-հայտի ստորին ծախ մասում «հայտատու» տողի, հաճախորդի վճարունակության վերլուծության վրա «հայտատուի ստորագրություն» տողի, ժամանակացույցի վրա «Վարկառու» բառի դիմաց, կոշտ գրավի թիվ 280 պայմանագրի 3-րդ էջի ստորին աջ մասում «Վարկառու» բառի տակ, վարկային թիվ 280 պայմանագրի 3-րդ էջի ստորին աջ մասում «Վարկառու» բառի տակ տեղավորված ստորագրությունները, հավանաբար չեն կատարվել է. Վարդանյանի կողմից, այլ կատարվել են մեկ այլ անձի կողմից՝

- Արթուր Մերուժանի Թովմասյանի անվամբ Ա/Գ 113 վարկային գործով կազմված էլքի դրամարկղային թիվ 8051900699079 օրդերի վրա «Վճարել» բառի դիմաց տեղավորված «Թովմասյան» ձեռագիր գրառումը չի կատարվել Ա. Թովմասյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից՝

- Արթուր Թովմասյանի անվամբ Ա/Գ 113 վարկային գործով կանխիկ դրամի մուտքի թիվ 8062500711757 հայտարարագրի վրա «Վճարող» բառի տակ տեղավորված «Արթուր» ձեռագիր գրառումը չի կատարվել Ա. Թովմասյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից՝

- Կարեն Աղասու Առաքելյանի անվամբ թիվ 229 վարկային գործում առկա Գույքի հանձնման ընդունման ակտի վրա «Գույքը հանձնեց» բառերի տակ, Արման Օնիկի Պողոսյանի անվամբ թիվ 245 վարկային գործում առկա գույքի հանձնման-ընդունման ակտի վրա «գույքը հանձնեց» բառերի տակ, Ալեքսան Լյովայի Դավթյանի անվամբ թիվ 243 վարկային գործում առկա Գույքի հանձնման - ընդունման ակտի վրա «գույքը հանձնեց» բառերի տակ, Արտակ Գրիշայի Թորոսյանի անվամբ թիվ 248 վարկային գործում առկա 25.12.2007թ. գույքի հանձնման-ընդունման ակտի ստորին ծախ մասում «գույքը հանձնեց» բառերի տակ, Պավել Գաբրիելյանի անվամբ թիվ 259 վարկային գործում առկա 11.02.08թ. գույքի հանձնման -ընդունման ակտի ստորին ծախ մասում «գույքը հանձնեց» բառերի տակ ստորագրությունները կատարվել են Ա. Թովմասյանի կողմից՝

- Կարեն Աղասու Առաքելյանի անվամբ թիվ 229 վարկային գործում առկա Դիմում-հայտի վրա «Հայտատու» տողի դիմաց, հաճախորդի վճարունակության վերլուծության ստորին ծախ մասում «Հայտատուի ստորագրություն» բառերի վերևում, կոշտ գրավի թիվ 229 պայմանագրի 2-րդ էջի ստորին աջ մասում «Գրավատու» բառի տակ թիվ 229 վարկային պայմանագրի 2-րդ թերթի հակառակ երեսի ստորին աջ մասում «Վարկառու» տողի տակ, ինչպես նաև ժամանակացույցի վրա «Վարկառու» բառի դիմաց, 08.11.07թ. արտահաշվեկշռային մուտքի օրդերի և արժեքին ուղեկցող պիտակի վրա «ստորագրություններ» բառերի դիմաց, 08.11.07թ. թիվ 229 վճարման հանձնարարագրի ստորին աջ մասում «Հաճախորդի ստորագրությունը» բառի դիմաց տեղավորված ստորագրությունները, հավանաբար, չեն կատարվել Կ. Առաքելյանի կողմից, այլ կատարվել են մեկ այլ անձի կողմից՝

- Կարեն Աղասու Առաքելյանի անվամբ թիվ 229 վարկային գործում առկա Գույքի հանձնման ընդունման ակտի վրա «գույքը ընդունեց» բառերի տակ տեղավորված ստորագրությունը չի կատարվել Կ. Առաքելյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից՝

- Հերմինե Հովիկի Համբարձումյանի անվամբ Ա/Գ 119 վարկային գործով 27.06.08թ. դրամարկղային էլքի թիվ 8062700712927 օրդերի վրա «Վճարել» բառի դիմաց տեղավորված ստորագրությունը, հավանաբար, չի կատարվել Հերմինե Համբարձումյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից՝

- Գայանե Գագիկի Մուշեղյանի անվամբ 23.11.07թ. էլքի դրամարկղային թիվ 7112300633529 օրդերի վրա «Վճարել» բառի դիմաց տեղավորված ստորագրությունը, հավանաբար, չի կատարվել Գայանե Գագիկի Մուշեղյանի կողմից, այլ կատարվել է

մեկ այլ անձի կողմից՝

- Գայանե Գազիկի Մուշեղյանի անվամբ 10.12.08թ. կանխիկ դրամի մուտքի թիվ 8121000769890 հայտարարագրի ստորին աջ մասում «Կատարող» բառի դիմաց տեղավորված ստորագրությունը կատարվել է Ա. Մկրտչյանի կողմից՝

- Գայանե Գազիկի Մուշեղյանի անվամբ 30.07.08թ. թիվ 8073000723770 օրդերի ստորին ծախ մասում «Վճարող» բառի տակ տեղավորված «Գայանե» ձեռագիր գրառումը, հավանաբար, կատարվել է Կարեն Ղասաբօղյանի կողմից՝

- Արտակ Գրիշայի Թորոսյանի անվամբ թիվ 248 վարկային գործում առկա 25.12.2007թ. գույքի հանձնման-ընդունման ակտի ստորին աջ մասում «Գույքը ընդունեց» բառերի տակ տեղավորված ստորագրությունը, հավանաբար չի կատարվել Արտակ Թորոսյանի կողմից, այլ կատարվել է մեկ այլ անձի կողմից՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի մարտի 25-ի թիվ ԳՂ4/0482/02/09 վճռի համաձայն՝ 2010 թվականի փետրվարի 02-ի ձեռագրաբանական փորձաքննության Հմ 43620901 եզրակացությամբ հաստատված է, որ փորձաքննությանը տրամադրված տրամադրված № 234

վարկային գործում առկա փաստաթղթերում «Կարեն Նավասարդյան» բառերի մոտ տեղավորված ստորագրությունները, հավանաբար, կատարվել են Կարեն Նավասարդյանի կողմից՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի մարտի 24-ի թիվ ԳՂ4/0493/02/09 վճռի համաձայն՝ 2010 թվականի փետրվարի 01-ի ձեռագրաբանական փորձաքննության Հմ 44300901 եզրակացությամբ հաստատված է, որ փորձաքննությանը տրամադրված տրամադրված № Գ-105

վարկային գործում առկա փաստաթղթերում «Թամարա Համբարձումյան» բառերի մոտ տեղավորված ստորագրությունները կատարվել են Թամարա Համբարձումյանի, իսկ «Քանաքարա Ստեփանյան» բառերի մոտ տեղավորված ստորագրությունները, հավանաբար, կատարվել են Քանաքարա Ստեփանյանի կողմից՝

Ղատահաշվապահական փորձաքննության Հմ 09-1943 եզրակացությամբ հաստատված է, որ՝

- Կենցաղային ապրանքների ձեռք բերման համար «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի կողմից վարկերի վճարման ժամանակ չեն պահպանվել ««ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության համակարգում Ապրանքների (կենցաղային և համակարգչային տեխնիկա, կահույք և այլ ապրանքների) ձեռք բերման նպատակով վարկերի տրամադրման Ընթացակարգով» նախատեսված դրույթներն, ինչպես նաև վարկերը տրամադրվել են առանց Ընթացակարգով նախատեսված փաստաթղթերի առկայության:

- «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի կողմից այլ գրավի վարկերի վճարման ժամանակ չեն պահպանվել «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության համակարգում ֆիզիկական անձանց այլ գրավի ապահովվածությամբ վարկերի տրամադրման «Ընթացակարգով» նախատեսված դրույթներն, ինչպես նաև վարկերը տրամադրվել են առանց Ընթացակարգով նախատեսված փաստաթղթերի առկայության՝

- «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի կողմից գյուղատնտեսական վարկերի վճարման ժամանակ չեն պահպանվել ««Գյուղատնտեսական վարկերի տրամադրման» Կանոնակարգով» նախատեսված դրույթներն, ինչպես նաև վարկերը տրամադրվել են առանց կանոնակարգով նախատեսված փաստաթղթերի առկայության:

- «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Սևանի մասնաճյուղի կողմից, ըստ սույն փորձաքննությանը ներկայացված փաստաթղթերի, կենցաղային տեխնիկայի ձեռք բերման, այլ գրավով և գյուղատնտեսական վարկերը վերջին հաշվով տրամադրվել են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Սևանի մասնաճյուղի գլխավոր

հաշվապահի կողմից ղեկավարվող հաշվապահության կողմից՝ փոխանցումներով կատարված վճարումների դեպքում և Հաշվեգործառնական բաժնի դրամարկղի միջոցով՝ կանխիկ դրամով կատարված վճարումների դեպքում՝

- Փորձաքննությանը ներկայացված բոլոր վարկերի տրամադրման դեպքում /բացառությամբ թիվ 283 վարկային գործի/ վարկերը տրամադրվել են առանց ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետի կողմից համապատասխան վարկային փաստաթղթերի հիման վրա կազմված և մասնաձյուղի կառավարչի ստորագրած «Կարգադրություն հաշվապահությունը» փաստաթղթի՝ - թիվ 283 /վարկառու Էվելինա Ալեքսանյան/, Ա/Գ 108 /վարկառու Արման Նորիկի Ղարիբյան/, Ա/Գ 96 /վարկառու Վալիկո Հայկազի Գևորգյան/, Ա/Գ 100 /վարկառու Մանվել Մառլենի Կարապետյան/, Ա/Գ 71 /վարկառու Մարիետա Ռաֆիկի Գասպարյան/, Ա/Գ 93 /վարկառու Արմեն Լևոնի Գևորգյան/, Ա/Գ 102 /վարկառու Ներսես Դերենիկի Գրիգորյան/, 284 /վարկառու Արտակ Գրիշայի Թորոսյան/, 258 /վարկառու Մխիթար Փայլակի Հովաննիսյան/, 259 /վարկառու Պավել Սուրիկի Գաբրիելյան/, 302 /վարկառու Վարդան Մարտինի Գալստյան/, 305 /վարկառու Մերի Գառնիկի Սիմոնյան/, 312 /վարկառու Յուրի Կառլենի Հովհաննիսյան/, 308 /վարկառու ժամենա Լյուդվիգի Ալեքսանյան/, 315 /վարկառու Կարեն Վարդգեսի Սաֆարյան/, 316 /վարկառու Էդգար Էդիկի Մխիթարյան/, Գ 82 /վարկառու Գայանե Գագիկի Մուշեղյան/, Գ 97 /վարկառու Մերի Հարությունի Գրիգորյան/, Գ 96 /վարկառու Մարտիկ Գրիգորի Սահակյան/, Գ 99 /վարկառու Արմեն Ռուբիկի Բաղայան/, Գ 101 /վարկառու Արման Մերուժանի Ալեքսանյան/, Գ 100 /վարկառու Արթուր Սանվելի Կալու/, Գ 11< /վարկառու Արսեն Յուրիկի Մանուկյան/, Գ 110 /վարկառու Նարինե Մնացականի Ասատրյան/, Գ 89 /վարկառու Հասմիկ սերոբի Առաքելյան/ և Գ 85 /վարկառու Յուրիկ Նահապետի Սիմոնյան/ վարկային գործերում, բացի վարկային պայմանագրերից, բացակայում են հիմնականում վարկառուի դիմում հայտը, վարկառուի վարկունակության վերլուծությունը, գրավի պայմանագիրը և «Հաշվապահությանը կարգադրությունը»:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղում 2010 թվականի մայիսի 15-ից 21-ն անցկացված ստուգման հաշվետվությամբ պարզվել է, որ վարկերից 23-ի /ԱԳ 196, ԱԳ 76, ԱԳ 105, ԱԳ 113, ԱԳ 114, ԱԳ 122, Գ 95, ԱԳ 119, ԱԳ 118, ԱԳ 112, Գ 7, ԱԳ 117, ԱԳ 121, ԱԳ 111, ԱԳ 103, Գ 104, Գ 115, Գ 114, Գ 112, Գ 107, Գ 94, Գ 88, Գ 78/ վարկային գործերը բանկում ընդհանրապես բացակայում են: Եվս 8 վարկային գործերում բացակայում են վարկային պայմանագրերը /Գ 113, Գ 100, Գ 258, Գ 248, Գ 259, Գ 202, Գ 309, Գ 312/, ընդ որում այդ գործերում առկա են ընդամենը վարկառուի կամ վարկի հետ առնչվող մեկ կամ մի քանի փաստաթուղթ /օրինակ՝ առկա է միայն վարկառուի անձնագրի պատճեն, կամ առկա է միայն տեղեկանք բնակության վայրից, կամ առկա է միայն տեղեկանք աշխատանքի վայրից և այլն/՝ Այսպիսով կարելի է փաստել, որ 31 գործով վարկային գործեր առկա չեն: Վարկային 15 գործերի պատճենների /բնօրինակներն առգրավված են/ ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցում բացակայում են Բանկի ներքին իրավական ակտերով պահանջվող մի շարք փաստաթղթեր: Մասնավորապես.

- բացակայում է վարկառուի դիմումը /< 31, Գ 82, Գ 101/
- բացակայում է բնակության վայրից տեղեկանքը /280,283/
- բացակայում է աշխատանքի վայրից տեղեկանքը /280, 245, < 31, Գ 75, Գ 82/
- բացակայում է հաճախորդի վճարունակության վերլուծությունը (վարկային եզրակացությունը) /ԱԳ 125, < 31, Գ 106, Գ 105, Գ 70, Գ 75, Գ 67, Գ 71, Գ 82, Գ 101/
- բացակայում է հաշվապահության կարգադրությունը /ԱԳ 125, < 31, Գ 106, Գ 105, Գ 70, Գ 75, Գ 67, Գ 71, Գ 82, Գ 101, 280, 234, 253,

245, 283/

- բացակայում է մասնաձյուղի վարկային կոմիտեի որոշումը կամ մասնաձյուղի կառավարիչի հաստատումը /ԱԳ 125, Հ 31, Գ 106, Գ 105, Գ 82, Գ 101, 253, 245, 283/
- բացակայում է վարկային պայմանագիրը /Գ 82, Գ 101/
- բացակայում է գրավի պայմանագիրը /Գ 101/
- բացակայում է գրավի գնահատման ակտը /Գ82, Գ 101/
- բացակայում է հաշիվ ապրանքագիրը /283/
- բացակայում է կանխավճարի մուծման օրդերը /280, 234, 253, 245, 283/

- բացակայում է որպես գրավ ընդունված տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիրը

- գույքի ընդունման – հանձնման ակտը ստորագրված չէ հաճախորդի կողմից /280/:

Եթե վարկային գործերը և փաստաթղթերը բացակայել են նաև վարկերի տրամադրման ժամանակ, ապա կարելի է փաստել, որ Բանկի մասնաձյուղի աշխատակիցների կողմից խախտվել են Բանկի վարկավորման ներքին իրավական ակտերի պահանջները, քանի որ առանց համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման և վարկային գործի կազմման (այդ թվում համապատասխան պայմանագրերի կնքման) վարկունակության գնահատում և վարկերի տրամադրման վերաբերյալ համարժեք որոշումների կայացում չէր կարող իրականացվել:

Բացի այդ, Կարեն Ղասաբոլյանին, Օնիկ Ստեփանյանին, Արման Ալեքսանյանին, Թամարա Համբարձումյանին տրամադրված վարկերով խախտվել են միևնույն վարկատեսակով մեկ փոխառուի գործով Սևանի մասնաձյուղի համար սահմանված վարկի առավելագույն գումարի սահմանաչափերը:

Ստուգման օրվա դրությամբ վարկային գործերի բացակայության, ինչպես նաև թերի փաստաթղթերի առկայության պարագայում կարելի է փաստել, որ վարկային պատասխանատու Կարեն Ղասաբոլյանի կողմից չի պահպանվել վարկային գործերի կազմման ընթացակարգը՝ Արման Հայկարամի Աղամալյանի, Արտակ Գրիշայի Թորոսյանի, Կարինե Վարդգեսի Ղասաբոլյանի, Արթուր Մերուժանի Թովմասյանի, Մանվել Մառլենի Կարապետյանի, Գուրգեն Սամվելի Առաքելյանի, Արման Մերուժանի Ալեքսանյանի, Թամարա Ավետիքի Համբարձումյանի, Քնքուշ Մելքոնյանի, Էվելինա Խալտուրի Ալեքսանյանի, Նվեր Սամվելի Թովմասյանի, Բենիկ Օնիկի Ստեփանյանի, Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանի, Քանաքարա Օնիկի Ստեփանյանի, Հերմինե Հովհիկի Համբարձումյանի, Ժասմենա Լյուդվիգի Ալեքսանյանի, Յուրի Կառլենի Հովհաննիսյանի, Արթուր Աղվանի Կարոնյանի անուններով վարկերի տրամադրում և դրանից հետո 5 օրերի ընթացքում վարկերի մարման վճարումներ են կատարվել Կարեն Նավասարդյանի, Կարեն Առաքելյանի, Ալեքսան Դավթյանի, Ալեքսանդր Իսակովի, Պավել Գաբրիելյանի, Կարինե Ղասաբոլյանի, Օնիկ Ստեփանյանի, Արման Պողոսյանի, Էլմիրա Վարդանյանի, Բենիկ Ստեփանյանի, Հայկ Մնացականյանի, Արտակ Թորոսյանի, Հերմինե Համբարձումյանի, Քանաքարա Ստեփանյանի անվամբ մասնաձյուղում ձևակերպված վարկային գործերով:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղից առգրավված և իրեղեն ապացույցներ ձանաչված հետևյալ վարկային գործերով ու դրամարկղային էլքի վճարման անդորրագրերով.

- Արտակ Գրիշայի Թորոսյանի անվամբ թիվ 248 վարկային գործով,
- Պավել Յուրիկի Գաբրիելյանի անվամբ թիվ 259 վարկային գործով,
- Ժասմենա /Էվելինա/ Լյուդվիգի Ալեքսանյանի անվամբ թիվ 308 վարկային գործով,
- Յուրի Կառլենի Հովհաննիսյանի անվամբ թիվ 312 վարկային գործով,
- Արման Օնիկի Պողոսյանի անվամբ թիվ 245 վարկային գործով,
- Կարեն Լյովայի Նավասարդյանի անվամբ թիվ 234 վարկային

- գործով,
- Կարինե Վարդգեսի Ղասաբողյանի անվամբ թիվ 253 վարկային գործով,
 - Էլմիրա Լյուդվիգի Վարդանյանի անվամբ թիվ 280 վարկային գործով,
 - Էվելինա Խալտուրի Ալեքսանյանի անվամբ թիվ 283 վարկային գործով,
 - Հայկ Սերյոժայի Մնացականյանի անվամբ թիվ 255 վարկային գործով,
 - Ալեքսանդր Համլետի Իսակովի անվամբ թիվ 246 վարկային գործով,
 - Կարեն Աղասիի Առաքելյանի անվամբ թիվ 229 վարկային գործով,
 - Ալեքսան Լյովայի Դավթյանի անվամբ թիվ 243 վարկային գործով,
 - Մխիթար Փայլակի Հովհաննիսյանի անվամբ թիվ 258 վարկային գործով,
 - Արմեն Օնիկի Պողոսյանի անվամբ թիվ Գ 78 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 7111900631998 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Արման Հայկարամի Աղամալյանի անվամբ թիվ Ա/Գ 76 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 712250064567 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Գարուշ Էդիկի Թորոսյանի անվամբ թիվ Գ 88 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 7121300640584 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Արսեն Ռաֆիկի Սուքիասյանի անվամբ թիվ Գ 94 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8021500665393 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Նվեր Սամվելի Թովմասյանի անվամբ թիվ Գ 107 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8041400686973 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Գուրգեն Սամվելի Առաքելյանի անվամբ թիվ Ա/Գ 105 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 80332400678331 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Էլմիրա Լյուդվիգի Վարդանյանի անվամբ թիվ Ա/Գ 117 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8060600704647 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Արթուր Ռուդիկի Սարգսյանի անվամբ թիվ Գ 112 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8042100689274 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Կարեն Վարդգեսի Ղասաբողյանի անվամբ թիվ Ա/Գ 114 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8051400701055 օրդերով, դրա քսերոպատճենով և թիվ 8073000723754 հայտարարագրով,
 - Կարեն Վարդգեսի Ղասաբողյանի անվամբ թիվ Գ 95 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8022000666752 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Կարեն Վարդգեսի Ղասաբողյանի անվամբ թիվ Ա/Գ 122 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8073000723747 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Արման Մերուժանի Ալեքսանյանի անվամբ թիվ Ա/Գ 104 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8040700683331 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Արման Մերուժանի Ալեքսանյանի անվամբ թիվ Ա/Գ 103 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8031700676496 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Արման Մերուժանի Ալեքսանյանի անվամբ թիվ Ա/Գ 101 վարկային գործով, ելքի դրամարկղային թիվ 8032700679840 օրդերով,
 - Սարգիս Ռաֆիկի Ոսկանյանի անվամբ Գ 71 համարի վարկային գործով,
 - Բենիկ Օնիկի Ստեփանյանի անվամբ թիվ Ա/Գ 112 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8051700698770 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Թամարա Ավետիքի Համբարձումյանի անվամբ թիվ Ա/Գ 115

- վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8080300703976 օրդերով և դրա քսերոպատճենով,
- Քանաքարա Օնիկի Ստեփանյանի անվամբ թիվ Ա/Գ 118 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8061600708895 օրդերով և դրա քսերոպատճենով, ինչպես նաև թիվ 8082700733885 և 8082700738882 հայտարարագրերով,
 - Օնիկ Արմենակի Ստեփանյանի անվամբ թիվ Գ 79 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 7111900632188 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Հերմինե Հովիկի Համբարձումյանի անվամբ թիվ Ա/Գ 119 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 8062700712927 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Բենիկ Օնիկի Ստեփանյանի անվամբ Գ 75 վարկային գործով,
 - Էդուարդ Հրաչիկի Բարեղանյանի անվամբ Գ 114 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 806020070375 օրդերով և դրա քսերոպատճենով,
 - Օնիկ Արմենակի Ստեփանյանի անվամբ Գ 67 վարկային գործով,
 - Քնքուշ Աղվանի Մելքոնյանի անվամբ Գ 106 վարկային գործով,
 - Քանաքարա Օնիկի Ստեփանյանի անվամբ Գ 70 վարկային գործով,
 - Թամարա Ավետիքի Համբարձումյանի անվամբ Գ 105 վարկային գործով,
 - Սարգիս Ռաֆիկի Շահբաջանի անվամբ Գ 40 վարկային գործով, վճարման անդորրագրով և ելքի դրամարկղային թիվ 7050700559639 օրդերով,
 - Արթուր Մերուժանի Թովմասյանի անվամբ Ա/Գ 113 վարկային գործով ելքի դրամարկղային թիվ 9051900699079 օրդերով, դրա քսերոպատճենով, թիվ 8062500711757 հայտարարագրով և թիվ 8062400711293 վճարման անդորրագրով,
 - Համբարձում Վոլոդյայի Բեգլարյանի անվամբ Գ 39 վարկային գործով, ելքի դրամարկղային թիվ 7042700556474 օրդերով և Հ. Բեգլարյանի գրավադրված բնակարանը արգելանքից հանելու գրույթունով,
 - Վալիկո Հայկազի Գևորգյանի անվամբ Ա/Գ 96 վարկային գործով, ելքի դրամարկղային թիվ 8030400670980 անդորրագրով, դրա քսերոպատճենով և թիվ 8080400725075 հայտարարագրով,
 - Արսեն Նորիկի Ղարիբյանի անվամբ Ա/Գ 108 վարկային գործով, ելքի դրամարկղային թիվ 8042300690013 օրդերով և թիվ 8052600701334 հայտարարագրով,
 - Ռուզան Աշոտի Ղարիբյանի անվամբ Հ 15 վարկային գործով, Ռ. Ղարիբյանի գրավադրված բնակարանն արգելանքից հանելու գրույթունով,
 - Արման Յուրիկի Մանուկյանի անվամբ Գ 113 վարկային գործով և ելքի դրամարկղային թիվ 8042200689701 օրդերով,
 - Մանվել Մառլենի Կարապետյանի անվամբ Ա/Գ 100 վարկային գործով, ելքի դրամարկղային թիվ 8031000672687 օրդերով և թիվ 8062400711308 հայտարարագրով,
 - Ալինա Աղվանի Սարգսյանի անվամբ թիվ 300 վարկային գործով,
- Հայկ Մնացականյանի, Իսակով Ալեքսանդրի, Կարեն Առաքելյանի, Մանուկ Թովմասյանի, Մխիթար Հովհաննիսյանի, Ալեքսան Դավթյանի և Արթուր Թովմասյանի անուններով կազմված տեղեկանքներով,
- Ղավիթբեկ Դավթյանի ներկայացրած թիվ 7101800620386 անդորրագրով

«Հայխնայբանկի» վարչության 02.07.2000թ. թիվ 35 որոշմամբ հաստատված մասնաձյուղի վարչակազմակերպական կառուցվածք Զև-3 /«Հայխնայբանկի» Եղեգնաձորի, Իջևանի, Ստեփանավանի, Սևանի մասնաձյուղեր/ ստորաբաժանումների և առանձին հաստիքների գործառույթների կանոնակարգով, «ՎՏԲ-Հայաստան

բանկ» Սևանի մասնաձյուղի կանոնադրությամբ և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության կանոնադրությամբ, մասնաձյուղի կառավարիչի և վարկային պատասխանատուի գործառնության չարտականությունները կանոնակարգող ակտի պատճենով Է «Հայխնայբանկի» վարչության 02.07.2000թ. թիվ 35 որոշմամբ հաստատված մասնաձյուղի վարչակազմակերպական կառուցվածք Զև-3 /«Հայխնայբանկի» Եղեգնաձորի, Իջևանի, Ստեփանավանի, Սևանի մասնաձյուղեր/ ստորաբաժանումների և առանձին հաստիքների գործառնությունների կանոնակարգով, «ՎՏԲ-Հայաստան բանկ» Սևանի մասնաձյուղի կանոնադրությամբ և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության կանոնադրությամբ, մասնաձյուղի կառավարիչի և վարկային պատասխանատուի գործառնության չարտականությունները կանոնակարգող ակտի պատճենով Է Մանվել Կարապետյանի կողմից 08.05.2008թ. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի կառավարիչ Արսեն Առաքելյանին գրված դիմումով այն մասին, որ ինքը ԱԳ 100 վարկը՝ 1.800.000 ՀՀ դրամ, ստացել և տվել է Արթուր Թովմասյանին: Դիմումի Ներքևում Արթուր Թովմասյանը ստորագրել է, որ հիշյալ գումարը ստացել է ամբողջությամբ, ինչպես նաև Արթուր Թովմասյանի կողմից 08.05.2009թ. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաձյուղի կառավարիչ Արսեն Առաքելյանին գրված գրությամբ այն մասին, որ այդ վարկը վերցրել է ինքը և պարտավորվում է այն փակել Է Արթուր Թովմասյանի կողմից 22.04.2008թ. գրված և ստորագրված գրությամբ, որ նա նորմալ ժամկետում կփակի Արսեն Մանուկյանի անվամբ վերցրած վարկը Է Սարգիս Ռաֆիկի Շահբազյանի կողմից 30.11.2009թ. ներկայացված 07.09.2007թ. 450.000 ՀՀ դրամ, 06.11.2007թ. 640.000 ՀՀ դրամ և 07.05.2007թ. 1000 ՀՀ դրամի վճարման վերաբերյալ անդորրագրերով, 07.05.2007թ. 1.000.000 ՀՀ դրամի ելքի օրդերով, 03.05.2007թ. անշարժ գույքի հիփոթեքի պահանջագրով և վարկի մարման ժամանակացույցով Է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Սևանի անձնագրային բաժանմունքի կողմից 29.01.10թ. տրված գրությամբ, այն մասին որ Գարուշ Մանվելի Կարիբյանի վերաբերյալ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում տվյալներ չկան Է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Սևանի անձնագրային բաժանմունքի կողմից 02.03.10թ. տրված գրությամբ, որ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում ժամանա կյուրվիզի կլեքսանյանի վերաբերյալ տվյալներ չկան Է ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ Գ 74/0582/02/09 վճռի պատճենով, թիվ Գ 66 վարկային պայմանագրի պատճենով, թիվ 7101800620386 անդորրագրի պատճենով, համակարգչից հեռացված գործարքների ցուցակի պատճենով և աշխատողների անձնագրերի պատճեններով Է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Սևանի մասնաձյուղի կառավարիչ Գ. Բաղդասարյանի կողմից 26.03.2010թ. տրամադրված հեռացված գործարքների ցանկով Է «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության խորհրդի 01.08.2005թ. թիվ 52 որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսական վարկերի տրամադրման» կանոնակարգով, «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության համակարգում ֆիզիկական անձանց այլ գրավի ապահովվածությամբ վարկերի տրամադրման ընթացակարգով և «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության համակարգում ապրանքների /կենցաղային և համակարգչային տեխնիկա, կահույք, այլ ապրանքներ/ ձեռք բերման նպատակով վարկերի տրամադրման ընթացակարգով Է Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանի կողմից գրավոր բացատրագրի պատճենով՝ ուղղված «ՎՏԲ-Հայաստան բանկ» Սևանի մասնաձյուղի կառավարիչ Արսեն Առաքելյանին Է Արա Մկրտչյանի կողմից 18.04.2009թ. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության ներքին աուդիտի վարչության պետ Ա. Բեգարյանին

գրված բացատրագրով:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության կողմից 19.05.2009թ. ուղարկված Մանուկ Թովմասյանի վերաբերյալ նյութերով Է «Գետուկ» ՍՊ ընկերության տնօրեն Արամ Գրիգորյանի ներկայացրած նյութերով:

Մարիետա Պարույրի Գրիգորյանի կողմից, ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազին հասցեագրած 07.06.2010թ. դիմումով և դրան կից փաստաթղթերով Է

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազին ուղարկված Կարինե Ղասաբօղյանի վերաբերյալ նյութերով Է

Սարգիս Ռաֆիկի Ոսկանյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով Է

Վալիկո Հայկազի Գևորգյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով Է

Արման Նորիկի Ղարիբջանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով Է

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևան մասնաճյուղի կառավարիչ Գ. Բաղդասարյանի կողմից 2011թ. մայիսի 30-ին տրված տեղեկանքի համաձայն՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևան մասնաճյուղում գործող Հ-15 վարկային պայմանագրով Ռուզան Աշոտի Ղարիբջանը 2008 թվականի հունիս-դեկտեմբեր ժամանակահատվածում կատարել է հետևյալ մասնակի մարումները՝

- 28.06.2008թ. – 553.333 ՀՀ դրամ,

- 31.07.2008թ. – 124.88,6 ՀՀ դրամ,

- 27.08.2008թ. – 125.000 ՀՀ դրամ,

- 31.10.2008թ. – 120.000 ՀՀ դրամ,

- 26.12.2008թ. – 150.000 ՀՀ դրամ,

- 30.12.2008թ. – 250.000 ՀՀ դրամ:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևան մասնաճյուղի կողմից տրամադրված Հ-15 վարկային պայմանագրի /Ռուզան Աշոտի Ղարիբջան/ վարկային քաղվածքի համաձայն՝ 2008 թվականի հունիսի 17-ի դրությամբ սկզբնական մնացորդը կազմել է 4.608.056 ՀՀ դրամ:

Կանխիկ դրամի մուտքի 2008 թվականի հունիսի 28-ի № 8062800713441 հայտարարագրի համաձայն՝ Հ-15 վարկային պայմանագրով կատարվել է մասնակի մարում 553.333 ՀՀ դրամի չափով:

Կանխիկ դրամի մուտքի 2008 թվականի օգոստոսի 27-ի № 8082700733807 հայտարարագրի համաձայն՝ Հ-15 վարկային պայմանագրով կատարվել է մասնակի մարում 125.000 ՀՀ դրամի չափով:

Կանխիկ դրամի մուտքի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի № 8103100756256 հայտարարագրի համաձայն՝ Հ-15 վարկային պայմանագրով կատարվել է մասնակի մարում 120.000 ՀՀ դրամի չափով:

Կանխիկ դրամի մուտքի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի № 8122300775941 հայտարարագրի համաձայն՝ Հ-15 վարկային պայմանագրով կատարվել է մասնակի մարում 150.000 ՀՀ դրամի չափով:

Կանխիկ դրամի մուտքի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի № 8123000777233 հայտարարագրի համաձայն՝ Հ-15 վարկային պայմանագրով կատարվել է մասնակի մարում 250.000 ՀՀ դրամի չափով:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևան մասնաճյուղի 2008 թվականի հունիսի 03-ի № 80603704014034 մեմորիալ օրդերի համաձայն՝ ժամկետային վարկ 300 Սարգսյան Ալինա անվամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևան մասնաճյուղից «Աստղիկ» ՍՊ ընկերության հաշվեհամարին փոխանցվել է 600.000

ՀՀ դրամ:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևան մասնաճյուղի 2008 թվականի հունիսի 03-ի № 80603704018034 մեմորիալ օրդերի համաձայն՝ 20% կանխավճար ապրանքի արժեքի դիմաց Սարգսյան Ալինա անվամբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևան մասնաճյուղից «Աստղիկ» ՍՊ ընկերության հաշվեհամարին փոխանցվել է 150.000 ՀՀ դրամ:

4. Ղատարանի իրավական վերլուծությունները.

Մեղադրողը նկատի ունենալով, որ ամբաստանյալներ Նարինե Նավասարդյանը, Սահականույշ Ասատրյանը և Վիկտորիա Ասատրյանը պարբերաբար, առանց միասնական դիտավորության, յուրաքանչյուր դեպքով կատարելով մասնաճյուղի ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ, վարկային պատասխանատու ամբաստանյալ Կարեն Ղասաբօղյանի կարգադրություններն ու պահանջները և գիտակցելով իրենց գործողությունների բնույթը, նշված յուրաքանչյուր դրվագով առանձին - առանձին կատարել են հանցանքներ՝ յուրաքանչյուր դեպքով օժանդակելով ամբաստանյալ Կարեն Ղասաբօղյանին կեղծ վարկային գործերով, առանց վարկային պայմանագրեր և վարկային գործեր կազմելու, յուրացնելու բանկին պատկանող գումարներ որոնց չափը յուրաքանչյուր դեպքում համարվում է խոշոր չափ՝ նրանց առաջադրված մեղադրանքները ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից վերավորակել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Մեղադրողը հիմնվելով դատաքննության ընթացքում ձեռք բերված և ամբաստանյալ Արսեն Առաքելյանին առաջադրված մեղադրանքները ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ և 190-րդ հոդվածի 3-րդ մասերի 1-ին կետերից վերավորակել է ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նկատի ունենալով, որ մեղադրողը հրաժարվել է ամբաստանյալ Արսեն Առաքելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով և ամբաստանյալ Արա Մկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներից՝ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում պետք է ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի 4-րդ մասով, այն է՝ մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանը կարճում է քրեական գործով վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը, իսկ եթե դատախազը հրաժարվում է առանձին մեղադրյալի մասով՝ դադարեցնում է քրեական հետապնդումն այդ մեղադրյալի նկատմամբ՝ դատարանը գտնում է, որ պետք է դադարեցնել քրեական հետապնդումը՝ Արսեն Առաքելյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Արա Մկրտչյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով:

Այսպիսով, դատարանը ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով և ներքին համոզմամբ, հանգում է այն հետևության, որ՝

- ամբաստանյալ Կարեն Ղասաբօղյանը, նախնական համաձայնության գալով Բենիկ Ստեփանյանի, Արթուր Թովմասյանի և Ռոզա Խաչատրյանի հետ, կեղծ վարկային գործերով, առանց վարկային պայմանագրեր և վարկային գործեր կազմելու, ինչպես նաև անձամբ՝ վարկերի մարման համար վճարված գումարներից, ստացել և յուրացրել է բանկին պատկանող 44.215.000 ՀՀ դրամը, ապա օրինականացրել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված հիշյալ գումարներից 10.488.439,7 ՀՀ դրամը, ինչպես նաև բանկի վարկառուների վստահությունը չարաշահելու եղանակով, նրանցից հափշտակել է 1.000.000 և 500.000 ՀՀ դրամ գումարներ, որպիսի

հանցանքները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որոնցով և նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի,

- ամբաստանյալ Արսեն Առաքելյանն աշխատելով «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի կառավարիչ և իր կարգադրիչ լիազորությունները բանկի շահերին հակառակ, ինչպես նաև նույն մասնաճյուղի ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբոլյանի օգտին օգտագործելու արդյունքում՝ ծանր հետևանքներ է առաջացել «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության օրինական շահերին, որպիսի հանցանքը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով, որով և նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի,

- ամբաստանյալ Արթուր Թովմասյանը, նախնական համաձայնության գալով Կարեն Ղասաբոլյանի և Ռոզա Խաչատրյանի, կեղծ վարկային գործերով, ստացել և յուրացրել է բանկին պատկանող 7.250.000 ՀՀ դրամը, ապա Կարեն Ղասաբոլյանի հետ օրինականացրել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված հիշյալ գումարներից 5.416.398 ՀՀ դրամը, ինչպես նաև վատահույությունը չարաշահելու եղանակով հափշտակել է 1.800.000 և 1.000.000 ՀՀ դրամ գումարներ, որպիսի հանցանքները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, որոնցով և նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի,

- ամբաստանյալ Նարինե Նավասարդյանն օժանդակել է Կարեն Ղասաբոլյանին, կեղծ վարկային գործերով, առանց վարկային պայմանագրեր և վարկային գործեր կազմելու, յուրացնել բանկին պատկանող ընդամենը 42.840.000 ՀՀ դրամը, որպիսի հանցանքը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որով և նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի,

- ամբաստանյալ Սահականույշ Ասատրյանն օժանդակել է Կարեն Ղասաբոլյանին, կեղծ վարկային գործերով, առանց վարկային պայմանագրեր և վարկային գործեր կազմելու, յուրացնել բանկին պատկանող ընդամենը 25.150.000 ՀՀ դրամը, որպիսի հանցանքը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որով և նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի,

- ամբաստանյալ Արա Մկրտչյանն օժանդակել է Կարեն Ղասաբոլյանին, կեղծ վարկային գործերով, առանց վարկային պայմանագրեր և վարկային գործեր կազմելու, յուրացնել բանկին պատկանող ընդամենը 5.000.000 ՀՀ դրամը, որպիսի հանցանքը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որով և նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի,

- ամբաստանյալ Վիկտորիա Ասատրյանն օժանդակել է Կարեն Ղասաբոլյանին, կեղծ վարկային գործերով, առանց վարկային պայմանագրեր և վարկային գործեր կազմելու, յուրացնել բանկին պատկանող ընդամենը 4.400.000 ՀՀ դրամը, որպիսի հանցանքը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, որով և նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի,

- ամբաստանյալ Պասյ Մանուկյանը չարաշահելով իր հարևանուհի Ալինա Սարգսյանի վստահությունը՝ նրա համաձայնության բացակայության պայմաններում, վերջինիս անվամբ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում 600.000 ՀՀ դրամի կենցաղային տեխնիկայի ձեռք բերման վարկ է ձևակերպել և սահմանված կարգով վարկի մարումը չկատարելով՝ հափշտակել է այդ գումարը, որպիսի հանցանքը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, որով

և նա պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

Տվյալ դեպքում, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիան պատիժ է սահմանել ազատազրկում՝ երկուսից վեց տարի ժամկետով, իսկ գործող խմբագրության սանկցիան պատիժ է սահմանում տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկում՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Կարեն Ղասաբողյանի, Արթուր Թովմասյանի և Պապ Մանուկյանի նկատմամբ պատիժ պետք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի գործող խմբագրության սանկցիայով:

Բացի այդ, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիան պատիժ է սահմանել պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա, իսկ գործող խմբագրության սանկցիան պատիժ է սահմանում տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկում՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Նարինե Նավասարդյանի, Սահակյանույշ Ասատրյանի, Արա Մկրտչյանի և Վիկտորի Ասատրյանի նկատմամբ պատիժ պետք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով:

Նկատի ունենալով նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի նախկին խմբագրության սանկցիան պատիժ է սահմանել ազատազրկում՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, իսկ գործող խմբագրության սանկցիան պատիժ է սահմանում ազատազրկում՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Կարեն Ղասաբողյանի և Արթուր Թովմասյանի նկատմամբ պատիժ պետք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով:

Բացի այդ, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիան պատիժ է սահմանել ազատազրկում՝ չորսից ութ տարի ժամկետով՝ հանցավոր ձանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ, իսկ գործող խմբագրության սանկցիան պատիժ է սահմանում ազատազրկում՝ հինգից տասը տարի ժամկետով՝ հանցավոր

ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արթուր Թովմասյանի նկատմամբ պատիժ պետք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի գործող խմբագրության 66-րդ հոդվածի կիրառմամբ վատթարանում է ամբաստանյալների վիճակը՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալների նկատմամբ պատիժ պետք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի նախկին խմբագրության 66-րդ հոդվածի համակցությամբ:

Ամբաստանյալների նկատմամբ պատիժներ նշանակելիս, դրանց տեսակը և չափը որոշելիս՝ դատարանը հաշվի է առնում ինչպես հանցագործությունների հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այնպես էլ ամբաստանյալների անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ նրանց պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները:

Որպես ամբաստանյալ Կարեն Ղասաբոլյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում, որ ամբաստանյալը մասնակիորեն խոստովանել է հանցանքը և նրա խնամքին է գտնվում անչափահաս երեխան:

Ամբաստանյալ Կարեն Ղասաբոլյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Որպես ամբաստանյալ Արսեն Առաքելյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք դատարանը հաշվի է առնում, որ ամբաստանյալը մասնակիորեն խոստովանել է հանցանքը:

Ամբաստանյալ Արսեն Առաքելյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Որպես ամբաստանյալ Արթուր Թովմասյանի անձը բնութագրող տվյալ՝ դատարանը հաշվի է առնում, որ նախկինում դատված չի եղել:

Որպես ամբաստանյալ Արթուր Թովմասյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում, որ ամբաստանյալը մասնակիորեն վերականգնել է հանցագործությամբ պատճառված վնասը, խոստովանել է հանցանքը և զղջացել կատարածի համար:

Ամբաստանյալ Արթուր Թովմասյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Որպես ամբաստանյալ Նարինե Նավասարդյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում, որ ամբաստանյալը մասնակիորեն խոստովանել է հանցանքը և զղջացել կատարածի համար:

Ամբաստանյալ Նարինե Նավասարդյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Որպես ամբաստանյալ Սահականույշ Ասատրյանի անձը բնութագրող տվյալներ՝ դատարանը հաշվի է առնում, որ նա ամուսնացած է և աշխատանքի վայրում բնութագրվել է դրական:

Որպես ամբաստանյալ Սահականույշ Ասատրյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում, որ ամբաստանյալի խնամքին է գտնվում երկրորդ խմբի հաշմանդամ ամուսինը, մասնակիորեն խոստովանել է հանցանքը և զղջացել կատարածի համար:

Ամբաստանյալ Սահականույշ Ասատրյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Որպես ամբաստանյալ Արա Մկրտչյանի անձը բնութագրող տվյալներ՝ դատարանը հաշվի է առնում, որ նա ամուսնացած է և նախկինում դատված չի եղել:

Որպես ամբաստանյալ Արա Մկրտչյանի պատասխանատվությունը և

պատիժը մեղմացնող հանգամանք դատարանը հաշվի է առնում, որ ամբաստանյալն իր խնամքին ունի երեք անձ:

Ամբաստանյալ Արա Մկրտչյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Որպես ամբաստանյալ Վիկտորիա Ասատրյանի անձը բնութագրող տվյալներ՝ դատարանը հաշվի է առնում, որ նա ամուսնացած է, աշխատանքի վայրում բնութագրվել է դրական և նախկինում դատված չի եղել:

Որպես ամբաստանյալ Վիկտորիա Ասատրյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում, որ ամբաստանյալի խնամքին է գտնվում անչափահաս երեխան, մասնակիորեն խոստովանել է հանցանքը և զոջացել կատարածի համար:

Ամբաստանյալ Վիկտորիա Ասատրյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Որպես ամբաստանյալ Պապ Մանուկյանի անձը բնութագրող տվյալ՝ դատարանը հաշվի է առնում, որ նախկինում դատված չի եղել:

Որպես ամբաստանյալ Պապ Մանուկյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում, որ ամբաստանյալը մասնակիորեն վերականգնել է հանցագործությամբ պատճառված վնասը և նրա խնամքին են գտնվում անչափահաս երեք երեխան:

Ամբաստանյալ Պապ Մանուկյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Ելնելով վերոգրյալից՝ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալների ուղղվելը և սոցիալական արդարության վերականգնումը, ինչպես նաև վերջիններիս կողմից նոր հանցագործությունների կատարման կանխումը հնարավոր է միայն նրանց որոշակի ժամկետով ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով, հասարակությունից մեկուսացնելու՝ ազատագրվման դատապարտելու միջոցով:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ ամբաստանյալներ Նարինե Նավասարդյանը և Սահականույշ Ասատրյանը հիշյալ դրվագներով հանցագործությունը կատարել են մինչև ՀՀ

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի հունվարի 19-ի դատավճռով հաստատված, ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով հանցագործությունը, գատարանը գտնում է, որ նրաց նկատմամբ պետք կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը:

Ինչ վերաբերում է ամբաստանյալների նկատմամբ ընտրված խափանման միջոցներին, ապա դատարանը գտնում է, որ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը դրանք պետք է թողնել անփոփոխ:

Անդրադառնալով իրեղեն ապացույցներ հանդիսացող վարկային գործերին ու դրամարկղային ելքի վճարման անդորրագրերին՝ դատարանը գտնում է, որ դրանք պետք է պահել քրեական գործում: Ոսումնասիրելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության ներկայացրած քաղաքացիական հայցը՝ դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման:

Դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357 – 360-րդ հոդվածներով և 306-րդ հոդվածի 4-րդ մասով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Կարեն Ղասաբոլյանին դատապարտել ազատագրվման 2 /երկու/

տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով Կարեն Ղասաբօղյանին դատապարտել ազատազրկման 6 /վեց/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Կարեն Ղասաբօղյանին դատապարտել ազատազրկման 9 /ինը/ տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 10.488.439,7 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի նախկին խմբագրության 66-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերի կանոններով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու, ինչպես նաև վերջնական պատժի ժամկետին ՀՀ Փեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի հուլիսի 29-ի դատավճռով նշանակված պատժի կրած մասը հաշվակցելու միջոցով, Կարեն Ղասաբօղյանին վերջնական պատիժ սահմանել ազատազրկում 12 /տասներկու/ տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 10.488.439,7 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

Կարեն Ղասաբօղյանը պատիժը պետք է կրի ՀՀ ԱՆ

համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Կարեն Ղասաբօղյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Կարեն Ղասաբօղյանի պատժի սկիզբը հաշվել 2009 թվականի մարտի 13-ից:

Արսեն Նուրիջանի Առաքելյանի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով, դադարեցնել քրեական հետապնդումը:

Արսեն Նուրիջանի Առաքելյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 3 /երեք/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով:

Արսեն Առաքելյանը պատիժը պետք է կրի ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Արսեն Առաքելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Արսեն Առաքելյանի պատժի սկիզբը հաշվել 2010 թվականի նոյեմբերի 09-ից:

Արթուր Մերուժանի Թովմասյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Արթուր Թովմասյանին դատապարտել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով Արթուր Թովմասյանին դատապարտել ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով Արթուր Թովմասյանին դատապարտել ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 5.416.398 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի նախկին խմբագրության 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոններով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Արթուր Թովմասյանին վերջնական պատիժ սահմանել ազատազրկում 5 /հինգ/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 5.416.398 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

Արթուր Թովմասյանը պատիժը պետք է կրի ՀՀ ԱՆ

համապատասխան քրեակատարողական հիմնարկում՝ Արթուր Թովմասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը՝
Արթուր Թովմասյանի պատժի սկիզբը հաշվել նրան արգելանքի վերցնելու օրից:

Նարինե Ազատի Նավասարդյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և այդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով դատապարտել ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով: Նարինե Նավասարդյանի նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից: Նարինե Նավասարդյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը՝

Սահականույշ Հայրիկի Ասատրյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և այդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով դատապարտել ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով: Սահականույշ Ասատրյանի նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից: Սահականույշ Ասատրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը՝

Արա Ռաֆիկի Մկրտչյանի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով, դադարեցնել քրեական հետապնդումը: Արա Ռաֆիկի Մկրտչյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և այդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով դատապարտել ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով: Արա Մկրտչյանի նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից: Արա Մկրտչյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը՝

Վիկտորիա Փառնիկի Ասատրյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և այդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով դատապարտել ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով: Վիկտորիա Ասատրյանի նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից: Վիկտորիա Ասատրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը՝

Պապ Թեմանի Մանուկյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտել ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով: Պապ Մանուկյանի նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից: Պապ Մանուկյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը՝

	<p>«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության քաղաքացիական հայցը բավարարել: Կարեն Ղասաբոլյանից և Արթուր Թովմայանից հոգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 10.055.533,2 ՀՀ դրամ: Կարեն Ղասաբոլյանից, Արսեն Առաքելյանից, Նարինե Նավասարդյանից և Վիկտորիա Ասատրյանից հոգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 6.293.352,4 ՀՀ դրամ: Կարեն Ղասաբոլյանից, Արսեն Առաքելյանից, Նարինե Նավասարդյանից և Արա Մկրտչյանից հոգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 6.543.210,1 ՀՀ դրամ: Կարեն Ղասաբոլյանից, Արսեն Առաքելյանից, Նարինե Նավասարդյանից և Սահականույշ Ասատրյանից հոգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 38.140.625,3 ՀՀ դրամ: Պապ Մանուկյանից հոգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության բռնագանձել 234.198,1 ՀՀ դրամ: Իրեղեն ապացույցներ հանդիսացող վարկային գործերն ու դրամարկղային ելքի վճարման անդորրագրերը պահել քրեական գործումՔ Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան մեկամսյա ժամկետում:</p>
	ԴԱՏԱՎՈՐ Ս. ՍԱՆՈՒԿՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	11-10-2011
Այլ նշումներ:	
Գործը հանձնվել է գրասենյակ:	17-11-2011
Էջերի քանակ:	1-ին հատոր 242 թերթ, 2-րդ հատոր 240 թերթ, 3-րդ հատոր 301 թերթ, 4 հատոր 339 թերթ, 5-րդ հատոր 243 թերթ, 6-րդ հատոր 229 թերթ, 7-րդ հատոր 233 թերթ, 8-րդ հատոր 309 թերթ, 9-
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Գործը ուղարկվել է:	14-11-2011
Էջերի քանակը:	1-242,2-240,3-301,4-339,5-243,6-229,7-233,8-309,10-214,13-312
Գործին կից նյութերը:	
Ուր(դատարան):	
Ուր:	ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան
Ելքի գրության համարը:	ԴԴ 30-Ե-1541/11
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	22-11-2011
Դատական Գործ N: ԳԴ5/0038/01/10	

Ամսաթիվ:	14-11-2011		
Ամբաստանյալ			
Անձ			
Անուն	Կարեն		
Ազգանուն	Ղասաբոլյան		
Հասցե	<<Նուբարաշեն>> ՔԿՀ		
Հոդված_1			
Հոդված	178	Մաս 2	Կետ 2
Հոդված_1			
Հոդված	179	Մաս 3	Կետ 1
Ղատվածություն:			
Պատիժ:			
Հոդված_2			
Հոդված	190	Մաս 3	Կետ 1
Խախտման միջոց:	Կալանավորում		
Ուն կողմից է բերվել բողոքը:	Ամբաստանյալ		
Բողոքը բերող անձը			
Անուն	Կարեն		
Ազգանուն	Ղասաբոլյան		
Հասցե	<<Նուբարաշեն>> ՔԿՀ		
Բողոքի բովանդակությունը:	Կարեն Ղասաբոլյան մյուսները՝ Արսեն Առաքելյան , Արթուր Թովմասյան , Նարինե Նավասարդյան , Սահականույշ Ասատրյան , Արա Մկրտչյան , Վիկտորիա Ասատրյան , Պապ Մանուկյան Արսեն Նուռիջանի Առաքելյան , Արթուր Մերուժանի Թովմասյան , Նարինե Ազատի Նավասարդյան , Սահականույշ Հայրիկի Ասատրյան , Արա Ռաֆիկի Մկրտչյան , Վիկտորիա Գառնիկի Ասատրյան , Պապ Թելմանի Մանուկյան Վերանայել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանի /ՀՀ քր.օր. 178 հոդ. 2-րդ մասի 2-րդ կետով ,179 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով և 190 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով , ՀՀ քր.օր. 66 հոդ. կարգով վերջնական պատիժ -ազատագրվում 12 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 10.488.439,7 ՀՀ դրամի բռնագրավմամբ / վերաբերյալ 11.10.2011թ. դատավճիռը և նշանակել ավելի մեղմ պատիժ :		
Բողոքի ստացման կարգը:	Հանձնվել է փոստին		
Ամսաթիվ:	10-11-2011		
Չափահաս:	Այո		
Ամսաթիվ: 18-11-2011			
Նախագահող դատավոր			
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.		
Դատավորի անուն:	Արշակ Նշանի Խաչատրյան		
Դատավոր			
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.		

Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	22-11-2011
Կից փաստաթղթեր և իրերեն ապացույց:	չկա
Ամսաթիվ:	22-11-2011
Երբ:	07-12-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	22-11-2011
Ժամ:	12:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	3
Նիստը:	
Պատճառը:	
Երբ:	15-12-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	13:30
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	3
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Երբ:	22-12-2011
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	16:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	3
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Երբ:	13-01-2012
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	13:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	3
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Երբ:	01-02-2012

Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	13:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	3
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Երբ:	10-02-2012
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	15:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	3
Նիստը:	Չի կայացվել
Պատճառը:	Չի կայացել և դատական նիստի օրը տեղափոխվել է այլ օր, քանի որ նախագահող դատավոր Արշակ Խաչատրյանը 10.02.12թ. մասնակցել է Արդարադատության խորհրդի նիստին աշխատանքներին
Երբ:	15-02-2012
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	15:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	3
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Երբ:	20-02-2012
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	16:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	3
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Անփոփոխ թողնված դատական ակտը:	Պատճառաբանվել է
Ամսաթիվ:	20-02-2012
Ամբաստանյալ	
Անուն	Կարեն
Ազգանուն	Ղասաբոլյան
Հասցե	ք. Սևան, Խաղաղության փող., 10 շենք, բն. 27
Սեռ	Արական
Քր. դատ. օր. հոդված	
Հոդված	393-394
Քր. դատ. օր. հոդված	

Հողված	393-394		
Այլ նշումներ:			
Քր.օր. հողված			
Հողված	178. 179	Մաս 2, 3	Կետ 2
Ղատական ակտ:	<p>Գործ հ. ԳԴ5/0038/01/10 Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ի Չ Ք Ր Ե Ա Կ Ա Ն Դ Ա Տ Ա Ր Ա Ն</p> <p>Ո Ր Ո Շ ՈՒ Մ Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն</p> <p>20 փետրվարի 2012թ. ք. Երևան</p> <p>Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ի Չ Ք Ր Ե Ա Կ Ա Ն Դ Ա Տ Ա Ր Ա Ն Ը Հ Ե Տ Ե Վ Յ Ա Ն Կ Ա Ջ Մ Ո Կ</p> <p>Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ր Դ Դ Ա Տ Ա Կ ՈՐ՝ Ա. Խ Ա Չ Ա Տ Ր Յ Ա Ն Ի Դ Ա Տ Ա Կ ՈՐ Ն Ե Ր՝ Ա. Հ Ո Կ Հ Ա Ն Ն Ի Ս Յ Ա Ն Ա. Դ Ա Ն Ի Ե Լ Յ Ա Ն Ի</p> <p>Ք Ա Ր Տ ՈՒ Դ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Մ Բ՝ Մ. Մ Ա Հ Տ Ե Ս Յ Ա Ն Ի</p> <p>Մ Ա Մ Ն Ա Կ Ց ՈՒ Թ Յ Ա Մ Բ՝ Մ Ե Դ Ա Դ Ր ՈՂ՝ Ա. Ա Մ Ի Ր Ջ Ա Դ Յ Ա Ն Ի Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ն Ե Ր՝ Ա. Ա Լ Վ Ա Ն Դ Յ Ա Ն Ի Լ. Թ Ո Ր Ո Ս Յ Ա Ն Ի Կ. Մ Ա Ն ՈՒ Չ Ա Ր Յ Ա Ն Ի</p> <p>Դռնբաց դատական նիստում ամբաստանյալ Արթուր Մերուժանի Թովմայանի շահերի պաշտպան, փաստաբան Ա. Ալվանդյանի, ամբաստանյալ Արսեն Նուռիջանի Առաքելյանի շահերի պաշտպան, փաստաբան Լ. Թորոսյանի, և ամբաստանյալ Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործն ըստ մեղադրանքի Արթուր Մերուժանի Թովմայանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Արսեն Նուռիջանի Առաքելյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով, Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով</p> <p>Պ Ա Ր Ջ Ե Ց</p> <p>1. Գործի դատավարական նախապատմությունը</p> <p>“ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի կառավարիչ Արսեն Նուռիջանի Առաքելյանի, հաշվապահ Նարինե Ազատի Նավասարդյանի և տնտեսագետ Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանի կողմից 2007-2009 թվականներին իրենց լիազորություններն ընկերության շահերին հակառակ օգտագործելու՝ առանց պատշաճ կարգով վարկային գործեր կազմելու՝ վարկեր տրամադրելու և այլ չարաշահումներ կատարելու փաստի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում 2009 թվականի հունիսի 16-ին հարուցվել է թիվ 50104409 քրեական</p>		

գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2009 թվականի հունիսի 18-ի որոշմամբ թիվ 50104409 քրեական գործը միացվել է Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանի կողմից 0.62 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց ապօրինաբար ձեռք բերելու և պահելու փաստի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում 2009 թվականի մարտի 13-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված, թիվ 50102209 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է թիվ 50102209 համարի տակ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարսեր գյուղի բնակիչ Սարգիս Ռաֆիկի Ոսկանյանը 2009 թվականի սեպտեմբերի 29-ին հաղորդում է տվել ոստիկանության Սևանի բաժնի այն մասին, որ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի աշխատակիցները 2007 թվականի հոկտեմբերի 23-ին, առանց իր գիտության, իր անվամբ ձևակերպել և ստացել են 1.000.000 ՀՀ դրամի վարկ: Հիշյալ փաստի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում 2009 թվականի հոկտեմբերի 02-ին հարուցվել է թիվ 50108409 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ թիվ 50102209 քրեական գործից անջատվել և թիվ 50108409 քրեական գործին է միացվել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի աշխատակիցներ Կարեն Ղասաբօղյանի, Արսեն Առաքելյանի և մյուսների վերաբերյալ մասը և դրանով նախաքննությունը շարունակվել է թիվ 50108409 համարի տակ:

Պապ Թելմանի Մանուկյանի կողմից Ալինա Աղվանի Սարգսյանի վստահությունը չարաշահելու եղանակով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում վերջինիս անվամբ 600.000 ՀՀ դրամի վարկ ձևակերպելու փաստի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում 2010 թվականի փետրվարի 03-ին հարուցվել է թիվ 50101210 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի նախկին աշխատակիցների կողմից իրենց լիազորությունները կազմակերպության շահերին հակառակ օգտագործելու և առանց Կարինե Վարդգեսի Ղասաբօղյանի գիտության նրա անվամբ 2008 թվականի հունվարի 21-ին 480.000 ՀՀ դրամ գումարի չափով կենցաղային նշանակության վարկային կեղծ պայմանագիր կազմելու, գումարը դուրս գրելու և յուրացնելու փաստի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում 2010 թվականի փետրվարի 17-ին հարուցվել է թիվ 50101610 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ, 214-րդ և 325-րդ հոդվածների 1-ին մասերի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2010 թվականի մարտի 11-ի որոշումներով վերոհիշյալ քրեական գործերը միացվել և նախաքննությունը շարունակվել է թիվ 50101610 համարի տակ: 2010 թվականի ապրիլի 29-ին քրեական գործը քննչական ենթակայության կարգով ուղարկվել է ՀՀ ԱԱԾ քննչական վարչություն, և վարչության պետի տեղակալ Ա.Տոնոյանի կողմից 2010 թվականի մայիսի 07-ին այն ընդունվել է վարույթ: 2010 թվականի հունիսի 25-ին Արթուր Մերուժանի Թովմասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և իրավունք վերապահող փաստաթղթեր կեղծելու, օգտագործելու, ինչպես նաև վստահությունը չարաշահելով խոշոր չափերի գույք հափշտակելու

համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Մեղադրյալ Արթուր Մերուժանի Թովմայանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի օգոստոսի 26-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Արթուր Մերուժանի Թովմայանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցագործություններ կատարելու համար մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Արթուր Մերուժանի Թովմայանը ներգրավվել է որպես մեղադրյալ և վստահությունը չարաշահելով կրկին անգամ խոշոր չափերի գումար հափշտակելու, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ խոշոր չափերի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2010 թվականի օգոստոսի 27-ին Վիկտորիա Գառնիկի Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Մեղադրյալ Վիկտորիա Գառնիկի Ասատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի օգոստոսի 30-ին Սահականույշ Հայրիկի Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Մեղադրյալ Սահականույշ Հայրիկի Ասատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի սեպտեմբերի 08-ին Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու, անձամբ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի եկամուտներն օրինականացնելու, ինչպես նաև խաբեությամբ կրկին անգամ խոշոր չափերի գումարներ հափշտակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 08-ի որոշմամբ՝ մեղադրյալ Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանի նկատմամբ՝ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2010 թվականի սեպտեմբերի 09-ին Արա Ռաֆիկի Սկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և ուրիշի զգալի չափի գույքը յուրացնելու և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Մեղադրյալ Արա Ռաֆիկի Սկրտչյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի սեպտեմբերի 10-ին Նարինե Ազատի Նավասարդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափերի գումարների յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Մեղադրյալ Նարինե Ազատի Նավասարդյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի հոկտեմբերի 07-ին Պապ Թելմանի Մանուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և խոշոր չափերի գումարներ յուրացնելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Մեղադրյալ Պապ Թելմանի Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

2010 թվականի հոկտեմբերի 27-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Արա Ռաֆիկի Սկրտչյանին առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Արա Ռաֆիկի Սկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և ուրիշի զգալի չափի գույքը յուրացնելու և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով և 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի հոկտեմբերի 28-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Արթուր Մերուժանի Թովմասյանին առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցագործությունների կատարման համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Արթուր Մերուժանի Թովմասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և վստահությունը չարաշահելով կրկին անգամ խոշոր չափերի գումար հափշտակելու, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի՝ 7.250.000 ՀՀ դրամ գումար յուրացնելու և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ խոշոր չափերի՝ 7.250.000 ՀՀ դրամ, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2010 թվականի հոկտեմբերի 29-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Վիկտորիա Գառնիկի Ասատրյանին առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Վիկտորիա Գառնիկի Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի հոկտեմբերի 29-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել նաև Սահակյանույշ Հայրիկի Ասատրյանին առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ

քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Սահականույշ Հայրիկի Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: 2010 թվականի նոյեմբերի 01-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Նարինե Ազատի Նավասարդյանին առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Նարինե Ազատի Նավասարդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և առանձնապես խոշոր չափի գույքի յուրացմանն օժանդակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի նոյեմբերի 03-ի որոշմամբ՝ մեղադրյալ Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանին կլանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամսով: 2010 թվականի նոյեմբերի 05-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանին առաջադրված մեղադրանքը լրացնելու և նրան նոր ծավալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման համար, մեղադրանք առաջադրելու մասին:

Նույն օրը Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու, անձամբ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի եկամուտներն օրինականացնելու, ինչպես նաև խաբեությամբ կրկին անգամ խոշոր չափերի գումարներ հափշտակելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի նոյեմբերի 09-ին Արսեն Նուռիջանի Առաքելյանը ձերբակալվել է:

2010 թվականի նոյեմբերի 11-ին Արսեն Նուռիջանի Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի եկամուտներն օրինականացնելու, անձամբ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու, ինչպես նաև առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 214-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ՝ մեղադրյալ Արսեն Նուռիջանի Առաքելյանի նկատմամբ՝ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

Գույքի բռնագրավումն ապահովելու նպատակով՝ նախաքննության մարմնի կողմից 2010 թվականի նոյեմբերի 11-ին կալանք է դրվել Վիկտորիա Ասատրյանին համասեփականության իրավունքով պատկանող Սևան քաղաքի Խաղաղության փողոցի 16/6 հասցեում գտնվող բնակարանի նրա բաժնեմասի, Արա Մկրտչյանին

համասեփականության իրավունքով պատկանող Սևան քաղաքի Գործարանային փողոցի 2/35 հասցեում գտնվող բնակարանի նրա բաժնեմասի, Արթուր Թովմասյանին համասեփականության իրավունքով պատկանող Սևան քաղաքի Խաղաղության փողոցի 10/27 հասցեում գտնվող բնակարանի նրա բաժնեմասի, Արսեն Առաքելյանին համասեփականության իրավունքով պատկանող Սևան քաղաքի Սայաթ-Նովա փողոցի 19/25 հասցեում գտնվող բնակարանի նրա բաժնեմասի, Պապ Մանուկյանին համասեփականության իրավունքով պատկանող Գեղամավան համայնքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 7 միավոր հողամասերի /0.020 հա, 0.173 հա, 0.474 հա, 0.604 հա, 0.996 հա և 0.568 հա/ նրա բաժնեմասերի և Բենիկ Ստեփանյանին համասեփականության իրավունքով պատկանող Վարսեր գյուղում գտնվող առանձնատան, 0.120 հա տնամերձ հողամասի, 4 միավոր գյուղատնտեսական նշանակության հողամասերի /0.879 հա, 0.750 հա, 1.444 հա և 0.300 հա/ նրա բաժնեմասերի վրա:

2010 թվականի նոյեմբերի 16-ին Բենիկ Օնիկի Ստեփանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերի՝ 13.150.000 ՀՀ դրամ գումարներ յուրացնելու, խոշոր չափերի՝ 2.000.000 ՀՀ դրամ գումարներ յուրացնելու, ինչպես նաև մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ձանապարհով ստացված 3.065.170 ՀՀ դրամի եկամուտներն օրինականացնելու համար նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության մարմնի 2010 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ մեղադրյալ Բենիկ Օնիկի Ստեփանյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ՝ մեղադրյալ Բենիկ Օնիկի Ստեփանյանի նկատմամբ՝ որպես խափանման միջոց, ընտրվել է կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2010 թվականի նոյեմբերի 17-ին “ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության ներկայացուցչի կողմից հանցագործությամբ պատճառված վնասի՝ 68.895.171,1 ՀՀ դրամ գումարի բռնագանձման հայցադիմում է ներկայացվել քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Նախաքննության մարմնի 2010 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ Բենիկ Ստեփանյանի, Ռոզա Խաչատրյանի, Վարսեր գյուղի գյուղապետի տեղակալ Յուրիկ Հրաչիկի Մաթևոսյանի, աշխատակիցներ Լիլիթ Առաքելյանի, ինչպես նաև այլ անձանց կողմից կեղծ տեղեկանքներ տրամադրելու, Գայանե Մուշեղյանի անվամբ վարկը Վալիկո Գևորգյանի, իսկ Ա. Կալուկի անունով վարկը Ա. Սարգսյանի կողմից ստանալու դեպքերով մասը թիվ 50101610 քրեական գործից անջատվել է:

2010 թվականի դեկտեմբերի 13-ին քրեական գործը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան:

Գործի դատաքննության ընթացքում՝ 2011 թվականի հունիսի 09-ին, մեղադրողը, հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված՝ “ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենքը, որոշումներ է ներկայացրել դատարան՝ Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանին և Արթուր Մերուժանի Թովմասյանին առաջադրված մեղադրանքները փոփոխելու, քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններին համապատասխանեցնելու և նոր մեղադրանքներ առաջադրելու մասին, որոնց համաձայն.

Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանին 2010 թվականի նոյեմբերի 05-ին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, այն

համապատասխանեցվել է “ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված ՀՀ օրենքին և Կարեն Ղասաբօղլյանին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Արթուր Մերուժանի Թովմասյանին 2010 թվականի հոկտեմբերի 28-ին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, այն համապատասխանեցվել է “ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված ՀՀ օրենքին և Արթուր Թովմասյանին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

Գործի դատաքննության ընթացքում՝ 2011 թվականի օգոստոսի 19-ին, մեղադրողը որոշում է ներկայացրել դատարան՝ Պապ Թելմանի Մանուկյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին, ըստ որի՝ Պապ Թելմանի Մանուկյանին 2010 թվականի հոկտեմբերի 07-ին առաջադրված մեղադրանքը փոխվել է և խոշոր չափերով խարախություն կատարելու համար նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Ղատակյան վիճաբանությունների փուլում մեղադրողը, նկատի ունենալով, որ դատաքննությամբ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվել Արա Ռաֆիկի Մկրտչյանի կողմից “ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի վարկառու Մուրադ Ղավթյանի հորից՝ Ղավթբեկ Երեմի Ղավթյանից 100.000 ՀՀ դրամ վերցնելու, այն համակարգիչ մուտքագրելու, համապատասխան վճարման անդորրագիր տրամադրելու, ապա նշված գործարքը համակարգիչից հեռացնելով՝ 100.000 դրամը յուրացրելու փաստը, հրաժարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով Արա Ռաֆիկի Մկրտչյանին առաջադրված մեղադրանքից:

Ղատակյան վիճաբանությունների փուլում մեղադրողը, նկատի ունենալով, որ դատաքննությամբ հետազոտված ապացույցներով չեն հիմնավորվել Արսեն Նուռիջանի Առաքելյանի կողմից Ալինա Սարգսյանի անվամբ “ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղում ձևակերպված կենցաղային տեխնիկայի ձեռք բերման վարկի գումարը՝ 600.000 ՀՀ դրամը, առևտրային կազմակերպության ծառայողի իր կարգադրիչ և այլ լիազորությունները չարաշահելով՝ Պապ Թելմանի Մանուկյանին առձեռն հանձնելու, Ռուզան Ղարիբյանի անվամբ նույն մասնաճյուղում ձևակերպված հիփոթեքային վարկի գումարից 3.583.300 ՀՀ դրամը Ռուզան Ղարիբյանի փեսայից՝ Արտյուն Ղավթյանից առձեռն վերցնելու, բանկի դրամարկղ չմուտքագրելու և ամբողջությամբ յուրացնելու, ինչպես նաև հանցավոր ձանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի եկամուտներն օրինականացնելու փաստերը, հրաժարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով Արսեն Նուռիջանի Առաքելյանին առաջադրված մեղադրանքից, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքները վերավորակել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով:

“ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության ներկայացուցչը նկատի ունենալով մեղադրողի վերոհիշյալ դիրքորոշումը և ամբաստանյալ Պապ Թելմանի Մանուկյանի կողմից կատարված վարկի մասնակի մարումները՝ հստակեցրել է դատարան ներկայացված հայցապահանջը՝ խնդրելով ամբաստանյալներից հօգուտ “ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության բռնագանձել 66.903.192,7 ՀՀ դրամ:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. հոկտեմբերի 11-ի դատավճռով ամբաստանյալ՝ Արթուր

Մերուժանի Թովմասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ազատազրկման 2/երկու/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով՝ ազատազրկման 5/հինգ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով՝ ազատազրկման 5/հինգ/ տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 5.416.398 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի նախկին խմբագրության 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոններով՝ նշանակված պատիժները մասնակիորեն զուսմարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 5/հինգ/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 5.416.398 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

Պատժի սկիզբը հաշվվել է նրան արգելանքի վերցնելու օրվանից: Ամբաստանյալի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը՝ թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ամբաստանյալ՝ Արսեն Նուռիջանի Առաքելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով դադարեցվել է քրեական հետապնդումը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է ազատազրկման 3/երեք/ տարի 6/վեց/ամիս ժամկետով:

Խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ: մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Պատժի սկիզբը հաշվվել է 2010թ. նոյեմբերի 09-ից:

Ամբաստանյալ՝ Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել՝

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ազատազրկման 2/երկու/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի նախկին խմբագրության սանկցիայով ազատազրկման 6/վեց/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 9/ինը/ տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 10.488.439.7 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի նախկին խմբագրության 66-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերի կանոններով՝ նշանակված պատիժները մասնակիորեն զուսմարելու, ինչպես նաև վերջնական պատժի ժամկետին ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010թ. հուլիսի 29-ի դատավճռով նշանակված պատժի կրած մասը հաշվակցելու միջոցով, վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 12/տասներկու/ տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 10.488.439.7 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

Խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Պատժի սկիզբը հաշվվել է 2009թ. մարտի 13-ից:

Ղատարանի դատավճռով “ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության քաղաքացիական հայցը բավարարվել է:

Որոշվել է Կարեն Ղասաբօղյանից և Արթուր Թովմասյանից հօգուտ “ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության համապարտության

կարգով բռնագանձել 10.055.533,2 ՀՀ դրամ:

Կարեն Ղասաբօղյանից, Արսեն Առաքելյանից, Նարինե Նավասարդյանից և Վիկտորիա Ասատրյանից հօգուտ “ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 6.293.352,4 ՀՀ դրամ:

Կարեն Ղասաբոլյանից, Արսեն Առաքելյանից, Նարինե Նավասարդյանից և Արա Մկրտչյանից հոգուտ “ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 6.543.210,1 ՀՀ դրամ:

Կարեն Ղասաբոլյանից, Արսեն Առաքելյանից, Նարինե Նավասարդյանից և Սահականույշ Ասատրյանից հոգուտ “ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 38.140.625,3 ՀՀ դրամ:

Պապ Մանուկյանից հոգուտ “ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության բռնագանձել 234.198.1 ՀՀ դրամ:

Կարեն Ղասաբոլյանից, Արսեն Առաքելյանից և Նարինե Նավասարդյանից հոգուտ “ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲ ընկերության համապարտության կարգով բռնագանձել 5.636.282.6 ՀՀ դրամ:

Սույն քրեական գործով նույն դատավճռով դատապարտվել են նաև ամբաստանյալներ՝ Նարինե Նավասարդյանը, Սահականույշ Ասատրյանը, Արա Մկրտչյանը, Վիկտորիա Ասատրյանը, Պապ Մանուկյանը, որոնց վերաբերյալ վերաքննիչ բողոքներ չեն ստացվել:

Հիշյալ դատավճռի դեմ 04.11.2011թ. ամբաստանյալ Արթուր Թովմասյանը և նրա շահերի պաշտպան Արայիկ Ավանդյանը բերել են վերաքննիչ բողոք:

Ղատավճռի դեմ 09.11.2011թ. ամբաստանյալ Արսեն Առաքելյանի շահերի պաշտպան Լևոն Թորոսյանը նույնպես վերաքննիչ բողոք է ներկայացրել:

Հիշյալ դատավճռի դեմ 14.11.2011թ. ամբաստանյալ Կարեն Ղասաբոլյանը բերել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ բողոքների առթիվ գրավոր պատասխաններ չեն ստացվել:

Վերաքննիչ դատարանի 22.11.2011թ. որոշմամբ վերաքննիչ բողոքները ընդունվել են վարույթ և գործը նշանակվել քննության Վճռաբեկ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով:

2. Գործի փաստական հանգամանքները

Ամբաստանյալներ Կարեն Ղասաբոլյանը, Արսեն Առաքելյանը և Արթուր Թովմասյանը դատապարտվել են այն բանի համար, որ նրանցից Կարեն Ղասաբոլյանը, նախնական համաձայնության գալով Բենիկ Ստեփանյանի, Արթուր Թովմասյանի և Ռոզա Խաչատրյանի հետ, կեղծ վարկային գործերով, առանց վարկային պայմանագրեր և վարկային գործեր կազմելու, ինչպես նաև անձամբ՝ վարկերի մարման համար վճարված գումարներից, ստացել և յուրացրել է բանկին պատկանող 44.215.000 ՀՀ դրամը, ապա օրինականացրել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված հիշյալ գումարներից 10.488.439,7 ՀՀ դրամը, ինչպես նաև բանկի վարկառուների վստահությունը չարաշահելու եղանակով, նրանցից հափշտակել է 1.000.000 և 500.000 ՀՀ դրամ գումարներ, որպիսի հանցանքները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Ամբաստանյալ Արսեն Առաքելյանն աշխատելով “ՎՏԲ-Հայաստան Բանկ” ՓԲ ընկերության Սևանի մասնաճյուղի կառավարիչ և իր կարգադրիչ լիազորությունները բանկի շահերին հակառակ, ինչպես նաև նույն մասնաճյուղի ակտիվային գործառնությունների խմբի տնտեսագետ, վարկային պատասխանատու Կարեն Ղասաբոլյանի օգտին օգտագործելու արդյունքում՝ ծանր հետևանքներ է առաջացրել “ՎՏԲ- Հայաստան Բանկ” ՓԲ ընկերության օրինական շահերին, որպիսի հանցանքը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ամբաստանյալ Արթուր Թովմասյանը, նախնական համաձայնության գալով Կարեն Ղասաբոլյանի և Ռոզա Խաչատրյանի հետ, կեղծ վարկային գործերով, ստացել և յուրացրել է բանկին պատկանող

7.250.000 ՀՀ դրամը, ապա Կարեն Ղասաբօղյանի հետ օրինականացրել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված հիշյալ գումարներից 5.416.398 ՀՀ դրամը, ինչպես նաև վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել է 1.800.000 և 1.000.000 ՀՀ դրամ գումարներ, որպիսի հանցանքները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

3.Վերաքննիչ բողոքների հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վերաքննիչ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոնշյալ հիմնավորումներով:

1.Բողոք բերած անձ` պաշտպան Ա.Ավանդյանը նշել է որ ընդհանուր իրավասության դատարանը ամբաստանյալ Արթուր Թովմասյանին դատապարտելով 5 տարի 6 ամիս ժամկետով, նրա նկատմամբ չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ և 70-րդ հոդվածները, ինչը չի համապատասխանում հանցանք կատարած անձի անձնավորությանը և արարքի հանրորեն վտանգավորության աստիճանին բերելով հետևյալ հիմնավորումները:

Բողոք բերած անձը վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ հոդվածների պահանջների համապատասխան դրույթները նշել է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի, այնպես էլ պատժաչափի վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա` նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորություն:

Գործի տվյալներով հիմնավորվել է, որ հանցանք կատարած Արթուր Թովմասյանը անկեղծորեն զղջացել է կատարածի համար, իրեն հայտնի բոլոր հանգամանքների մասին հայտնել է վարույթն իրականացնող մարմնին, նախկինում արատավորված կամ դատապարտված չի եղել, խնամքին են երկու անչափահաս երեխաները, ունի կայուն աշխատանք, բնութագրվում է դրական, երիտասարդ է, բարձրագույն կրթությամբ, ազատության մեջ մնալով որևէ անօրինական գործողություն չի կատարել, քննիչի և դատարանի կանչով պարտաճանաչ ներկայացել է, ունի մշտական բնակության վայր, հանրության համար վտանգ չի ներկայացնում, շուրջ 5 միլիոն դրամի չափով վերականգնել է հանցագործությամբ պատճառված վնասը, դատարանը ամբաստանյալի վերաբերյալ պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք չի արձանագրել:

Վերոգրյալներից ելնելով բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել սահմանելով փորձաշրջան նույն ժամկետով:

2.Բողոք բերած ամբաստանյալ Արսեն Առաքելյանի շահերի պաշտպան, փաստաբան Լ. Թորոսյանը գտնում է, որ այն, որ ամբաստանյալ Արսեն Առաքելյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն, զուրկ է իրավական հիմքից և նյութական իրավունքի նորմի խախտման արդյունք է հանդիսանում: Քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի համար ծանր հետևանքի պատճառումը պարտադիր պայման է համարվում, իսկ ծանր հետևանք հասկացությունը որոշվում է իրավակիրառողի կողմից` պայմանավորված կոնկրետ գործի հանգամանքներով: Օրենսդիրը

դրանց թվին է դասում ընկերության սննկացումը, կազմալուծումը, երկար ժամանակով գործունեության դադարեցումը և այլն՝ արարքով պետք է անդամնալի հետևանքներ առաջանան: Պաշտպանը նշել է, որ պաշտպանան կողմը դատական վիճաբանությունների փուլում վերլուծել և պատճառաբանել է վերը նշված միտքն այն մասով, որ Ա. Առաքելյանի արարքի հետևանքով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերությունը չի սննկացել, նրա գործունեությունը չի կազմալուծվել, բանկի ոչ ընդհանուր և ոչ էլ կոնկրետ վարկային գործունեությունը երկար ժամանակով չի դադարել և բանկը շարունակում է իր նպատակային գործունեությունը, ուստի Ա. Առաքելյանի արարքը պետք է դասել որպես ընկերությանը էական վնաս պատճառող արարք և այն որակել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով, ինչը դատարանն չի արել, որով և նյութական նորմի կիրառման սխալ է թույլ տվել:

Ըստ պաշտպանի՝ դատարանն ամբաստանյալի նկատմամբ չի կիրառել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 9-րդ կետերը և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների շարքում չի դիտարկել առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելը, որովհետև ինչպես նախորդ, այնպես էլ ներկա քրեական գործով արարքները կատարվել են նույն ժամանակահատվածում և նույն պաշտոնեական դիրքը զբաղեցնող անձի կողմից, միայն թե նշված գործերի ընթացքը լուծվել է տարբեր ժամանակաշրջանում:

Պաշտպանը նշել է, որ դատարանը որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք չի դիտել ամբաստանյալ Ա.Առաքելյանի հանցագործությունը բացահայտելուն, հանցագործության մյուս մասնակիցներին մերկացնելուն ուղղված հանգամանքների առկայությունը:

Ըստ պաշտպանի՝ դատաքննությամբ հիմնավորվել է այն, որ ամբաստանյալ Կարեն Ղասաբօղյանի կողմից կեղծ վարկերի ձևակերպման փաստը հայտնաբերվել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Սևանի մասնաճյուղում և Ա. Առաքելյանն է վերադասին այդ մասին զեկուցողն ու տեղեկացնողը, ինչպես նաև Ա. Առաքելյանի զանգերով է հաշոդվել, որ Ղասաբօղյանը ինքնախոստովանական դիմում է գրել, որով և բացահայտվել է կեղծ վարկերի բոլոր հանցադեպերը:

Պաշտպանը նշել է, որ անհասկանալի է սույն գործի շրջանակներում դատարանի կողմից պատժի անհատականացման սկզբունքի կիրառումը, երբ մեկ այլ միջին ծանրության հանցանքների կատարման համար ամբաստանյալներից չորսի անձի նկատմամբ պատիժ է սահմանել 3 տարվա ազատազրկում և կիրառվել է ՀՀ ազգային ժողովի կողմից 2009թ. հուլիսի 19-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշումը, իսկ ամբաստանյալ Ա. Առաքելյանի նկատմամբ նշված որոշումը չի կիրառվել:

Ըստ պաշտպանի՝ դատարանը նաև հաշվի չի առել այն հանգամանքը, որ ամբաստանյալն արդեն 1 տարի կալանքի տակ է գտնվում և խորապես զղջացել է գործած արարքի համար, նա տառապում է շաքարախտով և անազատության մեջ գտնվելու պարագայում նրա առողջական վիճակը օրըստօրե վատթարանում է:

Բացի այդ, բողոք բերած անձը գտնում է, որ ամբաստանյալն իրենից որևէ վտանգ հասարակության և շրջապատի համար չի ներկայացնում և նրան հասարակությունից մեկուսացնելու անհրաժեշտություն չկա:

Ըստ բողոքաբերի՝ դատարանը թույլ է տվել սխալ նաև քաղ հայցի բավարարման առումով՝ դատաքննությամբ հիմնավորվել է, որ սույն գործով ամբաստանյալ Կարեն Ղասաբօղյանի կողմից ընդհանուր առմամբ յուրացվել է 42.800.000 դրամ գումար, որը բաղկացած է որպես վարկ ձևակերպված գումարից և դրա վրա հաշվարկված տոկոսներից: Բանկը իր քաղ հայցի պահանջի մեջ ներառել է

վարկային գործերով անբարեխիղճ վարկառուների նկատմամբ կիրառելի այն պայմանագրային դրույթը, ըստ որի վարկի ժամկետանց դառնալու պարագայում վարկի տոկոսներն աճում են մինչև 54 տոկոսի չափով և 42.8 միլիոն դրամի փոխարեն քաղ. հայցը ներկայացվել է 66.903.200 դրամի չափով, որը դատարանի կողմից ամբողջովին բավարարվել է:

Ըստ պաշտպանի՝ դատարանը հաշվի չի առել պաշտպանական կողմի այն պնդումը, որ սույն գործով ամբաստանյալների նկատմամբ չի կարող կիրառական լինել վարկային պայմանագրերով անբարեխիղճ վարկառուների նկատմամբ կիրառվող տուժանքները, և որ ամբաստանյալները քաղ. հայցվորի հետ վարկային պայմանագիր չեն կնքել և նրանց նկատմամբ պայմանագրից բխող սանկցիաներ չեն կարող կիրառվել: Բողոք բերած անձը գտնում է, որ նյութական իրավունքի նորմերի խախտումները ուղղակիորեն անդրադարձել են ամբաստանյալ Արսեն Առաքելյանի մասով գործի ելքի վրա և արդյունքում նրա նկատմամբ կիրառվել է չարդարացված խիստ պատիժ: Վերոգրյալների ելնելով բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն մեղմացման առումով բեկանել և փոփոխել՝ Արսեն Նուռիջանի Առաքելյանի մասով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը, իսկ քաղ. հայցը բավարարել՝ 42.800.000 դրամի չափով:

3. Ամբաստանյալ Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանը համաձայն չլինելով դատարանի կողմից իր նկատմամբ նշանակված պատժի հետ, գտնում է, որ ընդհանուր իրավասության դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բոլոր գումարային հաշվարկները դատարանի կողմից սխալ է արված “ՎՏԲ” բանկի կողմից ի օգուտ բանկի: Այդ նույն ժամանակահատվածի համար ինքն արդեն դատապարտվել է ազատազրկման 9 տարի ժամկետով, ինչպես նաև հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը, ունի անչափահաս երեխա, հիվանդ մայր, որոնք գտնվում են սոցիալական և հոգեբանական ծանր վիճակում: Վերոգրյալներից ելնելով բողոքի հեղինակը խնդրել է վերանայել գործը և իր նկատմամբ նշանակել ավելի մեղմ պատիժ:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

<< քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

<< քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. <<Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, և դրանք չեն կարող փոփոխվել և լրացվել գործի դատական քննության ընթացքում:>>:

Վերաքննիչ բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններում, վերլուծելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բերված վերաքննիչ բողոքները պետք է մերժել, հետևյալ պատճառաբանությամբ:

<< քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <<1. Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:>>:

<< քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածում սահմանված են պատժի հասկացությունը և նպատակները:

Համաձայն << քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի. 2-րդ մասի

պահանջների՝. «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված են պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները:

Վերոհիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները»:

Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին»:

Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները»:

Սույն քրեական գործով կայացված դատական ակտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամբաստանյալներ Կարեն Ղասաբօղյանի, Արթուր Թովմասյանի և Արսեն Առաքելյանի նկատմամբ պատիժներ նշանակելիս, դրանց տեսակը և չափը որոշելիս՝ դատարանը հաշվի է առել ինչպես հանցագործությունների հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այնպես էլ ամբաստանյալների անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ նրանց պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները:

Որպես ամբաստանյալ Կարեն Ղասաբօղյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առել այն, որ ամբաստանյալը մասնակիորեն խոստովանել է հանցանքը և նրա խնամքին է գտնվում անչափահաս երեխան:

Ամբաստանյալ Կարեն Ղասաբօղյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրել: Ղատարանը որպես ամբաստանյալ Արսեն Առաքելյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք հաշվի է առել այն, որ ամբաստանյալը մասնակիորեն խոստովանել է հանցանքը:

Ամբաստանյալ Արսեն Առաքելյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրել: Որպես ամբաստանյալ Արթուր Թովմասյանի անձը բնութագրող տվյալ՝ դատարանը հաշվի է առել այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել:

Ղատարանը որպես ամբաստանյալ Արթուր Թովմասյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ ամբաստանյալը մասնակիորեն վերականգնել է հանցագործությամբ պատճառված վնասը, խոստովանել է հանցանքը և զղջացել կատարածի համար:

Ամբաստանյալ Արթուր Թովմասյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրել: Վերը նշվածից ելնելով դատարանը հանգել է այն հետևության, որ ամբաստանյալների ուղղվելը և սոցիալական արդարության վերականգնումը, ինչպես նաև վերջիններիս կողմից նոր հանցագործությունների կատարման կանխումը հնարավոր է միայն

նրանց որոշակի ժամկետով ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով, հասարակությունից մեկուսացնելու՝ ազատագրկման դատապարտելու միջոցով:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սույն քրեական գործի շրջանակներում առկա է նաև քաղաքացիական հայցի չվերականգնված լինելու հանգամանք, ինչը վկայում է այն մասին, որ սույն գործով վերականգնված չէ նաև սոցիալական արդարությունը:

Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջների համատեքստում քննության առնելով ամբաստանյալներ Կարեն Ղասաբօղյանի, Արսեն Առաքելյանի և Արթուր Թովմասյանի նկատմամբ նշանակված պատժի հարցը գտնում է, որ դատարանը բավարար չափով հաշվի առնելով ամբաստանյալների կողմից կատարված հանցագործությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը, ամբաստանյալների անձը, նրանց պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, վերջիններիս պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում ամբաստանյալների նկատմամբ նշանակել է արդարացի և համաչափ պատիժ, որը կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատժի նպատակները:

Անդրադառնալով ամբաստանյալ Արթուր Թովմասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հարցին, հաշվի առնելով ամբաստանյալին վերագրվող հանցավոր արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, մասնավորապես նրա մեղքի ձևը, կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, այդ վնասի վերականգնված չլինելու հանգամանքը, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակությունը, Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի մոտ չկա համոզմունք այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու և գտնում է, որ սույն քրեական գործի շրջանակներում ամբաստանյալ Արթուր Թովմասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելի չէ, ուստի վերաքննիչ բողոքը այդ մասով ևս պետք է մերժել:

Այս պայմաններում վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքներում բերված պատճառաբանությունները չեն կարող սույն քրեական գործի շրջանակներում բավարար հիմք հանդիսանալ դատավճիռը ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատիժի մեղմացման, իսկ ամբաստանյալ Արթուր Թովմասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման առումով բեկանելու կամ փոփոխելու համար:

Անդրադառնալով քաղաքացիական հայցի հարցին Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատարանի կողմից քաղաքացիական հայցի հարցը լուծվել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, ուստի այդ մասով դատավճիռը բեկանելու կամ փոփոխելու հիմքեր չկան:

Այս առումով վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ քաղաքացիական հայցի մասով դատավճիռը բեկանելու կամ փոփոխելու առումով ամբաստանյալ Արսեն Առաքելյանի շահերի պաշտպան Լ. Թորոսյանի կողմից ինչպես վերաքննիչ բողոքում, այնպես էլ վերաքննիչ դատարանի դատաքննության ընթացքում որևէ պատշաճ հիմնավորում, փաստարկ կամ ապացույց չի ներկայացվել:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները բխում են քրեական գործով ձեռք բերված և դատարանում հետազոտված ապացույցներից, ամբաստանյալների արարքին տրվել է ճիշտ քրեաիրավական

զնահատական՝ կիրառվել է այն օրենքը, որը ենթակա է եղել կիրառման և վերջիններիս նկատմամբ նշանակվել է արդարացի և համաչափ պատիժ, ուստի դատական ակտը ամբաստանյալներ՝ Կարեն Ղասաբօղյանի, Արսեն Առաքելյանի և Արթուր Թովմասյանի մասով պետք է թողնել օրինական ուժի մեջ:
Անդրադառնալով Կարեն Ղասաբօղյանի, Արսեն Առաքելյանի և Արթուր Թովմասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցին, վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք հիմնավոր են և պետք է թողնել անփոփոխ, մինչև սույն որոշման օրինական ուժի մեջ մտնելը:
Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-394-րդ հոդվածներով վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ամբաստանյալ Արթուր Թովմասյանի և նրա շահերի պաշտպան՝ Ա. Ալվանդյանի, ամբաստանյալ Արսեն Առաքելյանի շահերի պաշտպան՝ Լ. Թորոսյանի և ամբաստանյալ Կարեն Ղասաբօղյանի վերաքննիչ բողոքները մերժել:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. հոկտեմբերի 11-ի դատավճիռը քրեական գործով ըստ մեղադրանքի՝ Կարեն Վարդգեսի Ղասաբօղյանի ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Արսեն Նուռիջանի Առաքելյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և Արթուր Մերուժանի Թովմասյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նշանակված պատժի և քաղաքացիական հայցի մասով թողնել օրինական ուժի մեջ:

Ամբաստանյալներ Կարեն Ղասաբօղյանի և Արսեն Առաքելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց՝ կալանքը թողնել անփոփոխ մինչև սույն որոշման օրինական ուժի մեջ մտնելը:

Ամբաստանյալ Արթուր Թովմասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին թողնել անփոփոխ մինչև սույն որոշման օրինական ուժի մեջ մտնելը:

Դատավճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ այն հրապարակելու պահից մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ՝ ստորագրություն
ԴԱՏԱԿՈՐՆԵՐ՝ ստորագրություններ
Իսկականի հետ ձիշտ է՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ՝ Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ՝ Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

	ԴԱՏԱԿՈՐՆԵՐ՝ Ա.ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ
	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	20-02-2012
Ամսաթիվ:	19-03-2012
Էջերի քանակը:	242, 240, 301, 339, 243, 229, 233, 309, 256, 214, 201, 199, 312, 130 թերթ
Գործին կից նյութեր:	իրեղեն ապացույց՝ 1 փակ ծրար:
Այլ նշումներ:	
Գործն ուղարկվել է:	19-03-2012
Էջերի քանակը:	242, 240, 301, 339, 243, 229, 233, 309, 256, 214, 201, 199, 312, 130 թերթ
Գործին կից նյութերը:	իրեղեն ապացույց՝ 1 փակ ծրար:
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	Ե-3770/12
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	20-03-2012
Դատական Գործ N: ԳԴ5/0038/01/10	
Ամսաթիվ:	15-03-2012
Բողոք բերող անձինք:	Ամբաստանյալի պաշտպան
Բողոք բերող անձինք:	Ամբաստանյալ
Բողոք բերող անձինք:	Ամբաստանյալի պաշտպան
Բողոք բերող անձինք	
Անուն	Արայիկ
Ազգանուն	Ալվանդյան
Հասցե	պաշտպան՝ ք.Երեվան, Նանսեն 3/62
Այլ	ամբաստանյալ՝ Արթուր Մերուժանի Թովմասյան
Բողոք բերող անձինք	
Անուն	Կարեն
Ազգանուն	Ղասաբնոյան
Հայրանուն	Վարդգեսի
Հասցե	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ
Այլ	բողոքը ստացվել է 20.03.2012թ.
Բողոք բերող անձինք	
Անուն	Լեվոն
Ազգանուն	Թորոսյան
Հասցե	պաշտպան՝ ք.Սեվան, Նաիրյան 164

Այլ	ամբաստանյալ՝ Արսեն Նուբիջանի Առաքելյան, բողոքը ստացվել է 21.03.2012թ.
Հավատարմագրված փաստաբան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պատապարտյալ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Չափահաս:	Այո
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխանի բովանդակությունը:	
Գործի առաքման ամսաթիվը:	19-03-2012
Գրության համարը:	Ե-3770
Գործի ստացման ամսաթիվը:	24-03-2012
Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/:	14 հատոր, իրեղեն ապացույց՝ կնիքված եվ փաթեթավորված 1 փաթեթով
Պատապարտյալ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Գործի համարը:	ԳԴ5/0038/01/10
Գործը ստացվել է:	Քրեական և զինվորական վերաք.
Գործը ստացվել է:	
Գործը ստացվել է:	
Պատասխանատվության ենթարկվածների թիվը:	3
Ամսաթիվ:	24-03-2012
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Դավիթ Ջաքարի Ավետիսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Արթուր Վլադիմիրի Պողոսյան
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	23-04-2012
Որոշման բովանդակությունը:	ԳԴ5/0038/01/10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23 ապրիլի 2012 թվական ք.Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քննարկելով Կարեն Վարդգեսի Ղասաբոլյանի, Արթուր Մերուժանի թովմասյանի և Արսեն Նուռիջանի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի փետրվարի 20-ի որոշման դեմ ամբաստանյալ Կ.Ղասաբոլյանի, ամբաստանյալ Ա.Թովմասյանի և նրա պաշտպան Ա.Ալվանդյանի և ամբաստանյալ Ա.Առաքելյանի պաշտպան Լ.Թորոսյանի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Քեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի դատավճռով Կարեն Ղասաբոլյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և հանցանքների ու դատավճիռների համակցությամբ դատապարտվել ազատազրկման 12 տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 10.488.439 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

Արթուր Թովմասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման 5 տարի 6 ամիս ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 5.416.398 ՀՀ դրամի բռնագրավմամբ:

Արսեն Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով:

Ամբաստանյալ Կ.Ղասաբոլյանի, ամբաստանյալ Ա.Թովմասյանի պաշտպան Ա.Ալվանդյանի և ամբաստանյալ Ա.Առաքելյանի պաշտպան Լ.Թորոսյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2012 թվականի փետրվարի 20-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Քեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Կ.Ղասաբոլյանը (այսուհետ նաև՝ առաջին բողոքի հեղինակ), ամբաստանյալ Ա.Թովմասյանը և նրա պաշտպան Ա.Ալվանդյանը (այսուհետ նաև՝ երկրորդ բողոքի հեղինակներ) և ամբաստանյալ Ա.Առաքելյանի պաշտպան Լ.Թորոսյանը (այսուհետ նաև՝ երրորդ բողոքի հեղինակ):

Առաջին բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ

քրեական դատարանի 2012 թվականի փետրվարի 20-ր որոշումը և իր նկատմամբ նշանակել մեղմ պատիժ:

Երկրորդ բողոքի հեղինակները խնդրել են մասնակիորեն բեկանել և փոփոխել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի դատավճիռը, Ա.Թովմասյանի նկատմամբ նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան: Բողոքաբերները փաստարկել են, որ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հիմքը, այն է՝ վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Երրորդ բողոքի հեղինակը խնդրել է ամբաստանյալ Ա.Առաքելյանի մասով մեղմացման առումով բեկանել և փոփոխել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի դատավճիռը:

Բողոքաբերը փաստարկել է, որ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վերլուծելով առաջին բողոքում շարադրված փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված բողոքը ենթակա է վերադարձման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

- 1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ
- 2) վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին, կամ
- 3) վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ, կամ
- 4) առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 61-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը պետք է բովանդակի նույն օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի որևէ կետի հիմնավորումները:

Առաջին բողոքի ուսումնասիրությունից երևում է, որ դրանում բացակայում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերն ու դրանց հիմնավորումները:

Վերլուծելով երկրորդ բողոքի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանք: Հետևաբար բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ:

Վերլուծելով երրորդ բողոքի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Հետևաբար բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում են բողոքի պատճենը, գործը քննած դատարան և դատավարության մասնակիցներին (բացառությամբ քննիչի և հետաքննության մարմնի) ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը:

Առաջին բողոքի ուսումնասիրությունից երևում է, որ դրան կցված չեն բողոքի պատճենը գործը քննած դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը:

Երկրորդ բողոքի ուսումնասիրությունից երևում է, որ դրան կցված չեն բողոքի պատճենը գործը քննած դատարան և մեղադրողին ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը:

Երրորդ բողոքի ուսումնասիրությունից երևում է, որ դրան կցված չեն բողոքի պատճենը դատավարության մասնակիցներին ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը:

Այսինքն՝ բողոքաբերների կողմից պահպանված չեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 21-րդ մասի պահանջները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի ներկայացված բողոքները ենթակա են վերադարձման:

Հաշվի առնելով վերոշարադրյալ հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Կարեն Վարդգեսի Ղասաբօղլյանի, Արթուր Մերուժանի Թովմասյանի և Արսեն Նուռիջանի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի փետրվարի 20-ի որոշման դեմ ամբաստանյալ Կ.Ղասաբօղլյանի, ամբաստանյալ Ա.Թովմասյանի և նրա պաշտպան Ա.Ալվանդյանի և ամբաստանյալ Ա.Առաքելյանի պաշտպան Լ.Թորոսյանի վճռաբեկ բողոքները վերադարձնել:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ
 Ղատավորներ՝ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ
 Հ.ԱՍԱՏՐՅԱՆ
 Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ
 Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆ
 Ս.ՕՀԱՆՅԱՆ

Ամսաթիվ:	07-05-2012
Այլ նշումներ:	
Գործի առաքման ամսաթիվ:	15-05-2012
Ղատարան:	Գեղարքունիքի Սարգ
Այլ նշումներ:	14 հատոր՝ 242, 240, 301, 339, 243, 229, 233, 309, 256, 214, 201, 199, 312, 168 թերթ, կից՝ թիվ ԳԴ5/0038/01/10 քրեական գործով իրեղեն ապացույցները՝ փաթեթավորված և կնիքված վիճակում:

Ղատական Գործ N: ԳԴ5/0038/01/10

Ամսաթիվ: 29-05-2012

Այլ նշումներ:

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 13 Հունիս 2012